

Քաղաքացիական մասնակցությունը տեղական մակարդակում

ԵՐԵՎԱՆ 2018



COUNCIL OF EUROPE



CONSEIL DE L'EUROPE

Սույն հրատարակությունը ներառում է չորս փաստաթուղթ՝ Քաղաքական որոշումների կայացման գործընթացում քաղաքացիական մասնակցության ուղենիշերը, մասնակից պետությունների նախարարների կոմիտեի CM/Rec(2018)4 հանձնարարականը տեղական հասարակական կյանքում քաղաքացիների մասնակցության մասին, «Քաղաքացիական մասնակցությունը որոշումների կայացմանը» գործիքակազմը, ինչպես նաև ԵՆ փորձագետներ Ա. Արտաշեսյանի և Դ. Մարգարյանի կողմից մշակված ուղեցույցը՝ գործիքակազմի կիրառման վերաբերյալ:

Ուղեցույցում ներկայացված կարծիքները հեղինակներին են և կարող են չարտահայտել Եվրոպայի խորհրդի պաշտոնական տեսակետները: Բոլոր իրավունքները պաշտպանված են: Հրատարակության ոչ մի մաս չի կարող թարգմանվել, վերարտադրվել կամ տարածվել որևէ տարբերակով՝ էլեկտրոնային (էլեկտրոնային սկավառակ, ինտերնետ և այլն), մեխանիկական (պատճենահանում, ծայնագրում և այլն), ինչպես նաև տվյալների պահպանման կամ փնտրման համակարգերի միջոցով՝ առանց Տեղական կառավարման բարեփոխումների փորձագիտական կենտրոնի գրավոր համաձայնության:

Եվրոպայի խորհուրդը միջազգային քաղաքական կազմակերպություն է, որը կոչված է պաշտպանելու մարդու իրավունքները, ժողովրդավարությունը և օրենքի գերակայությունը: Այն հիմնվել է 1949 թվականին, որին անդամակցում են 47 անդամ պետություն՝ շուրջ 820 միլիոն բնակչությամբ: Եվրոպայի խորհրդի նպատակն է հասնել իր անդամ պետությունների միասնականության՝ ընդհանուր ժառանգություն հանդիսացող սկզբունքներն ու իդեալները պահպանելու և իրականացնելու նպատակով: Եվրոպայի խորհրդի անդամ երկրները հանձն են առնում իրավական գործիքներ և համագործակցում ընդհանուր արժեքների և քաղաքական որոշումների հիման վրա: Եվրոպայի խորհրդի ամենաազդեցիկ գործիքները ներառում են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան, իսկ ժողովրդավարության բնագավառում՝ Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիան, որոնք երկուսն էլ վավերացվել են բոլոր անդամ պետությունների կողմից:

Տեղական ինքնակառավարման բարեփոխումների փորձագիտական կենտրոնը հիմնվել է Եվրոպայի խորհրդի կողմից 2006 թվականին: Վերջինիս առաքելությունն է խրախուսել լավ կառավարումը՝ իրավական աջակցության, փորձագիտական խորհրդատվության և հանրային իշխանությունների կարողությունների հզորացման միջոցով: Կենտրոնն ունի կարողությունների հզորացման շուրջ 20 գործիք՝ հիմնված եվրոպական ստանդարտների և լավագույն փորձի վրա: Այս գործիքները հնարավորություն են տալիս զարգացնել և գնահատել տեղական իշխանությունների կարողությունները՝ լավ ժողովրդավարական կառավարման 12 սկզբունքներին համապատասխան: Կենտրոնի կապը ժողովրդավարության և կառավարման միջկառավարական հանձնաժողովի (CDDG) հետ, ենթադրում է համագործակցություն 47 անդամ երկրների բարձրաստիճանի պաշտոնյաների հետ, որոնք ունեն կառավարման բարեփոխումների վերաբերյալ հարուստ գիտելիքներ և փորձառություն:

Վերջին տարիներին Հայաստանն անցնում է նշանակալի սահմանադրական և քաղաքական փոփոխությունների փուլով՝ զարգացնելով ժողովրդավարական ինստիտուտները և իրականացնելով վարչատարածքային բարեփոխումներ: Տեղական ինքնակառավարման բնագավառում նկատելի է առաջընթաց՝ լավ կառավարման սկզբունքներին համապատասխան՝ տեղական ինքնակառավարման մարմինների կարողությունները հզորացնելու առումով: Եվրոպայի խորհուրդը ողջունում է այս բարեփոխումների ճանապարհին հայաստանյան իշխանություններին աջակցելու հնարավորությունը և օգտագործում Հայաստանի փորձը՝ իր գործիքները մշակելիս, լավագույն օրինակները այլ անդամ պետությունների հետ կիսելիս:

Սույն ժողովածուն ներկայացնում է Հայաստանին ժողովրդավարական զարգացման ճանապարհին տրամադրվող խորհրդատվության և աջակցության հիմքում ընկած մի քանի փաստաթղթեր: Այն նաև ներառում է Եվրոպայի խորհրդի տեղական ինքնակառավարման բարեփոխումների փորձագիտական կենտրոնի գործիքները, որոնք օգտագործվում են պետական և տեղական իշխանությունների կարողությունների հզորացման նպատակով:

Եվրոպայի խորհուրդը ամուր տեղական և տարածքային ժողովրդավարությունը մշտապես համարել է Եվրոպայում ժողովրդավարական զարգացման հիմնաքարերից մեկը: Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիան, որը լիովին կիրառելի է Հայաստանում, այս բնագավառում Եվրոպայի խորհրդի 47 անդամ պետությունների կողմից վավերացված միակ միջազգային փաստաթուղթն է:

Հանրային հարցերի և հանրային ռեսուրսների լավ կառավարման սկզբունքներն ամրագրված են Եվրոպայի խորհրդի **«Լավ կառավարման 12 սկզբունքներում»**: Դրանք ներառում են այնպիսի հարցեր, ինչպիսիք են թափանցիկությունը, էթիկական վարքագիծը, օրենքի գերակայությունը, արդյունավետությունը, հաշվետվողականությունը, սահուն ֆինանսական կառավարումը: Այս սկզբունքներով առաջնորդումը խիստ կարևոր է կայուն ժողովրդավարական կառույցներ ձևավորելու համար:

Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարը իր՝ ժողովրդավարության, մարդու իրավունքների, օրենքի գերակայության վերաբերյալ 2018 թ. զեկույցում վերահաստատեց, որ «ժողովրդավարական տեսանկյունից ապահով հասարակությունը պահանջում է արդյունավետ ժողովրդավարություն և լավ կառավարում բոլոր մակարդակներում: Լավ կառավարումը բարելավում է հանրային կառավարման որակը և խրախուսում քաղաքացիների օրինական պահանջներին ու ակնկալիքներին համապատասխան ծառայություններ մատուցումը: Այս կերպ այն օգնում է ամրապնդել ժողովրդավարական հաստատությունները ներսից և բարձրացնել քաղաքացիների վստահությունը դրանց նկատմամբ:»

Ես ողջունում եմ այս ժողովածուի հրատարակությունը՝ որպես «Աջակցություն Հայաստանում տեղական ժողովրդավարության ամրապնդմանը» ծրագրի կարևոր արդյունքներից մեկը, և հույս հայտնում, որ այն կհանդիսանա Եվրոպայի խորհրդի և Հայաստանի միջև հետագա համագործակցության օգտակար գործիք:



Յուրա Գուրսկու

Լավ կառավարման բաժնի ղեկավար, Եվրոպայի խորհուրդ

ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ՝
ՏԵՂԱԿԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ
ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՄՓՈՓԱԳՐԵՐԻ

ԵՐԵՎԱՆ 2018

Նախաբան

Տեղական և տարածքային ժողովրդավարության վերաբերյալ փաստաթղթերի ամփոփագրերի սույն ժողովածուն նպատակ ունի ներկայացնել Եվրոպայի խորհրդի փաստաթղթերը, ստանդարտները և Տեղական կառավարման բարեփոխումների փորձագիտական կենտրոնի կողմից մշակված տեղական և տարածքային ժողովրդավարության գործիքները՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին դրանց ծանոթացնելու և Հայաստանում դրանք կիրառելի դարձնելու համար: Տեղական և տարածքային ժողովրդավարության ստանդարտների և գործիքակազմերի ամփոփագրերը համառոտ ներկայացնում են յուրաքանչյուր փաստաթղթի բովանդակությունը՝ տալով դրա ընդհանուր նկարագիրը: Փաստաթղթերն ամբողջությամբ հասանելի են Եվրոպայի խորհրդի պաշտոնական կայքում (www.coe.int/en/web/good-governance/centre-of-expertise):

Սույն ժողովածուն բաղկացած է 2 մասից: Առաջին մասում ներկայացված են տեղական և տարածքային ժողովրդավարության ստանդարտների (կոնվենցիաներ, ուղենիշներ, հանձնարարականներ) ամփոփագրերը, իսկ երկրորդ մասում՝ տեղական և տարածքային ժողովրդավարության գործիքակազմերի ամփոփագրերը:

Ժողովածուն կարող է օգտակար լինել պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների, համայնքների միավորումների, այլ շահագրգիռ կողմերի համար:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՍ 1. ՏԵՂԱԿԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ 10

ԿՈՆՎԵՆՑԻԱՆԵՐ

Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիա 10

Բացատրական զեկույց Տեղական ինքնակառավարման
մարմինների եվրոպական խարտիայի վերաբերյալ 19

Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի՝
Տեղական ինքնակառավարման մարմիններում մասնակցության
իրավունքի վերաբերյալ լրացուցիչ արձանագրություն 36

ՈՒՂԵՆԻՇՆԵՐ

ՑՄ(2017)83- /Քաղաքական որոշումների կայացման գործընթացում
քաղաքացիական մասնակցության ուղենիշներ 42

ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Նախարարների կոմիտեի թիվ ՑՄ/Rec(2018)4 հանձնարարականը
անդամ պետություններին Տեղական հանրային կյանքում
քաղաքացիական մասնակցության մասին 61

Նախարարների կոմիտեի թիվ ՑՄ/Rec(2009)2 հանձնարարականը
անդամ պետություններին Տեղական և տարածքային մակարդակում
մասնակցության և մասնակցության քաղաքականությունների
գնահատման, աուդիտի և մշտադիտարկման վերաբերյալ 65

Նախարարների կոմիտեի թիվ ՑՄ/Rec(2004)13 հանձնարարականը
անդամ պետություններին Տեղական և տարածքային կյանքում
երիտասարդների մասնակցության վերաբերյալ 68

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նախարարների կոմիտեի թիվ ՑՄ/Rec(2007)12 հանձնարարականը
անդամ պետություններին Տեղական և տարածքային
մակարդակում կարողությունների զարգացման վերաբերյալ 70

Նախարարների կոմիտեի թիվ ՑՄ/Rec(2007)4 հանձնարարականը
անդամ պետություններին Տեղական և տարածքային
հանրային ծառայությունների վերաբերյալ 72

Նախարարների կոմիտեի թիվ ՑՄ/Rec(2004)12 հանձնարարականը
անդամ պետություններին Տեղական և տարածքային
մարմինների կառուցվածքում և/կամ սահմանների հետ
կապված բարեփոխումների իրականացման

գործընթացի վերաբերյալ.....	77
Նախարարների կոմիտեի թիվ R(98)12 հանձնարարականը անդամ պետություններին Տեղական մարմինների գործողությունների նկատմամբ հսկողության վերաբերյալ.....	84

ՏԵՂԱԿԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐ

Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2011)11 հանձնարարականը անդամ պետություններին Վերադաս մարմինների կողմից տեղական մարմինների նոր լիազորությունների ֆինանսավորման վերաբերյալ	85
Նախարարների կոմիտեի թիվ Rec(2005)1 հանձնարարականը անդամ պետություններին Տեղական և տարածքային մարմինների ֆինանսական ռեսուրսների վերաբերյալ.....	88
Նախարարների կոմիտեի թիվ Rec(2004)1 հանձնարարականը անդամ պետություններին Տեղական և տարածքային մակարդակում ֆինանսական և բյուջետային կառավարման վերաբերյալ.....	90
Նախարարների կոմիտեի թիվ Rec(2000)14 հանձնարարականը անդամ պետություններին Տեղական հարկման, ֆինանսական համահարթեցման և տեղական մարմիններին տրամադրվող դոտացիաների վերաբերյալ.....	91

*ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԵՎ ԱՆԴՐՍԱՀՄԱՆԱՅԻՆ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ*

Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2007)5 հանձնարարականը անդամ պետություններին Հարավ-արևելյան Եվրոպայում անդրսահմանային համագործակցության համաձայնագրերի կնքման վերաբերյալ.....	93
Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2005)2 հանձնարարականը անդամ պետություններին տարածաշրջանների կամ տարածքային մարմինների միջև անդրսահմանային և միջտարածքային համագործակցության լավագույն պրակտիկայի և դրա խոչընդոտների նվազեցման վերաբերյալ	94
Նախարարների կոմիտեի թիվ Rec(2003)2 հանձնարարականը անդամ պետություններին Անբարենպաստ իրավիճակում գտնվող քաղաքային տարածքներում հարևան ծառայությունների վերաբերյալ.....	95

*ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԼԱՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ*

.....	97
-------	----

ՄԱՍ 2. ՏԵՂԱԿԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԻՔՆԵՐ	103
---------------------------------------------------------------------------	-----

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Քաղաքացիական մասնակցության գործիքակազմ (CLEAR).....	103
Գործիքակազմ. Քաղաքացիական մասնակցությունը որոշումների կայացմանը.....	106
Որոշումների կայացմանը քաղաքացիական մասնակցության աշխատանքային գործիք	108

ԼԱՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Կառավարման գերազանցության եվրոպական հավաստագրում (ELoGE)	109
Լավ կառավարման ելակետային հենանիշեր	109
Տեղեկատվական գրքույկ Կառավարման գերազանցության եվրոպական հավաստագրման (ELoGE) վերաբերյալ	110
Տեղական մակարդակում լավ կառավարման վերաբերյալ էլեկտրոնային գործիք	110

ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄ

Գործիքակազմ. Վերապատրաստման կարիքների վերլուծություն և վերապատրաստման ազգային ռազմավարություն (TNA)	111
Գործիքակազմ. Մարդկային ռեսուրսների կառավարում (HRM)	112
Գործիքակազմ. Առաջնորդության ակադեմիայի ծրագիր (LAP)	114
Գործիքակազմ. Տեղական կառավարման պրոֆեսիոնալ զարգացման համար վերապատրաստման ծրագրերի գնահատման և մշտադիտարկման (URSO)	115

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՈՐԱԿՑԱԼ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գործիքակազմ. Գործունեության արդյունավետության կառավարման ծրագիր (PMP).....	116
Գործիքակազմ. Համայնքային Ռազմավարական պլանավորում (SMP).....	117
Գործիքակազմ. Լավագույն գործելակերպի ծրագիր (BPP).....	118
Գործիքակազմ. Տեղական մարմինների միավորումների կարողությունների զարգացում (LGA)	119
Գործիքակազմ. Հանրային էթիկայի հենանշում (PEB).....	120
Գործիքակազմ. Պրակտիկ օրինակներ (PEB)	121

Գործիք. Տեղական ֆինանսների համեմատական վերլուծություն տեղական մարմինների համար (LFB)	122
Գործիքակազմ. Տեղական ֆինանսների համեմատական վերլուծություն կենտրոնական մարմինների համար (LFB).....	123

*ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԵՎ ԱՆԴՐՍԱՀՄԱՆԱՅԻՆ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ*

Գործիքակազմ. Միջհամայնքային համագործակցություն (IMC)	124
Գործիքակազմ. Տարածքների միավորում.....	126
Գործիքակազմ. Անդրսահմանային համագործակցություն (CBC).....	127
Գործիքակազմ. Քաղաքների միջև համագործակցություն (C2C).....	128
Գործիքակազմ. Անդրսահմանային համագործակցության առաջնորդություն (LAP for CBC).....	129
Գործիք. Անդրսահմանային համագործակցության էլեկտրոնային գործիք EDEN.....	130

ՄԱՍ 1. ՏԵՂԱԿԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ

ԿՈՆՎԵՆՑԻԱՆԵՐ

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽԱՐՏԻՄ՝

Նախաբան

Եվրոպայի խորհրդի անդամ երկրները, ստորագրելով սույն Խարտիան, համարելով, որ Եվրոպայի խորհրդի նպատակն է հասնել առավել սերտ միասնության իր անդամների միջև հանուն ընդհանուր ժառանգություն հանդիսացող իդեալների ու սկզբունքների պաշտպանության և իրագործման,

համարելով, որ վարչական ոլորտում համաձայնագրերի կնքումն այդ նպատակին հասնելու միջոցներից մեկն է,

համարելով, որ տեղական ինքնակառավարման մարմինները ցանկացած ժողովրդավարական ռեժիմի հիմնական հիմքերից մեկն են,

համարելով, որ պետական գործերի կառավարմանը մասնակցելու քաղաքացիների իրավունքը Եվրոպայի խորհրդի բոլոր անդամ պետությունների ժողովրդավարական սկզբունքներից է,

համարելով, որ այդ իրավունքը կարող է առավել ուղղակիորեն իրականացվել հատկապես տեղական մակարդակով,

համոզված լինելով, որ իրական պատասխանատվությամբ օժտված տեղական ինքնակառավարման մարմինների գոյությունը կարող է ապահովել արդյունավետ և, միաժամանակ, քաղաքացուն մերձեցած կառավարում,

գիտակցելով, որ Եվրոպական տարբեր երկրներում տեղական ինքնակառավարման պաշտպանությունն ու ամրապնդումն զգալիորեն աջակցում են ժողովրդավարական սկզբունքների և ապակենտրոնացված իշխանության վրա հիմնված Եվրոպայի կառուցման գործին,

հաստատելով, որ դա ենթադրում է տեղական ինքնակառավարման մարմինների առկայություն, որոնք օժտված են ժողովրդավարական ճանապարհով ստեղծված որոշումներ կայացնելու լիազորություններ ունեցող մարմիններով, և որոնք լայն ինքնավարություն ունեն իրենց պարտավորությունների, դրանց իրականացման կարգի և մեթոդների, դրանց իրականացման համար անհրաժեշտ միջոցների առումով,

համաձայնեցին հետևյալի մասին.

1 <http://www.parliament.am/library/bazmakoxm/94.pdf>

Հոդված 1

Կողմերը պարտավորվում են պահպանել հետևյալ հոդվածները այն ձևով և ծավալով, ինչպես նախատեսված է սույն Խարտիայի 12-րդ հոդվածում:

ՄԱՍ 1

Հոդված 2

Տեղական ինքնակառավարման սահմանադրական և իրավական հիմքերը

Տեղական ինքնակառավարման սկզբունքը պետք է ճանաչված լինի ներպետական օրենսդրությունում և, հնարավորինս, երկրի Սահմանադրությունում:

Հոդված 3

Տեղական ինքնակառավարում հասկացությունը

1. Տեղական ինքնակառավարում հասկացություն նշանակում է՝ տեղական ինքնակառավարման մարմինների իրավունքը և կարողությունը՝ կանոնակարգելու և կառավարելու պետական գործերի զգալի մասը (օրենքի շրջանակներում)՝ սեփական պատասխանատվությամբ և տեղական բնակչության շահերից ելնելով:

2. Այդ իրավունքը իրականացվում է խորհուրդների կամ ժողովների կողմից, որոնց անդամները ընտրված են ազատ, փակ գաղտնի, հավասար, ուղղակի և համընդհանուր քվեարկության ճանապարհով: Խորհուրդները կամ ժողովները կարող են ունենալ հաշվետու գործադիր մարմիններ: Այս դրույթը չի բացառում քաղաքացիների՝ ժողովին, հանրաքվեին կամ քաղաքացիների ուղղակի մասնակցության ցանկացած այլ ձևի դիմելը այնտեղ, որտեղ դա թույլատրվում է օրենքով:

Հոդված 4.

Տեղական ինքնակառավարման իրավասության ոլորտը

1. Տեղական ինքնակառավարման մարմինների հիմնական լիազորությունները սահմանվում են Սահմանադրությամբ կամ օրենքով: Սակայն այդ դրույթը չի խանգարում, որ տեղական ինքնակառավարման մարմիններին, օրենքին համապատասխան, որոշակի նպատակներով որոշակի լիազորություններ տրվեն:

2. Տեղական ինքնակառավարման մարմինները, օրենքով սահմանված շրջանակներում, գործողությունների լիակատար ազատություն ունեն՝ իրականացնելու իրենց նախաձեռնությունները ցանկացած հարցի

հետ կապված, որը դուրս չէ իրենց իրավասություններից և վերապահված չէ իշխանության այլ մարմնի:

3. Պետական լիազորությունների իրականացումը, որպես կանոն, պետք է առավելապես դրվի քաղաքացիներին ամենից մոտ կանգնած իշխանության մարմինների վրա: Որևէ այլ մարմնի լիազորություն ընձեռելու դեպքում պետք է հաշվի առնվեն առաջադրված խնդրի ծավալն ու բնույթը, ինչպես նաև՝ խնայողության ու արդյունավետության պահանջները:

4. Տեղական ինքնակառավարման մարմիններին տրվող լիազորությունները պետք է լիակատար և բացառիկ լինեն: Դրանք չեն կարող վերացվել կամ սահմանափակվել իշխանության այլ (կենտրոնական կամ տարածաշրջանային) մարմնի կողմից, բացառությամբ օրենքով սահմանված շրջանակների:

5. Կենտրոնական կամ տարածաշրջանային մարմինների կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին լիազորությունների պատվիրակման դեպքում նրանք պետք է, հնարավորության սահմաններում, ազատություն ունենան դրանց իրականացումը հարմարեցնելու տեղական պայմաններին:

6. Պլանավորման և որոշում կայացնելու գործընթացներում, որոնք անմիջականորեն առնչվում են տեղական ինքնակառավարման մարմիններին, անհրաժեշտ է, հնարավորության դեպքում, ժամանակին և համապատասխան ձևով խորհրդակցել այդ մարմինների հետ:

Հոդված 5

Տեղական ինքնակառավարման մարմինների տարածքային սահմանազատումների պահպանումը

Տեղական ինքնակառավարման մարմինների տարածքային սահմանազատումների ցանկացած փոփոխություն չպետք է կատարվի առանց նախապես խորհրդակցելու տեղական շահագրգիռ համայնքների հետ, հնարավորության դեպքում, նաև հանրաքվե անցկացնելու միջոցով (եթե թույլատրված է օրենքով):

Հոդված 6

Համապատասխան վարչական կառուցվածքներ և ռեսուրսներ տեղական ինքնակառավարման մարմինների խնդիրների համար

1. Չխախտելով առավել ընդհանուր օրենսդրական դրույթները՝ տեղական ինքնակառավարման մարմինները պետք է կարողանան որոշել իրենց ներպետական վարչական կառուցվածքները՝ դրանք տեղական պահանջներին հարմարեցնելու և արդյունավետ կառավարում երաշխավորելու համար:

2. Տեղական ինքնակառավարման մարմինների ծառայողների աշխատանքային պայմանները պետք է հնարավորություն տան՝ հավաքագրելու փորձի և բանիմացության սկզբունքների վրա հիմնված բարձր որակավորում ունեցող կադրերի: Այդ նպատակով պետք է ապահովվեն համապատասխան ուսուցման հնարավորություններ, վարձատրություն և ծառայողական առաջխաղացում:

Հոդված 7

Լիազորությունների իրականացման պայմանները տեղական մակարդակում

1. Տեղական մարմինների ընտրված ներկայացուցիչների կարգավիճակը պետք է ապահովի նրանց գործառույթների ազատ իրականացումը:

2. Տեղական մարմիններում ընտրված անձանց կարգավիճակը պետք է թույլ տա՝ ստանալու իրենց լիազորությունների իրականացման ժամանակ արվող ծախսերին համապատասխան դրամական փոխհատուցում, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, փոխհատուցում՝ չստացված վաստակի դիմաց կամ վճարում՝ կատարված աշխատանքի դիմաց, և համապատասխան սոցիալական պաշտպանություն:

3. Տեղական մարմիններում ընտրված անձի կարգավիճակին անհամատեղելի գործառնություններն ու գործունեությունը կարող են սահմանվել օրենքով կամ հիմնարար իրավական սկզբունքներով:

Հոդված 8

Տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության վարչական վերահսկողությունը

1. Տեղական ինքնակառավարման մարմինների ցանկացած վարչական վերահսկողություն կարող է իրականացվել միայն Սահմանադրությամբ կամ օրենքով նախատեսված ընթացակարգերով և դեպքերում:

2. Տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության ցանկացած վարչական վերահսկողություն պետք է ծառայի միայն օրինականությանը և սահմանադրական սկզբունքների ապահովմանը: Այդուհանդերձ, վարչական վերահսկողությունը կարող է ներառել նաև վերադաս մարմինների կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների կատարման հսկողությունը:

3. Տեղական ինքնակառավարման մարմինների վարչական վերահսկողությունը պետք է իրականացվի այնպես, որ վերահսկող մարմնի միջամտության աստիճանը համաչափ լինի այն շահերի կարևորության աստիճանին, որոնք նա նպատակ ունի պաշտպանելու:

Հոդված 9

Տեղական ինքնակառավարման մարմինների ֆինանսավորման աղբյուրները

1. Տեղական ինքնակառավարման մարմինները իրավունք ունեն ազգային տնտեսական քաղաքականության շրջանակներում տնօրինելու համապատասխան սեփական ֆինանսավորման միջոցներ, որոնք նրանք ազատորեն կարող են օգտագործել իրենց լիազորությունների շրջանակում:

2. Տեղական ինքնակառավարման մարմինների ֆինանսական միջոցները պետք է համաչափ լինեն Սահմանադրությամբ կամ օրենքով նրանց տրված լիազորություններին:

3. Տեղական ինքնակառավարման մարմինների ֆինանսական միջոցների առնվազն մի մասը պետք է գոյանա տեղական հարկերից և վճարներից, որոնց դրույքաչափերը տեղական ինքնակառավարման մարմինները իրավունք ունեն սահմանել օրենքի շրջանակներին համապատասխան:

4. Այն ֆինանսական համակարգերը, որոնց վրա հիմնվում են տեղական ինքնակառավարման մարմինների միջոցները, պետք է բավականին բազմազան և ճկուն լինեն, որպեսզի, որքանով դա գործնականում հնարավոր է, համաքայլ ընթանան ծախսերի փոփոխություններին, որոնք ծագում են տեղական ինքնակառավարումից ծագող խնդիրները իրականացնելիս:

5. Ֆինանսական առումով առավել թույլ տեղական ինքնակառավարման մարմինների պաշտպանությունը պահանջում է ֆինանսական համահարթեցման ընթացակարգերի հաստատում կամ հավասարազոր միջոցառումներ, որոնք ուղղված են տեղական մարմինների պոտենցիալ ֆինանսական աղբյուրների անհամաչափ բաշխման արդյունքների և նրանց ֆինանսական վերադիր ծախսերի ճշգրտմանը: Այդպիսի ընթացակարգերը կամ միջոցառումները չպետք է սահմանափակեն տեղական ինքնակառավարման մարմինների գործողությունների ազատությունը, որոնք նրանք կարող են իրականացնել իրենց լիազորությունների շրջանակում:

6. Տեղական ինքնակառավարման մարմինների հետ պատշաճ կերպով պետք է խորհրդատվություններ անցկացվեն վերաբաշխվող միջոցները նրանց հատկացնելու կարգի վերաբերյալ:

7. Տեղական ինքնակառավարման մարմիններին տրվող դոտացիաները հնարավորին չափով չպետք է նախատեսվեն որոշակի ծրագրերի ֆինանսավորման համար: Դոտացիաների տրամադրումը չպետք է վնասի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում վարվող քաղաքականությանը:

8. Կապիտալ ներդրումներ ձեռք բերելու նպատակով, օրենքի շր-

ջանակներում, տեղական ինքնակառավարման մարմիններին պետք է մատչելի լինի կապիտալի ազգային շուկան:

Հոդված 10

Տեղական ինքնակառավարման մարմինների միավորվելու իրավունքը

1. Տեղական ինքնակառավարման մարմինները իրավունք ունեն իրենց լիազորությունները իրականացնելիս համագործակցել և, օրենքի շրջանակներում, միավորվել տեղական ինքնակառավարման այլ մարմինների հետ՝ ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող խնդիրների լուծման համար:

2. Յուրաքանչյուր պետությունում պետք է ճանաչվի տեղական ինքնակառավարման մարմինների իրավունքը՝ մտնելու միավորումների մեջ՝ ընդհանուր շահերը պաշտպանելու և առաջ տանելու համար, ինչպես նաև՝ մտնելու տեղական ինքնակառավարման մարմինների միջազգային միավորման մեջ:

3. Տեղական ինքնակառավարման մարմիններն իրավունք ունեն օրենքով սահմանված պայմաններում համագործակցել այլ պետությունների համանման մարմինների հետ:

Հոդված 11

Տեղական ինքնակառավարման իրավական պաշտպանությունը

Տեղական ինքնակառավարման մարմիններն իրենց լիազորությունների ազատ իրականացման ապահովման և Սահմանադրությամբ կամ ներպետական օրենսդրությամբ ամրագրված տեղական ինքնակառավարման սկզբունքների պահպանման համար պետք է ունենան դատաբանով պաշտպանվելու իրավունք:

ՄԱՍ 2

Այլ դրույթներ

Հոդված 12

Պարտավորություններ

1. Յուրաքանչյուր Կողմ պարտավորվում է հետևել լիարտիայի առաջին մասի առնվազն 20 կետերի, որոնցից առնվազն տասը պետք է ընտրված լինեն հետևյալ կետերից.

հողված 2

հողված 3, 1-ին և 2-րդ կետեր

հողված 4, 1-ին, 2-րդ և 4-րդ կետեր

հողված 5

հողված 7, կետ 1

հողված 8, կետ 2

հողված 9, 1-ին, 2-րդ և 3-րդ կետեր

հողված 10, կետ 1

հողված 11:

2. Վավերացման, ընդունման կամ հաստատման փաստաթղթերը ի պահ տալու պահին յուրաքանչյուր պայմանավորվող պետություն ծանուցում է Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին սույն հողվածի 1-ին կետի դրույթներին համապատասխան ընտրված կետերի մասին:

3. Հետագայում ցանկացած Կողմը կարող է ցանկացած ժամանակ ծանուցել գլխավոր քարտուղարին, որ ինքը պարտավորվում է հետևել սույն Խարտիայի այլ կետերի, որոնք դեռ չեն ընդունվել սույն հողվածի 1-ին կետի դրույթներին համապատասխան: Հետագայում տրված նման պարտավորությունները դիտվում են որպես ծանուցող Կողմի՝ վավերացման, ընդունման կամ հավանության բաղկացուցիչ մաս և ուժի մեջ են մտնում այն ամսվա առաջին օրվանից, որը հաջորդում է ծանուցումը գլխավոր քարտուղարի ստանալուց հետո եռամսյա ժամկետին:

Հոդված 13

Տեղական ինքնակառավարման մարմինները, որոնց վրա տարածվում է Խարտիայի ազդեցությունը

Սույն Խարտիայում պարունակվող տեղական ինքնակառավարման սկզբունքները տարածվում են Կողմի տարածքում գոյություն ունեցող բոլոր կատեգորիաների տեղական ինքնակառավարման մարմինների վրա: Սակայն վավերագիրը, ընդունման կամ հավանություն տալու մասին փաստաթուղթը ի պահ տալու պահին յուրաքանչյուր Կողմ կարող է նշել տեղական կամ տարածաշրջանային մարմինների այն կատեգորիաները, որոնց նկատմամբ մտադիր է սահմանափակել Խարտիայի կիրառումը կամ որոնց մտադիր է դուրս թողնել դրա կիրառման ոլորտից: Կողմը կարող է նաև Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին հետագայում տրվող ծանուցման միջոցով տարածել Խարտիայի ազդեցությունը իշխանության տեղական և տարածաշրջանային մարմինների այլ կատեգորիաների վրա:

Հողված 14

Տեղեկության տրամադրումը

Յուրաքանչյուր Կողմ Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին տրամադրում է ամբողջ անհրաժեշտ տեղեկությունը օրենսդրական դրույթների և իր կողմից ձեռնարկված այլ միջոցառումների մասին՝ սույն Խարտիայի պայմաններին համապատասխանություն ապահովելու նպատակով:

ՄԱՍ 3

Հողված 15

Ստորագրումը, վավերացումը և ուժի մեջ մտնելը

1. Սույն Խարտիան բաց է Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների ստորագրման համար: Խարտիան ենթակա է վավերացման, ընդունման կամ հաստատման: Վավերագրերը, ընդունման կամ հաստատման մասին փաստաթղթերը ի պահ են տրվում Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին:

2. Սույն Խարտիան ուժի մեջ է մտնում Եվրոպայի խորհրդի 4 անդամ պետությունների կողմից, Նախորդ կետի դրույթների համաձայն, Խարտիային հետևելու մասին համաձայնություն տալուց հետո եռամսյա ժամկետին հաջորդող ամսվա առաջին օրվանից:

3. Ցանկացած անդամ պետության համար, որը համաձայնություն է տվել միանալու Խարտիային հետագայում, Խարտիան ուժի մեջ է մտնում վավերագիրը, ընդունման կամ հաստատման մասին փաստաթուղթը ի պահ տալուց հետո եռամսյա ժամկետին հաջորդող ամսվա առաջին օրվանից:

Հողված 16

Տարածքային կիրառելիություն

1. Ստորագրման կամ վավերագիրը, ընդունման կամ հաստատման և միանալու մասին փաստաթղթերը ի պահ տալու պահին յուրաքանչյուր պետություն կարող է նշել այն տարածքը կամ տարածքները, որոնց նկատմամբ կիրառվելու է սույն Խարտիան:

2. Հետագայում յուրաքանչյուր պետություն կարող է Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին ուղղված հայտարարությամբ տարածել սույն Խարտիայի կիրառումը հայտարարության մեջ նշված ցանկացած այլ տարածքի վրա: Այդ տարածքի նկատմամբ Խարտիան ուժի մեջ է մտնում ծանուցումը գլխավոր քարտուղարի ստանալուց հետո եռամսյա ժամկետին հաջորդող ամսվա առաջին օրվանից:

3. Նախորդ երկու կետերի համաձայն արված ցանկացած հայտարար-

րություն, որը առնչվում է այդ հայտարարության մեջ նշված որևէ տարածքի, կարող է հետ վերցվել գլխավոր քարտուղարին հասցեագրված ծանուցման միջոցով: Յուրաքանչյուր հրաժարում ուժի մեջ կմտնի նման ծանուցումը գլխավոր քարտուղարի ստանալու օրվանից վեց ամիս ժամկետին հաջորդող ամսվա առաջին օրվանից:

Հոդված 17

Չեղյալ հայտարարելը

1. Յուրաքանչյուր Կողմ կարող է չեղյալ հայտարարել սույն Խարտիան տվյալ Կողմի համար ուժի մեջ մտնելու պահից հնգամյա ժամկետը անցնելուց հետո ցանկացած ժամանակ: Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին 6 ամիս առաջ հղվում է ծանուցագիր: Նման չեղյալ հայտարարման հետևանքով Խարտիան չի կորցնում իր ուժը այլ Կողմերի նկատմամբ՝ պայմանով, որ նման Կողմերի թիվը երբևէ չպետք է 4-ից պակաս լինի:

2. Նախորդ կետի դրույթների համաձայն՝ Կողմերից յուրաքանչյուրը կարող է չեղյալ հայտարարել Խարտիայի առաջին մասի՝ իր կողմից ընդունված ցանկացած կետ՝ պայմանով, որ այդ Կողմը պարտավորված է մնում 12-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված կետերին և նրանք քանակին: Որևէ կետի չեղյալ հայտարարման դեպքում ցանկացած Կողմ, որը չի պահպանի 12-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները, պետք է համարվի որպես ամբողջ Խարտիան չեղյալ հայտարարած:

Հոդված 18

Ծանուցագրերը

Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարը ծանուցում է խորհրդի անդամ պետություններին.

- ա) ցանկացած ստորագրության մասին,
- բ) ցանկացած վավերագրի, ընդունման կամ հաստատման մասին փաստաթուղթ ի պահ տալու մասին,
- գ) 15-րդ հոդվածին համապատասխան՝ սույն Խարտիայի ուժի մեջ մտնելու ամսաթվի մասին,
- դ) 12-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերի դրույթներին համապատասխան ստացված ցանկացած ծանուցագրի մասին,
- ե) 13-րդ հոդվածի դրույթներին համապատասխան ստացված ցանկացած ծանուցագրի մասին,
- զ) ցանկացած այլ ակտի, ծանուցագրի կամ հաղորդագրության մասին, որն առնչվում է սույն Խարտիային:

Ի վկայումս վերոնշյալի՝ ներքոստորագրյալները, պատշաճ կերպով լիազորված լինելով, ստորագրեցին սույն Խարտիան:

Կատարված է 1985 թվականի հոկտեմբերի 15-ին՝ Ստրասբուրգում, մեկ օրինակով, ֆրանսերեն և անգլերեն, ընդ որում երկու տեքստերն էլ հավասարազոր են, որոնք ի պահ կտրվեն Եվրոպայի խորհրդի արխիվներին: Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարը հաստատված պատճենները կուղարկի Եվրոպայի խորհրդի յուրաքանչյուր անդամ պետության:

*Համաձայն Խարտիայի հոդված 12-ի՝ Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է կապված լինել Խարտիայի հետևյալ հոդվածներով՝

հոդված 2

հոդված 3-ի 1-ին և 2-րդ կետեր

հոդված 4-ի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ կետեր

հոդված 7-ի 1-ին և 3-րդ կետեր

հոդված 8-ի 1-ին, 2-րդ և 3-րդ կետեր

հոդված 9-ի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ կետեր

հոդված 10-ի 1-ին և 2-րդ կետեր

հոդված 11:

**Խարտիան Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2002 թվականի մայիսի 1-ից:

Քացատրական զեկույց Տեղական ինքնակառավարման մարմինների Եվրոպական խարտիայի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ²

1. Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիան կազմվել է Եվրոպայի խորհրդի շրջանակներում, Տարածաշրջանային և համայնքային հարցերով ղեկավար կոմիտեի իրավասության ներքո գործող կառավարական փորձագետների հանձնաժողովի կողմից՝ Եվրոպայի Տեղական և տարածքային իշխանությունների մշտական կոնֆերանսի կողմից ներկայացված նախագծի հիման վրա: 1985 թ. հոկտեմբերի 15-ից այն որպես կոնվենցիա բաց է Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների ստորագրման համար:

2. Հանձնաժողովի քննարկումների հիման վրա կազմված և Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեին ներկայացված քացատրական զեկույցի տեքստը չի հանդիսանում խարտիայի տեքստի պաշտոնական մեկնաբանություն, թեև այն կարող է նպաստել վերջինիս դրույթների առավել հստակ ընկալմանը:

2 <https://rm.coe.int/16800ca437> (Ոչ պաշտոնական թարգմանություն)

Ա. Խարտիայի նախապատմությունը

Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիան Եվրոպայի խորհրդի շրջանակներում իրականացված մի շարք ծրագրերի և երկար տարիների խորհրդակցությունների արդյունք է:

Եվրոպայում տեղական ինքնավարության պաշտպանությունն ու ամրապնդումը Եվրոպական բոլոր ժողովրդավարական պետությունների կողմից ստորագրված՝ սկզբունքներ սահմանող փաստաթղթի միջոցով, տեղական ինքնակառավարման մարմինների շրջանակների երկարատև ձգտումն է: Ավելին, աշխատանքի վաղ փուլում հաստատվեց, որ այդ փաստաթուղթը պետք է ուղղված լինի դրա պահպանման ապահովմանը այն սուբյեկտների, մասնավորապես կառավարությունների կողմից, որոնց գործողությունները հիմնականում առնչվում են տեղական ինքնավարության ցանկացած դրսևորման պաշտպանության հետ:

Եվրոպայի խորհուրդը, որպես մարդու իրավունքների պահպանման և ժողովրդավարական կառավարման սկզբունքների կողմնակից, նման փաստաթուղթ մշակելու և ընդունելու ակնհայտ ատյանն էր, հաշվի առնելով նաև, որ դեռ 1957թ.-ին, այն ցույց տվեց թե որքան է կարևորում տեղական ինքնակառավարման մարմինների դերակատարումը՝ նրանց համար ստեղծելով ներկայացուցչական մարմին եվրոպական մակարդակում, որը հայտնի է որպես Եվրոպայի տեղական և տարածաշրջանային իշխանությունների մշտական կոնֆերանս (անգլերեն հապավումը՝ CLRAE)³:

Այնուհետև CLRAE-ն իր թիվ 64 (1968) բանաձևում առաջարկեց Տեղական ինքնավարության սկզբունքների հռչակագիրը և կոչ արեց Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեին ընդունելայն : Այս նախաձեռնությանն աջակցեց Խորհրդատվական վեհաժողովը, որն իր թիվ 615 (1970) հանձնարարականում Նախարարների կոմիտեին ներկայացրեց CLRAE- ի փաստաթղթի վրա հիմնված և երկու մարմինների կողմից համատեղ մշակված փաստաթուղթ: Այնուամենայնիվ, առաջարկված հռչակագիրը բավականին ընդհանուր բնույթ էր կրում, որպեսզի դրա հիման վրա վճռական քայլեր կատարվեին:

1981 թ.-ի CLRAE- ի նոր նախաձեռնությունը հիմնված էր ավելի ճկուն մոտեցման վրա: Սակայն, կարծիք հնչեցվեց նաև, որ ոչ պարտադիր բնույթ ունեցող սկզբունքների հռչակումը չի կարող պատշաճ ձևով ներկայացնել տեղական ինքնակառավարման կարևորությունը կամ այն խնդիրները, որոնց հետ այն առնչվում է: Դրա փոխարեն կառավարություններից պետք է պահանջել ստանձնելու համապատասխան պարտավորություններ: Պետական սահմանադրական կարգավորումների և վարչարարական ավանդույթների միջև տարբերությունները հաշվի առ-

3 1994 թ. հունվարի 14-ից Մշտական կոնֆերանսը վերածվեց Եվրոպայի տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսի (CLRAE), ի նշան վերջինիս քաղաքական նշանակության ճանաչմանը:

ներու համար պետք է ապահովել անհրաժեշտ ճկունություն՝ ոչ թե զուտ նոր գործիքների պահանջների մեղմացմամբ, այլ կառավարություններին տալով ընտրության հնարավորություն այն դրույթների վերաբերյալ, որոնք նրանց համար պարտադիր բնույթ կկրեն:

Այս մոտեցման տրամաբանական արդյունքը CLRAE-ի թիվ 126 (1981) բանաձևի ներքո Նախարարների կոմիտեին Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի նախագծի ներկայացումն էր՝ առաջարկով, որ այն ընդունվի՝ ստանալով Եվրոպական կոնվենցիայի կարգավիճակ:

Նախարարների կոմիտեն որոշեց փոխանցել CLRAE-ի առաջարկությունները Տարածաշրջանային և համայնքային հարցերով ղեկավար կոմիտեին (CDRM), որպեսզի դրանք քննարկվեն Տեղական կառավարման հարցերով պատասխանատու եվրոպական նախարարների 5-րդ համաժողովում (որը պետք է տեղի ունենար 1982 թ. հոկտեմբերի 5-ից 7-ը Լուզանոյում): Լուզանոյի համաժողովին մասնակցած նախարարները ներկայացրեցին իրենց եզրակացությունները.

«...գտնում ենք, որ այս Խարտիայի նախագիծը կարևոր քայլ է տեղական ինքնավարության սկզբունքների սահմանման հարցում, միաժամանակ նշելով որոշ նախարարների վերապահումները՝ պարտավորեցնող բնույթի պայմանագրի անհրաժեշտության և Խարտիայի բովանդակության որոշ կողմերի մասին,

Խնդրում ենք Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեին հանձնարարել Տարածաշրջանային և համայնքային հարցերի ղեկավար կոմիտեին Եվրոպայի տեղական և տարածքային իշխանությունների կոնֆերանսի հետ համատեղ անհրաժեշտ փոփոխություններ կատարել Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի նախագծում՝ համաժողովի ընթացքում վերջինիս ձևի և բովանդակության վերաբերյալ մեկնաբանությունների համաձայն, որպեսզի այն հնարավոր լինի ներկայացնել հաջորդ հերթական համաժողովի հավանությունը ստանալու համար...»

Նախարարների կոմիտեն հանձնարարեց դա CDRM-ին, որն այնուհետև իրականացրեց Խարտիայի նախագծի մանրակրկիտ վերանայումը: Լուզանոյի համաժողովի եզրակացությունների դիտարկման ժամանակ CLRAE-ի ներկայացուցիչները մասնակցեցին քննարկումներին:

Խարտիայի նախագծի տեքստը, որը վերանայվեց CDRM-ի կողմից, ներկայացվեց Տեղական կառավարման համար պատասխանատու եվրոպական նախարարների 6-րդ համաժողովին, որը տեղի ունեցավ Հռոմում 1984 թ. նոյեմբերի 6-ից 8-ը: Տեքստը քննարկելուց հետո նախարարները հայտնեցին այդ սկզբունքների վերաբերյալ իրենց միաձայն համաձայնության մասին: Ինչ վերաբերում է այն իրավական կարգավիճակին, որը պետք է ունենար Խարտիան, նախարարների մեծամասնու-

թյունը հանդես եկան հոգուտ կոնվենցիայի:

Խորհրդատվական ժողովի և Հռոմի նախարարական համաժողովի կարծիքների հիման վրա Նախարարների կոմիտեն 1985 թվականի հունիսին հաստատեց Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիան որպես կոնվենցիա: Հաշվի առնելով, որ Խարտիայի նախաձեռնությամբ ի սկզբանե հանդես էկել Եվրոպայի տեղական և տարածքային իշխանությունների մշտական համաժողովը, որոշվեց, որ կոնվենցիան պետք է բացվի ստորագրման համար 1985 թվականի հոկտեմբերի 15-ին, CLRAE- ի 20-րդ լիագումար նիստի կապակցությամբ:

Բ. Ընդհանուր դիտարկումներ

Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի նպատակն է ապահովել տեղական ինքնակառավարման մարմինների իրավունքի գնահատման և պաշտպանության ընդհանուր եվրոպական այն չափանիշների առկայությունը, որոնք առավել կարևոր են քաղաքացիների համար և նրանց հնարավորություն են ընձեռում արդյունավետորեն մասնակցելու իրենց ամենօրյա ապրելակերպի վրա ազդող որոշումների կայացմանը:

Խարտիան պարտավորեցնում է կողմերին կիրառել տեղական մարմինների քաղաքական, վարչական և ֆինանսական անկախությունը երաշխավորող հիմնական կանոնները: Այսպիսով, այն եվրոպական մակարդակում ԵԽ-ի հիմնադրման պահից սկսած տարածքային կառավարման բոլոր մակարդակներում նշված սկզբունքները պաշտպանելու քաղաքական կամքի դրսևորում է Եվրոպայի խորհրդի կողմից իր , որն իր գործառույթն է համարում Եվրոպայի ժողովրդավարական գիտակցության պահպանումը և լայն իմաստով մարդու իրավունքների պաշտպանությունը: Իրականում դա արտահայտում է այն համոզմունքը, որ տեղական մարմինների կողմից իրականացվող ինքնակառավարման աստիճանը կարելի է համարել իրական ժողովրդավարության փորձաքարը:

Խարտիան բաղկացած է երեք մասից: Առաջին մասը ներառում է տեղական ինքնակառավարման սկզբունքները սահմանող հիմնական դրույթները: Այն հիմնավորում է տեղական ինքնակառավարման սահմանադրական և իրավական հիմքի անհրաժեշտությունը, սահմանում է հայեցակարգը և տեղական մարմինների լիազորությունների բնույթն ու շրջանակը կարգավորող սկզբունքները: Հաջորդ հոդվածները վերաբերում են տեղական իշխանությունների սահմանների պաշտպանությանը, ապահովելով նրանց ինքնավարությունը վարչական կառուցվածքների, իրավասու աշխատակազմ ունենալու և տեղական ընտրովի պաշտոն զբաղեցնելու պայմանները սահմանելու հարցերում: Երկու հիմնական հոդվածներն ուղղված են տեղական մարմինների գործողությունների նկատմամբ վարչական հսկողության սահմանափակմանը և ապահո-

վում են, որ նրանք ունենան համապատասխան ֆինանսական միջոցներ, այնպիսի պայմանների հիման վրա, որոնք չեն խանգարի նրանց ընդհանուր ինքնավարությանը: Այս մասի մնացած դրույթները վերաբերում են տեղական մարմինների՝ համագործակցելու և մրույթուններ ձևավորելու իրավունքին և դատական պաշտպանությանը դիմելու իրավունքի միջոցով տեղական ինքնակառավարման մարմինների պաշտպանությանը,:

II մասը պարունակում է տարբեր դրույթներ, որոնք վերաբերում են կողմերի ստանձնած պարտավորությունների շրջանակներին: Հիմնական սկզբունքների ապահովման և տարբեր անդամ պետությունների իրավական և ինստիտուցիոնալ առանձնահատկությունները հաշվի առնելու համար անհրաժեշտ ճկունություն ցուցաբերելու միջկիրատեսական հավասարակշռության ապահովման նպատակով, այն թույլ է տալիս կողմերին, մասնավորապես, հրաժարվել Խարտիայի այն դրույթներից, որոնք նրանք համարում են ոչ պարտադիր: Այսպիսով, այն հանդիսանում է փոխգիշտում, մի կողմից պետության կառուցվածքի և կազմակերպման, որպես պետության հիմնական գործառույթի վրա տեղական ինքնակառավարման ազդեցության փաստի ճանաչման և, , մյուս կողմից, այն նվազագույն հիմնական սկզբունքների պաշտպանության նպատակի միջև, որոնք պետք է հարգի տեղական կառավարման ցանկացած ժողովրդավարական համակարգ: Ավելին, համապատասխան խոչընդոտները վերացնելուց հետո կողմերի պարտավորությունները հետագայում կարող են ավելացվել:

Ըստ էության, Խարտիայում սահմանված տեղական ինքնակառավարման սկզբունքները կիրառվում են յուրաքանչյուր անդամ պետության տեղական մարմինների բոլոր մակարդակների կամ կատեգորիաների, ինչպես նաև համապատասխան փոփոխություններով, տարածքային մարմինների նկատմամբ՝ տարածաշրջանային մակարդակում: Այդուհանդերձ, հատուկ դեպքերում, կողմերին թույլատրվում է Խարտիայի կարգավորման շրջանակից բացառել մարմինների որոշ կատեգորիաներ:

Խարտիան չի նախատեսում դրա կիրառման նկատմամբ վերահսկողության ինստիտուցիոնալացված համակարգ, բացի այն պահանջից, որ Խարտիային համապատասխանելու համար կողմերը պետք է ներկայացնեն ընդունված օրենսդրական կամ այլ միջոցների վերաբերյալ բոլոր համապատասխան տեղեկությունները: Հատկապես ուշադրություն է դարձվել Եվրոպական սոցիալական խարտիային համանման միջազգային վերահսկողության համակարգի ստեղծմանը: Այնուամենայնիվ, կողմերը գտան, որ հնարավոր է հրաժարվել համալիր վերահսկողության համակարգից, հաշվի առնելով, որ Եվրոպայի խորհրդի կազմում Նախարարների կոմիտեի հետ ուղղակի կապի մեջ մտնելու հնարավորություն ունեցող CLRAE-ի առկայությունը ապահովելու է Խարտիայի

պահանջներին Կողմերի համապատասխանության քաղաքական վերահսկողությունը:

Տեքստի վերջին մասը պարունակում է եզրափակիչ դրույթներ, որոնք համապատասխանում են Եվրոպայի խորհրդի հովանու ներքո կազմված կոնվենցիաներում սովորաբար օգտագործվող դրույթներին:

Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիան առաջին բազմակողմ իրավական գործիքն է, որը սահմանում և երաշխավորում է տեղական ինքնավարության՝ ժողովրդավարության հիմնասյուներից մեկի սկզբունքները, , որի պաշտպանությունն ու զարգացումը հանդիսանում է Եվրոպայի խորհրդի գործառույթը: Հավանաբար, կարելի է հուսալ, որ այն նշանակալից ներդրում կունենա եվրոպական միասնական արժեքների պահպանման ու ամրապնդման գործում:

Գ. Խարտիայի դրույթների մեկնաբանությունը

Նախաբան

Նախաբանը հնարավորություն է ընձեռում սահմանելու Խարտիայի հիմքում ընկած հիմնական սկզբունքները: Դրանք, ըստ էության, հետևյալն են.

- տեղական ինքնակառավարման կարևոր ներդրումը ժողովրդավարության, արդյունավետ կառավարման և լիազորությունների ապակենտրոնացման գործում,
- Եվրոպական կառույցների ստեղծման հարցում տեղական ինքնակառավարման մարմինների կարևոր դերը,
- տեղական ինքնակառավարման մարմինների՝ ժողովրդավարական ձևով ձևավորվելու և լայնածավալ անկախություն ունենալու անհրաժեշտությունը:

Հոդված 1

Հոդված 1-ը ներկայացնում է կողմերի ստանձնած ընդհանուր պարտավորությունը՝ պահպանելու Խարտիայի 1-ին մասում (հոդվածներ 2-11) սահմանված տեղական ինքնակառավարման սկզբունքները, 12-րդ հոդվածով սահմանված շրջանակում:

Հոդված 2

Այս հոդվածը նախատեսում է, որ տեղական ինքնակառավարման սկզբունքը պետք է ամրագրվի օրենքով:

Հաշվի առնելով այս սկզբունքի կարևորությունը, ցանկալի է, որ դա արվի ներառելով այն պետության կազմակերպումը կարգավորող հիմնարար փաստաթղթում, այսինքն՝ Սահմանադրության մեջ: Այնուամենայնիվ,

նայնիվ, ընդունվեց, որ այն երկրներում, որտեղ Սահմանադրության փոփոխման կարգը պահանջում է օրենսդիր մարմնի որակյալ մեծամասնության կամ հանրաքվեում արտահայտված ընդհանուր բնակչության համաձայնությունը, Սահմանադրության մեջ տեղական ինքնակառավարման սկզբունքի ամրագրման հանձնարությունը կարող է հնարավոր չլինել: Նաև ճանաչվեց, որ այն երկրները, որոնք չունեն գրված Սահմանադրություն և փոխարենը ունեն տարբեր փաստաթղթերում և աղբյուրներում ամրագրված սահմանադրական դրույթներ, կարող են բախվել որոշակի դժվարությունների կամ նույնիսկ ի վիճակի չլինել կատարելու այդ պարտավորությունը:

Պետք է հաշվի առնել նաև այն փաստը, որ դաշնային երկրներում տեղական ինքնակառավարումը կարող է կարգավորվել դաշնային նահանգների կառավարությունների, այլ ոչ թե կենտրոնական ֆեդերալ կառավարության կողմից: Դաշնային նահանգների համար սույն Խարտիան որևէ կերպ չի ազդում պետության և նահանգների միջև լիազորությունների և պարտականությունների բաշխման վրա:

Հոդված 3

Այս հոդվածը սահմանում է տեղական ինքնակառավարման կարևորագույն առանձնահատկությունները, որոնք պետք է ընկալվեն Խարտիայի նպատակների իմաստով:

Մաս 1

«Կարողություն» հասկացությունը արտահայտում է այն գաղափարը, որ որոշակի հասարակական գործերի կարգավորումը և կառավարումը պետք է ուղեկցվի դրանց իրականացման արդյունավետության ապահովման միջոցներով: «Օրենքի սահմաններում» արտահայտությունը հաստատում է այն փաստը, որ այս իրավունքը և կարողությունը կարող են ավելի հստակորեն սահմանվել օրենսդրությամբ:

«Սեփական պատասխանատվությամբ» ձևակերպումն ընդգծում է, որ տեղական մարմինները չպետք է գործեն միայն որպես ավելի բարձր իշխանությունների գործակալ:

Անհնար է հստակորեն որոշել, թե որ հարցերը պետք է իրավասու լինեն կարգավորելու և կառավարելու տեղական մարմինները: «Տեղական հարցերը» և «սեփական հարցերը» արտահայտությունները մերժվել էին որպես չափազանց անորոշ և մեկնաբանության համար բարդ: Անդամ պետությունների ավանդույթները, որոնք վերաբերում են տեղական մարմիններին վերապահված հարցերին, շատ են տարբերվում միմյանցից: Իրականում հարցերի մեծ մասն ունեն տեղական և ազգային ազդեցություններ, և դրանց համար նրանց պատասխանատվությունը տարբեր երկրներում և ժամանակի ընթացքում կարող է տարբեր լինել,

և նույնիսկ կարող է բաշխվել կառավարությունների տարբեր մակարդակների միջև: Տեղական մարմինների իրավասությունների սահմանափակումն այնպիսի հարցերով, որոնք մեծ ազդեցություն չեն ունենում, կարող է նվազագույնի հասցնել նրանց ընդհանուր դերակատարումը: Այնու կողմից, ընդունվում է, որ երկրները կցանկանան կենտրոնական կառավարության իրավասությանը վերապահել որոշակի գործառույթներ, օրինակ՝ երկրի պաշտպանությունը: Խարտիայի նպատակն այն է, որ տեղական մարմինները պետք է ունենան իրավասության լայն շրջանակ, որը նրանք կարող են իրականացնել տեղական մակարդակով: Այդ իրավասությունների սահմանումը 4-րդ հոդվածի առարկան է:

Մաս 2

Ինքնակառավարման իրավունքները պետք է իրականացվեն ժողովրդավարական եղանակով ձևավորված իշխանությունների կողմից: Այս սկզբունքը համապատասխանում է ԵԽ-ի կողմից կառավարման ժողովրդավարական ձևերին տրվող կարևորությամբ:

Այս իրավունքը սովորաբար ենթադրում է ենթակա գործադիր մարմինների առկայությամբ կամ բացակայությամբ ներկայացուցչական ժողով, միևնույն ժամանակ նախատեսելով ուղղակի ժողովրդավարության դրսևորման հնարավորություն, այն դեպքում, երբ դա նախատեսված է օրենքով:

Հոդված 4

Ինչպես բացատրվեց հոդված 3-ի մեկնաբանություններում, Եվրոպայի բոլոր երկրներում տեղական մարմինների վրա տարածվող լիազորություններն ու պարտականությունների սպառնիչքվարկումը հնարավոր չէ: Այդուհանդերձ, այս հոդվածը սահմանում է այն ընդհանուր սկզբունքները, որոնց վրա պետք է հիմնված լինեն տեղական մարմինների պարտականությունները և լիազորությունների բնույթը:

Մաս 1

Քանի որ տեղական մարմինների պարտականությունների բնույթը հիմնարար դեր ունի տեղական ինքնակառավարման իրականության համար, ինչպես հստակության, այնպես էլ իրավական որոշակիության առումով նպատակահարմար է, որ հիմնական պարտավորությունները նրանց չհանձնվեն հատուկ հիմունքներով, այլ պետք է բավարար չափով ամրագրված լինեն օրենսդրության մեջ: Տեղական մարմինների հիմնական լիազորությունները սովորաբար սահմանվում են Սահմանադրությամբ կամ օրենքով: Այնուամենայնիվ, չնայած այս մասում «օրենք» բառի օգտագործմանը, ընդունվում է, որ որոշ երկրներում ցանկալի կարող է լինել խորհրդարանի կողմից որոշ լիազորությունների պատվիրակու-

մը, մասնավորապես, Եվրոպական համայնքի հանձնարարականներից բխող որոշ հարցերի կամ խնդիրների լուծման համար, եթե խորհրդարանը պահպանի պատվիրված լիազորությունների նկատմամբ վերահսկողության պատշաճ իրավասությունը: Միննույն ժամանակ Եվրոպական համայնքի անդամ պետությունների նկատմամբ կիրառվում է բացառություն, քանզի Համայնքի կարգավորումները (որոնք Հռոմի պայմանագրի 189-րդ հոդվածի համաձայն ուղղակի կիրառելի են) կարող են նախատեսել կառավարման համապատասխան մակարդակում որևէ կոնկրետ միջոցի կիրառումը:

Մաս 2

Բացի օրենսդրությամբ իշխանության որոշակի մակարդակների համար սահմանված պարտավորությունների, հանրային մարմիններն իրենք կարող են ներկայացնել իրենց այլ կարիքներն ու գործողության հնարավորությունները: Այն դեպքերում, երբ նման գործողությունների ոլորտներն ունեն տեղական ազդեցություն և չեն բացառվում նաև անդամ պետությունների մեծ մասում տրվող ընդհանուր իրավասության շրջանակից, կարևոր է, որպեսզի տեղական ինքնակառավարման մարմինները, գործելով որպես իրենց բնակչության ընդհանուր բարեկեցության ապահովման քաղաքական երաշխավոր, իրավասու լինեն իրագործելու այդ հարցերի գծով իրենց լիազորությունները: Ընդհանուր կանոնները, որոնց համապատասխան նրանք կարող են գործել նման դեպքերում, կարող են, սակայն, սահմանվել օրենքով: Որոշ անդամ պետություններում, այնուամենայնիվ, տեղական մարմինները պետք է օրենքով հաստատված իրավասություն ունենան նման գործողությունների իրականացման համար: Նման համակարգերում տեղական մարմիններին հատուկ լիազորությունների շրջանակից դուրս կարող է տրվել լայն հայեցողություն, ինչը պետք է հասկանալ 4-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով:

Մաս 3

Այս մասը արտահայտում է այն ընդհանուր սկզբունքը, որ հանրային լիազորությունների իրականացումը պետք է լինի ապակենտրոնացված: Այդ սկզբունքն արտահայտվել է Եվրոպայի խորհրդի համատեքստում մի շարք առիթներով, մասնավորապես, 1977 թվականին Տեղական կառավարման համար պատասխանատու Եվրոպական նախարարների Լիսաբոնի կոնֆերանսի եզրակացություններում: Այն ենթադրում է, որ եթե խնդիրն իր չափով կամ բնույթով այնպիսին չէ, որ այն լուծում է պահանջում ավելի մեծ տարածքային շրջանակում կամ առկա են արդյունավետության կամ տնտեսման առումով գերակշիռ նկատառումներ, ապա այն պետք է առավելագույն չափով վստահվի կառավարման տեղական մակարդակին:

Այս դրույթը, սակայն, չի նշանակում գործառույթների համակարգային ապակենտրոնացում՝ հոգուտ տեղական այն մարմինների, որոնք իրենց բնույթի և չափի պատճառով կարող են միայն սահմանափակ խնդիրներ իրականացնել:

Մաս 4

Այս մասն անդրադառնում է լիազորությունների համընկման խնդրին: Հստակության ապահովման և լիազորության աստիճանաբար վերացման որևէ միտումից խուսափելու նպատակով լիազորությունները պետք է լիարժեք և բացառիկ լինեն: Այդուհանդերձ, որոշ ոլորտներում պահանջվում են փոխլրացնող գործողություններ իշխանության տարբեր մակարդակների կողմից, և կարևոր է, որ այդ դեպքերում կենտրոնական կամ տարածքային իշխանությունների միջամտությունը տեղի ունենա հստակ օրենսդրական դրույթների հիման վրա:

Մաս 5

Տեղական մարմինների վարչական կառուցվածքները և տեղական պայմաններին նրանց քաջատեղյակությունը կարող է նրանց դարձնել պատշաճ մարմիններ՝ որոշակի գործառույթներ իրականացնելու համար, որոնց գծով վերջնական պատասխանատվությունն ընկնում է տեղական իշխանություններից վեր գտնվող իշխանությունների վրա: Սակայն, լիազորությունների նման պատվիրակման դեպքում տեղական մակարդակում իշխանության անկախությունը չափից ավել չսահմանափակելու համար կարևոր է, որ լիազորությունների պատվիրակման դեպքում տեղական հանգամանքները հնարավորինս հաշվի առնվեն: Միևնույն ժամանակ ճանաչվում է, որ որոշ գործառույթների առումով, օրինակ՝ ինքնության փաստաթղթեր տրամադրելու դեպքում, միասնական կարգավորումների անհրաժեշտությունը կարող է սահմանափակել տեղական մակարդակում հայեցողության շրջանակը:

Մաս 6

1-5-րդ մասերը վերաբերում են տեղական մարմինների իրավասության շրջանակում գտնվող հարցերին, իսկ 6-րդ մասը վերաբերում է ինչպես տեղական մարմինների իրավասության շրջանակում գտնվող, այնպես էլ դրանից դուրս գտնվող այն հարցերին, որոնք անմիջական ազդեցություն ունեն նրանց վրա: Սույն պարագրաֆի ձեակերպումը նշանակում է, որ խորհրդակցության ժամանակը եւ ձեւը պետք է լինեն այնպիսին, որ տեղական իշխանությունների համար ապահովեն իրական հնարավորություն ազդեցություն ունենալու համար, միաժամանակ ընդունելով, որ բացառիկ հանգամանքների, մասնավորապես ծայրահեղ անհրաժեշտության դեպքում խորհրդակցելու պահանջը կարող է չիրականացվել: Այս խորհրդակցությունը պետք է տեղի ունենա ուղղակիորեն

համապատասխան մարմնի կամ մարմինների հետ կամ անուղղակիորեն նրանց միավորումների հետ, եթե ընդգրկված է մի քանի համայնք:

Հոդված 5

Տեղական մարմինների եւ տվյալ համայնքի բնակիչների համար ակնհայտորեն հիմնարար նշանակություն ունի համայնքի սահմանների փոփոխությունը, որի ծայրահեղ դրսեւորումն է համարվում այլ համայնքի հետ դրա միավորումը: Թեւեւ որոշ պետություններում ոչ իրատեսական է համարվում տեղական համայնքների կողմից այդպիսի փոփոխությունների նկատմամբ վետոյի կիրառումը, սակայն ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի նախնական խորհրդակցությունը խիստ կարեւոր է: Հանրաքվեները համարվում են հնարավորինս համապատասխան ընթացակարգ այդպիսի խորհրդակցությունների համար, սակայն մի շարք երկրներում այդ հարցով հանրաքվե նշանակելու վերաբերյալ օրենսդրական կարգավորում առկա չէ: Եթե օրենսդրական ակտերը չեն ապահովում պարտադիր հանրաքվե անցկացնելու վերաբերյալ իրավական հիմք, ապա պետք է օգտագործվեն խորհրդակցության այլ ձեւեր:

Հոդված 6

Մաս 1

Այս մասը վերաբերում է ոչ թե տեղական մարմնի և նրա խորհրդի ընդհանուր կառուցվածքին, այլ այն ձևին, որով կազմակերպվում են նրա վարչական ծառայությունները: Թեև կենտրոնական կամ տարածքային օրենքները կարող են որոշակի ընդհանուր սկզբունքներ սահմանել նման կազմակերպման համար, սակայն տեղական մարմինները պետք է իրավասու լինեն որոշելու իրենց սեփական վարչական կառուցվածքները՝ հաշվի առնելով տեղական հանգամանքները և վարչական արդյունավետությունը: Կոնկրետ հանձնաժողովների կամ վարչական պաշտոնների ստեղծման վերաբերյալ կենտրոնական կամ տարածքային օրենքներում որոշ սահմանափակ պահանջներն ընդունելի են, բայց դրանք չպետք է այնքան ընդգրկուն լինեն, որ պարտադրեն կարծրացած կազմակերպչական կառուցվածք:

Մաս 2

Համապատասխան կառավարման կառուցվածքներից բացի, տեղական իշխանության արդյունավետության համար կարևոր է նրանց լիազորություններին համապատասխան որակավորում ունեցող կադրերի հավաքագրումն ու անձնակազմի պահպանումը: Դա մեծապես կախված է տեղական մարմնի կողմից ծառայության բարենպաստ պայմաններ առաջարկելու կարողությունից:

Հոդված 7

Այս հոդվածի նպատակն է ապահովել, որ ընտրված ներկայացուցիչների գործառույթների իրականացումը չխաչընդոսովի երրորդ անձանց կողմից կատարվող գործողություններով, ինչպես նաև թույլ չտալ, որ զուտ նյութական նկատառումներով անձանց որոշ կատեգորիաներ զրկվեն պաշտոններ զբաղեցնելու հնարավորությունից: Նյութական նկատառումները ներառում են համապատասխան գործառույթների իրականացումից բխող ծախսերի համար ֆինանսական փոխհատուցում, և, եթե հարկ է, եկամտի կորստի համար փոխհատուցում, մասնավորապես լրիվ դրույքով գործադիր լիազորությունների իրականացնող ընտրովի ավագանու անդամի դեպքում, ինչպես նաև վարձատրություն և համապատասխան սոցիալական ապահովություն: Սույն հոդվածի ոգուն համապատասխան նաև ողջամիտ կլինի ակնկալել այնպիսի դրույթի առկայություն, որը սահմանում է լրիվ դրույքով պաշտոն զբաղեցնող անձանց վերախնտեգրումը նորմալ աշխատականքային կյանքին իրենց պաշտոնավարման ժամկետի ավարտին:

Մաս 3

Այս մասը նախատեսում է, որ տեղական ընտրովի պաշտոն զբաղեցնելու արգելքը պետք է հիմնված լինի միայն օբյեկտիվ իրավական չափանիշների, այլ ոչ թե հատուկ կայացված որոշումների վրա: Սովորաբար դա նշանակում է, որ պաշտոնի անհամատեղելիության դեպքերը պետք է սահմանվեն օրենքով: Այնուամենայնիվ, նշվել են նաև համապատասխան ձևով հիմնավորված, չգրված իրավական սկզբունքների դեպքեր, որոնք, ըստ էության, ապահովում են արգելքի անհրաժեշտ հիմքերը:

Հոդված 8

Այս հոդվածը վերաբերում է կառավարման այլ մակարդակի մարմինների կողմից տեղական մարմինների գործունեության նկատմամբ հսկողությանը: Այն չի վերաբերում անհատների կողմից տեղական մարմինների դեմ հայց ներկայացնելու հնարավորությանը, ինչպես նաև մարդու իրավունքների պաշտպանի կամ հետաքննող դեր ունեցող որևէ այլ պաշտոնական մարմնի նշանակմանը և գործունեությանը: Վերոնշյալ դրույթները վերաբերում են վարչական հսկողության փոխտրոփայությանը, որը վաղուց արդեն մի շարք երկրներում ավանդույթ է դարձել: Հետևաբար, դրանք վերաբերում են այնպիսի գործելակերպերին, ինչպիսիք են գործողության համար նախնական թույլտվության կամ ակտն ուժի մեջ մտնելու համար դրա հաստատման պահանջը, տեղական ինքնակառավարման մարմինների որոշումները չեղարկելու լիազորությունը, հաշվապահական հսկողությունը և այլն:

Մաս 1

1-ին մասում նշվում է, որ հսկողության համար պետք է լինի համապատասխան օրենսդրական հիմք և այդ նորմերը բացառում են հատուկ հսկողական ընթացակարգերը:

Մաս 2

Վարչական հսկողությունը սովորաբար պետք է սահմանափակվի տեղական իշխանության գործողությունների օրինականության, այլ ոչ թե դրանց նպատակահարմարության հարցով: Հատուկ, բայց ոչ միակ բացառություն կատարվում է խնդիրների պատվիրակման դեպքում, երբ իր լիազորությունները պատվիրակող մարմինը կարող է ցանկանալ հսկողություն իրականացնել պատվիրակված խնդրի իրականացման ընթացքի նկատմամբ: Սակայն, դա չպետք է կանխի տեղական իշխանության կողմից որոշակի հայեցողության իրականացումը, ինչպես նախատեսված է 4-րդ հոդվածի 5-րդ մասում:

Մաս 3

Այս մասի հիմքում «համաչափության» սկզբունքն է, համաձայն որի հսկող մարմինն իր արտոնությունները իրականացնելիս պարտավոր է օգտագործել այն մեթոդը, որը նվազագույնն է ազդում տեղական ինքնավարության վրա, միաժամանակ ապահովելով ցանկալի արդյունքի հասնելու հնարավորությունը:

Հաշվի առնելով, որ վերահսկողության և հսկողության ոչ պատշաճ իրականացման դեմ պաշտպանության դատական միջոցները ներկայացված են 11-րդ հոդվածում, կոնկրետ իրավիճակներում միջամտության պայմանների և ձևի մասին հստակ դրույթների սահմանման անհրաժեշտությունն այս մասում բացակայում է:

Հոդված 9

Որոշակի գործառույթներ իրականացնելու իրավասությունն անիմաստ է, եթե տեղական մարմինները զրկվում են դրանք իրականացնելու համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսներից:

Մաս 1

Այս մասում սահմանվում է, որ տեղական մարմինները չպետք է զրկվեն ծախսերի առաջնահերթությունների որոշման իրենց ազատությունից:

Մաս 2

Սահմանվող սկզբունքն այն է, որ տեղական մարմինների ֆինանսա-

կան ռեսուրսները պետք է համաչափ լինեն նրանց կողմից իրականացվող խնդիրներին: Դա հատկապես վերաբերում է տեղական մարմինների իրավասությանը հատուկ վերապահված գործառույթներին:

Մաս 3

Տեղական հարկատուի կամ օգտագործողի ծախսերի դիմաց տրամադրված ծառայությունների օգտակարությունը որոշելու քաղաքական ընտրության իրականացումը տեղական ընտրովի ներկայացուցիչների հիմնական պարտականությունն է: Ընդունվում է, որ կենտրոնական կամ տարածաշրջանային օրենքները կարող են սահմանել տեղական մարմինների հարկման իրավունքի ընդհանուր սահմաններ, սակայն դրանք չպետք է կանխեն տեղական հաշվետվողականության գործընթացի արդյունավետ գործողությունը:

Մաս 4

Մի շարք հարկեր կամ տեղական մարմինների ֆինանսավորման աղբյուրներ իրենց բնույթով կամ գործնական պատճառներով հարաբերականորեն չեն ենթարկվում գնաճի և այլ տնտեսական գործոնների ազդեցությանը: Նման հարկերից կամ աղբյուրներից չափազանց մեծ կախվածությունը կարող է դժվարություններ առաջացնել տեղական մարմինների համար, քանի որ տնտեսական գործոնների զարգացումները էապես ազդում են ծառայությունների մատուցման գծով ծախսերի վրա: Այնուամենայնիվ, ճանաչվում է, որ նույնիսկ համեմատաբար դինամիկ եկամտի աղբյուրների դեպքում ծախսերի և ռեսուրսների շարժի միջև ավտոմատ փոխկապակցվածություն չի կարող լինել:

Մաս 6

Եթե վերաբաշխված միջոցները հատկացվում են օրենսդրությամբ սահմանված կոնկրետ չափանիշներին համապատասխան, սույն մասի դրույթները կարող են կատարվել, եթե տեղական մարմինների հետ իրականացվի խորհրդակցություն համապատասխան օրենսդրության նախապատրաստման ընթացքում:

Մաս 7

Տեղական մարմինների գործողությունների ազատության տեսանկյունից կոնկրետ ծրագրերի ֆինանսավորման համար հատկացվող դոտացիաների փոխարեն նախընտրելի են փաթեթային կամ նույնիսկ կոնկրետ ոլորտի ֆինանսավորման համար հատկացվող դոտացիաները: Իրատեսական չէ ակնկալել, որ բոլոր կոնկրետ ծրագրերի դոտացիաները պետք է փոխարինվեն ընդհանուր դոտացիաներով, մասնավորապես խոշոր կապիտալ ներդրումների պարագայում, սակայն այդ

դոտացիաների սահմանազանցմամբ օգտագործումը խստորեն սահմանափակելու է տեղական մարմինների՝ ծախսային առաջնահերթությունների գծով հայեցողության իրավունքը: Այդուհանդերձ, դոտացիաների տեսքով ընդհանուր ռեսուրսների չափաբաժինը տարբեր երկրներում զգալիորեն տարբերվում է, և ընդհանուր բնույթի դոտացիաների համեմատ ծրագրային դոտացիաների ավելի մեծ կշիռը կարելի է համարել ողջամիտ, երբ դոտացիաներն ընդհանուր առմամբ կազմում են ընդհանուր եկամտի համեմատաբար փոքր մասը:

9-րդ հոդվածի 7-րդ մասի երկրորդ նախադասությամբ սահմանվում է, որ կոնկրետ նկատակների համար դոտացիաների տրամադրումը չպետք է վնասի տեղական մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում հայեցողության իրականացման ազատությանը :

Մաս 8

Տեղական մարմինների համար կարևոր է, որ նրանք ունենան վարկային ֆինանսավորումից օգտվելու հնարավորություն կապիտալ ներդրումների համար: Այդպիսի ֆինանսավորման հնարավոր աղբյուրները, սակայն, անխուսափելիորեն կախված կլինեն յուրաքանչյուր երկրի կապիտալի շուկաների կառուցվածքից, ընդ որում, այդ աղբյուրներից օգտվելու կարգը և պայմանները կարող են սահմանվել օրենսդրությամբ:

Հոդված 10

Մաս 1

Այս մասը վերաբերում է գործառույթային հիմքով տեղական մարմինների միջև համագործակցությանը, որի նպատակն է համատեղ ծրագրերի կամ մեկ մարմնի կարողությունից դուրս գտնվող խնդիրների համատեղ իրականացման միջոցով հասնել ավելի մեծ արդյունավետության : Նման համագործակցությունը կարող է իրականացվել տեղական մարմինների կոնսորցիումի կամ ընկերակցության ձևավորման միջոցով, թեև այդպիսի մարմինների ստեղծման իրավական հիմքը կարող է սահմանվել օրենսդրությամբ:

Մաս 2

2-րդ մասը վերաբերում է միավորումներին, որոնց նպատակները 1-ին մասում նշված գործառույթային հիմունքների համեմատ շատ ավելի ընդհանուր են, և որոնք սովորաբար ներկայացնում են կոնկրետ տեսակի կամ տեսակների բոլոր տեղական մարմինները տարածաշրջանային կամ ազգային մակարդակով: Այս տեսակի միավորումներին պատկանելու իրավունքը, սակայն, չի նշանակում, որ կենտրոնական կառավարությունը պարտավոր է ճանաչել բոլոր նման միավորումները որպես միջնորդ կազմակերպություն:

Եվրոխորհրդի խորհրդում նմանատիպ փաստաթղթի առումով բնական է, որ որ ազգային մակարդակով միավորումներին պատկանելու իրավունքը ուղեկցվում է միջազգային միավորումներին պատկանելու զուգահեռ իրավունքով, որոնց մի մասը ակտիվ են եվրոպական միասնության խթանման գործում, ինչը համապատասխանում է Եվրոպայի խորհրդի կանոնադրությամբ սահմանված նպատակներին:

Այնուամենայնիվ, 10-րդ հոդվածի 2-րդ մասը առանձին անդամ պետությունների հայեցողությանն է թողնում այն օրենսդրական կամ այլ միջոցների ընտրությունը, որոնց միջոցով այդ սկզբունքն ուժի մեջ է մտնում:

Մաս 3

Այլ պետությունների առանձին տեղական մարմինների հետ ուղղակի համագործակցությունը ևս պետք է թույլատրվի, թեև նման համագործակցության ձևը պետք է համապատասխանի այն իրավական կանոններին, որոնք կարող են գոյություն ունենալ յուրաքանչյուր երկրում, և պետք է տեղի ունենահամապատասխան մարմինների լիազորությունների շրջանակում:

Այս առումով հատկապես կարևորվում են տարածաշրջանների կամ տարածքային մարմինների միջև անդրսահմանային համագործակցության մասին Եվրոպական շրջանակային կոնվենցիայի դրույթները (1980 թվականի մայիսի 21, ETS No. 106), թեև համագործակցության որոշ ձևեր կարող են չսահմանափակվել զուտ անդրսահմանային տարածքներով:

Հոդված 11

Դատական պաշտպանության միջոցի իրավունքը նշանակում է տեղական մարմինների համար.

Ա. Օրենքի հիման վրա ձևավորված դատարանի մատչելիություն կամ

Բ. օրենքով սահմանված կարգով գործողությունների, անգործության, որոշումների կամ այլ վարչական ակտերի օրինականության վերաբերյալ որոշում կայացնելու և խորհրդատվություն տրամադրելու իրավունք ունեցող համարժեք, անկախ, օրենքով սահմանված մարմնի մատչելիություն:

Նշվում է մի երկրի օրինակ, որտեղ, թեև վարչական որոշումները ենթակա չեն դատարանում սովորական ընթացակարգով բողոքարկման, սակայն, հնարավոր է դիմել դատավարության վերաբացման միջնորդություն կոչվող պաշտպանության արտակարգ միջոցին: Այս դատական պաշտպանության միջոցը, որը թույլատրելի է այն դեպքում, երբ որոշումը հիմնված է օրենքի ակնհայտ սխալ կիրառման վրա, համապատասխանում է սույն հոդվածի պահանջներին:

Հոդված 12

Խարտիայի 1-ին մասում տեղական ինքնակառավարման սկզբունքների ձևակերպումը փորձում է ընդհանուր հարթության վրա բերել Եվրոպայի խորհրդի անդամ պետություններում գործող իրավական համակարգերի և տեղական կառավարման մարմինների լայն բազմազանությունը: Այդուհանդերձ, ճանաչվում է, որ տարբեր երկրներում դեռևս կարող են առաջանալ Խարտիայի որոշակի դրույթների վավերացման հետ կապված սահմանադրական կամ գործնական խոչընդոտներ:

Այս հոդվածը համապատասխանաբար որդեգրում է «պարտադիր միջուկի» համակարգը, որն առաջին անգամ սահմանվել է Եվրոպական սոցիալական խարտիայում և նախատեսում է, որ Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի կողմերը պարտավոր են վավերացնել Խարտիայի առաջին մասի երեսուն մասերից առնվազն քսանը, ներառյալ առնվազն տասը տասնչորս հիմնարար սկզբունքների վերաբերյալ: Այնուամենայնիվ, քանի որ վերջնական նպատակը Խարտիայի բոլոր դրույթներին համապատասխանությունն է, Կողմերին հատուկ հնարավորություն է տրվում ավելացնելու ստանձնած պարտավորությունները, երբ դա հնարավոր է դառնում:

Հոդված 13

Խարտիայի 1-ին մասում նշված պահանջները, ըստ էության, վերաբերում են յուրաքանչյուր անդամ պետությունում տեղական մարմինների բոլոր կատեգորիաներին կամ մակարդակներին: Առկայության դեպքում դրանք նաև վերաբերում են տարածքային իշխանություններին: Սակայն, որոշ տարածաշրջանների (մասնավորապես, դաշնային անդամ պետությունների) հատուկ իրավական ձևը կամ սահմանադրական կարգավիճակը կարող է խոչընդոտել, որպեսզի նրանք ենթարկվեն տեղական մարմինների համար սահմանված նույն պահանջներով: Ավելին, մեկ կամ երկու անդամ պետություններում առկա է տեղական մարմինների մի կատեգորիա, որն իր փոքր չափերի պատճառով ունի միայն քիչ կամ խորհրդատվական գործառույթներ: Նման բացառիկ դեպքերը հաշվի առնելու համար, 13-րդ հոդվածը թույլ է տալիս Կողմերին Խարտիայի կարգավորման շրջանակներից բացառելու տեղական մարմինների որոշ կատեգորիաներ:

Հոդված 14

Այս հոդվածի նպատակն է նպաստել Խարտիայի կիրառման նկատմամբ Կողմերի վերահսկողությանը, սահմանելով նրանց կողմից Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին համապատասխան տեղեկատվություն տրամադրելու պարտավորությունը: Խարտիայի դրույթների իրականացման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու հա-

մար պատասխանատու հատուկ մարմնի բացակայության պարագայում հատկապես կարևոր է, որ Գլխավոր քարտուղարը ծանուցվի օրենսդրության ցանկացած փոփոխության կամ այլ միջոցների վերաբերյալ, որոնք զգալի ազդեցություն ունեն տեղական ինքնավարության վրա, ինչպես սահմանված է Խարտիայում:

Հոդվածներ 15-18

15-18-րդ հոդվածներում տեղ գտած եզրափակիչ դրույթները հիմնված են ԵԽ շրջանակներում կնքված կոնվենցիաների և համաձայնագրերի եզրափակիչ դրույթների մոդելի վրա:

Տեղական ինքնակառավարման Եվրոպական խարտիայի՝ Տեղական ինքնակառավարման մարմիններում մասնակցության իրավունքի վերաբերյալ լրացուցիչ արձանագրություն⁴

Նախաբան

Տեղական ինքնակառավարման Եվրոպական խարտիայի (այսուհետ՝ «Խարտիա», ԵՊՇ թիվ 122) սույն Լրացուցիչ արձանագրությունը ստորագրած՝ Եվրոպայի խորհրդի անդամ պետությունները,

համարելով, որ Եվրոպայի խորհրդի նպատակն իր անդամ պետությունների միջև առավել մեծ միասնության հասնելն է՝ նրանց ընդհանուր ժառանգությունը հանդիսացող կատարելատիպերն ու սկզբունքները պահպանելու և իրականացնելու նպատակով,

համարելով, որ հանրային գործերին մասնակցելու իրավունքը ժողովրդավարական այն սկզբունքներից է, որն ընդունում են Եվրոպայի խորհրդի բոլոր անդամ պետությունները,

համարելով, որ անդամ պետություններում զարգացման միջոցով ցույց է տրվում այս սկզբունքի բացառիկ կարևորությունը տեղական ինքնակառավարման համար,

համարելով, որ նպատակահարմար կլինի լրացնել Խարտիան այնպիսի դրույթներով, որոնցով կերաշխավորվի մասնակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների գործերին,

հաշվի առնելով «Պաշտոնական փաստաթղթերի հասանելիության մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիան՝ ընդունված Նախարարների կոմիտեի կողմից 2008 թվականի նոյեմբերի 27-ին,

4 <http://www.parliament.am/library/bazmakoxm/104.pdf>

հաշվի առնելով նաև Եվրոպայի խորհրդի պետությունների և կառավարությունների ղեկավարների՝ 3-րդ գագաթնաժողովում (Վարշավա, 16-17-ը մայիսի, 2005 թ.) ընդունած հռչակագիրը և գործողությունների ծրագիրը,

համաձայնեցին հետևյալի մասին.

Հոդված 1.

Տեղական ինքնակառավարման մարմինների գործերին մասնակցելու իրավունքը

1. Անդամ պետությունները, իրենց իրավագրության շրջանակներում, ապահովում են տեղական ինքնակառավարման մարմինների գործերին յուրաքանչյուրի մասնակցության իրավունքը:
2. Տեղական ինքնակառավարման մարմինների գործերին մասնակցության իրավունքը նշանակում է տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների և պարտականությունների իրականացումը որոշելու կամ դրանց վրա ազդելու ձգտման իրավունքը:
3. Այդ իրավունքի իրականացմանը նպաստելու միջոցները սահմանվում են օրենքով: Առանց անարդարացիորեն խտրական մոտեցում ցուցաբերելու որևէ անձի կամ խմբի նկատմամբ՝ օրենքով կարող են սահմանվել կոնկրետ միջոցներ տարբեր հանգամանքների կամ մարդկանց կատեգորիաների համար: Համաձայն Կողմի՝ Սահմանադրության ներքո ստանձնած և (կամ) միջազգային պարտավորությունների՝ օրենքով կարող են, մասնավորապես, սահմանվել միջոցներ՝ կոնկրետ միայն ընտրողների համար:
 - 4.1. Յուրաքանչյուր Կողմ օրենքով ճանաչում է իր քաղաքացիների իրավունքը՝ մասնակցելու, որպես քվեարկողներ կամ թեկնածուներ, այն տեղական ինքնակառավարման մարմինների խորհրդի կամ ժողովի անդամների ընտրությանը, որտեղ նրանք բնակվում են:
 - 4.2. Օրենքով նաև ճանաչվում է այլ անձանց այդպիսի մասնակցության իրավունքը, եթե Կողմը, իր սահմանադրական կարգին համապատասխան, այդպես է որոշում, կամ եթե դա համապատասխանում է Կողմի միջազգային իրավական պարտավորություններին:
- 5.1. Տեղական ինքնակառավարման մարմինների գործերին մասնակցելու իրավունքի մասով ցանկացած ձևական պահանջ, պայման կամ սահմանափակում սահմանվում է օրենքով և համապատասխանում է Կողմի միջազգային իրավական պարտավորություններին:
- 5.2. Օրենքով սահմանում են այնպիսի ձևական պահանջներ, պայմաններ և սահմանափակումներ, որոնք անհրաժեշտ են՝ ապա-

հովելու համար, որ մասնակցության իրավունքի իրականացումը չփաստի տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման ազնվությունը՝ էթիկայի տեսանկյունից, և թափանցիկությունը:

- 5.3. Արդյունավետ քաղաքական ժողովրդավարություն իրականացնելու, ժողովրդավարական հասարակության մեջ հանրային անվտանգությունը պահպանելու կամ Կողմի՝ իր միջազգային իրավական պարտավորությունների պահանջները կատարելու համար, պետք է անհրաժեշտ լինեն այլ ձևական պահանջներ, պայմաններ կամ սահմանափակումներ:

Հոդված 2.

Մասնակցության իրավունքի իրականացման միջոցները

1. Կողմերը ձեռնարկում են բոլոր այն միջոցները, որոնք անհրաժեշտ են տեղական ինքնակառավարման մարմինների գործերին մասնակցելու իրավունքը կյանքի կոչելու համար:
2. Մասնակցության իրավունքի իրականացման միջոցները ներառում են՝
 - i. լիազորել տեղական ինքնակառավարման մարմիններին՝ հնարավորություն ընձեռել, խրախուսել և նպաստել սույն Արձանագրության մեջ ամրագրված մասնակցության իրավունքի իրականացմանը,
 - ii. ապահովել՝
 - ա) մարդկանց ներգրավման ընթացակարգերի սահմանումը, որոնք կարող են ներառել խորհրդատվական գործընթացներ, տեղական հանրաքվեներ և խնդրագրեր, իսկ եթե տեղական ինքնակառավարման մարմինների իրավասության ներքո գտնվող տարածքում բնակչության թիվը մեծ է և (կամ) այն ընդգրկում է աշխարհագրական մեծ տարածք՝ մարդկանց այնպիսի մակարդակով ներգրավելուն ուղղված միջոցներ, որոնք ավելի մոտ են նրանց,
 - բ) Կողմի սահմանադրական կարգին և միջազգային իրավական պարտավորություններին համապատասխան՝ տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնական փաստաթղթերին հասանելիության ընթացակարգերի սահմանումը,
 - գ) այնպիսի միջոցների սահմանումը, որոնք ուղղված են մասնակցության որոշակի դժվարությունների հանդիպող մարդկանց կատեգորիաների կարիքների բավարարմանը,
 - դ) մեխանիզմների և ընթացակարգերի սահմանումը՝ քննարկե-

լու և արձագանքելու տեղական ինքնակառավարման մարմինների ու տեղական հանրային ծառայությունների վերաբերյալ ստացված բողոքներին և առաջարկներին,

- iii. խրախուսել տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործումը՝ սույն Արձանագրությամբ ամրագրված մասնակցության իրավունքին աջակցման և իրականացման համար:
3. Ընթացակարգերը, միջոցները և մեխանիզմները կարող են տեղական ինքնակառավարման մարմինների տարբեր կատեգորիաների համար տարբեր լինել՝ հաշվի առնելով նրանց չափերը և իրավասությունները:
4. Տեղական ինքնակառավարման մարմինների գործերին մասնակցելու իրավունքի կյանքի կոչման համար ձեռնարկվելիք միջոցների հետ կապված պլանավորման և որոշումների կայացման գործընթացներում տեղական ինքնակառավարման մարմինները խորհրդատվություն են ստանում, որքանով դա հնարավոր է, պատշաճ ժամանակին և եղանակով:

Հոդված 3.

Մարմինները, որոնց նկատմամբ կիրառվում է Արձանագրությունը

Սույն Արձանագրությունը կիրառվում է Կողմի տարածքում գործող տեղական ինքնակառավարման մարմինների բոլոր կատեգորիաների նկատմամբ: Այնուամենայնիվ, յուրաքանչյուր պետություն կարող է, վավերացման, ընդունման կամ հաստատման մասին իր փաստաթուղթն ի պահ հանձնելիս, նշել տեղական կամ տարածքային մարմինների այն կատեգորիաները, որոնց այն մտադիր է ընդգրկել Արձանագրության գործողության ոլորտում, կամ այն կատեգորիաները, որոնց այն նախատեսում է հանել դրա գործողության ոլորտից: Կողմը կարող է նաև, Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին հետագայում ծանուցելով, Արձանագրության գործողության ոլորտում ընդգրկել նաև տեղական կամ տարածքային մարմինների այլ կատեգորիաներ:

Հոդված 4.

Տարածքային կիրառելիությունը

1. Յուրաքանչյուր պետություն կարող է, ստորագրման ժամանակ կամ վավերացման, ընդունման կամ հաստատման մասին իր փաստաթուղթն ի պահ հանձնելիս, նշել այն տարածքը կամ տարածքները, որի (որոնց) նկատմամբ կիրառվում է սույն Արձանագրությունը:
2. Յուրաքանչյուր Կողմ կարող է, ցանկացած ավելի ուշ ամսաթվին, Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին ուղղված հայտարար

րության միջոցով, սույն Արձանագրության կիրառումը տարածել հայտարարությունում նշված ցանկացած այլ տարածքի վրա: Այդպիսի տարածքի համար Արձանագրությունն ուժի մեջ է մտնում ծանուցումը Գլխավոր քարտուղարի կողմից ստանալու ամսաթվից հետո եռամսյա ժամկետի լրանալուն հաջորդող ամսվա առաջին օրը:

3. Նախորդ երկու պարբերությունների համաձայն արված՝ որևէ տարածքի մասով ցանկացած հայտարարություն կարելի է հետ վերցնել՝ Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին հասցեագրված ծանուցման միջոցով: Հետ վերցնելն ուժի մեջ է մտնում այդպիսի ծանուցումը Գլխավոր քարտուղարի կողմից ստանալու ամսաթվից հետո վեցամսյա ժամկետի լրանալուն հաջորդող ամսվա առաջին օրը:

Հոդված 5.

Ստորագրելը և ուժի մեջ մտնելը

1. Սույն Արձանագրությունը բաց է հարտիան ստորագրած՝ Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների կողմից ստորագրման համար: Այն ենթակա է վավերացման, ընդունման կամ հաստատման: Եվրոպայի խորհրդի անդամ պետությունը չի կարող վավերացնել, ընդունել կամ հաստատել սույն Արձանագրությունը, եթե այն կամ զուգահեռաբար կամ նախկինում չի վավերացրել, ընդունել կամ հաստատել հարտիան: Վավերացման, ընդունման կամ հաստատման մասին փաստաթղթերն ի պահ են հանձնվում Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին:
2. Սույն Արձանագրությունն ուժի մեջ է մտնում այն ամսաթվից հետո եռամսյա ժամկետի լրանալուն հաջորդող ամսվա առաջին օրը, երբ Եվրոպայի խորհրդի ութ անդամ պետություններ տվել են իրենց համաձայնությունն առ այն, որ Արձանագրությունը պարտադիր է իրենց համար՝ 1-ին պարբերության դրույթներին համապատասխան:
3. Ցանկացած պետության համար, որը հետագայում իր համաձայնությունն է տալիս առ այն, որ Արձանագրությունը պարտադիր է իր համար, սույն Արձանագրությունն ուժի մեջ է մտնում վավերացման, ընդունման կամ հաստատման մասին փաստաթուղթն ի պահ հանձնելու ամսաթվից հետո եռամսյա ժամկետի լրանալուն հաջորդող ամսվա առաջին օրը:

Հոդված 6.

Չեղյալ հայտարարելը

1. Յուրաքանչյուր Կողմ ցանկացած ժամանակ կարող է չեղյալ հայտարարել սույն Արձանագրությունը՝ Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին հասցեագրված ծանուցման միջոցով:
2. Այդպիսի չեղյալ հայտարարումն ուժի մեջ է մտնում Գլխավոր քար-

տուղարի կողմից ծանուցումն ստանալու ամսաթվից հետո վեցամսյա ժամկետի լրանալուն հաջորդող ամսվա առաջին օրը:

Հոդված 7.

Ծանուցումները

Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարը Եվրոպայի խորհրդի անդամ պետություններին ծանուցում է.

- ա) սույն Արձանագրությունը ստորագրելու ցանկացած դեպքի,
- բ) վավերացման, ընդունման կամ հաստատման մասին որևէ փաստաթուղթ ի պահ հանձնելու,
- գ) 5-րդ հոդվածին համապատասխան՝ սույն Արձանագրությունն ուժի մեջ մտնելու ցանկացած ամսաթվի,
- դ) 3-րդ հոդվածի դրույթները կիրառելիս ստացված ցանկացած ծանուցման,
- ե) սույն Արձանագրությանը վերաբերող ցանկացած այլ ակտի, ծանուցման կամ հաղորդագրության մասին:

Ի հաստատումն որի՝ ներքոստորագրյալները, պատշաճ կերպով լիազորված լինելով, ստորագրեցին սույն Արձանագրությունը:

Կատարված է Ուտրեխտում 2009 թվականի նոյեմբերի 16-ին՝ անգլերենով և ֆրանսերենով, ընդ որում՝ երկու տեքստերն էլ հավասարազոր են, մեկ օրինակով, որն ի պահ է հանձնվում Եվրոպայի խորհրդի արխիվ: Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարը հաստատված պատճեններն ուղարկում է Եվրոպայի խորհրդի անդամ յուրաքանչյուր պետությանը:

Արձանագրությունը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2013 թ. սեպտեմբերի 1-ին:

ՈՒՂԵՆԻՇՆԵՐ

ՇՄ(2017)83- /ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՆԻՇՆԵՐ⁵

(Ընդունվել է Նախարարների կոմիտեի կողմից 2017 թվականի սեպտեմբերի 27-ին Նախարարների տեղակալների 1295-րդ ժողովում)

Նախարարների կոմիտեն.

Գտնելով, որ քաղաքացիների մասնակցությունը ժողովրդավարության գաղափարի հիմնաքարն է,

Գտնելով, որ ներկայացուցչական ժողովրդավարությունը, հիմնված քաղաքացիների՝ ողջամիտ ժամկետներով իրենց ներկայացուցիչներին ազատ ընտրելու իրավունքի վրա, անդամ պետությունների ընդհանուր ժառանգության մի մասն է կազմում,

Գտնելով, որ ուղղակի ժողովրդավարությունը, հիմնված ընտրություններում մասնակցելու իրավունքի, համաժողովրդական նախաձեռնությունների և հանրաքվեների պահանջներ նախաձեռնելու և դրանք ստորագրելու իրավունքի վրա, որոշ անդամ պետությունների պատմական մշակույթի մասն է կազմում,

Գտնելով, որ մասնակցային ժողովրդավարությունը, հիմնված հանրային կառավարման մարմինների իրավասությունների և պարտականությունների իրականացման կանխորոշման կամ դրանց վրա ազդեցություն գործելու իրավունքի վրա, նպաստում է ներկայացուցչական և ուղղակի ժողովրդավարությանը, և որ քաղաքական որոշումների կայացման գործընթացում քաղաքացիական մասնակցության իրավունքը պետք է վերապահվի բոլոր անհատներին, հասարակական կազմակերպություններին (<Կ) և քաղաքացիական լայն հասարակությանը,

Ընդգծելով, որ, վերջնական առումով, որոշումներ կայացնելու համար պատասխանատու և հաշվետու են հանրային կառավարման մարմինները, որոնք ժողովրդավարական լեգիտիմություն ունեն նման որոշումներ կայացնելու համար,

Հաշվի առնելով Եվրոպայի խորհրդի փաստաթղթերը, որոնք նպաստում են քաղաքացիական մասնակցության միջավայրի ստեղծմանը, ինչպիսիք են օրինակ՝

- «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիան (ETS թիվ 5) և դրա լրացուցիչ արձանագրությունները,

5 <https://rm.coe.int/0900001680786ac4> (Ոչ պաշտոնական թարգմանություն)

- «Պաշտոնական փաստաթղթերի հասանելիության մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիան (CETS թիվ 205),
- «Սոցիալ-քաղաքական որոշումների կայացման գործընթացում կանանց և տղամարդկանց հավասարակշիռ մասնակցության մասին» անդամ պետություններին ուղղված Նախարարների կոմիտեի Rec(2003)3 առաջարկությունը
- «Եվրոպայում հասարակական կազմակերպությունների իրավական կարգավիճակի մասին» անդամ պետություններին ուղղված Նախարարների կոմիտեի CM/Rec(2007)14 առաջարկությունը,
- Որոշումների կայացման գործընթացում քաղաքացիական մասնակցության լավագույն գործելակերպերի 2009 թվականի կանոնակարգը,

Հաշվի առնելով, նաև այն փաստաթղթերը, որոնցով սահմանվում է մասնակցության իրավունքը.

- Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի՝ «Տեղական ինքնակառավարման մարմիններում մասնակցության իրավունքի մասին» լրացուցիչ արձանագրությունը (CETS թիվ 207),
- «Տեղական հասարակական կյանքում քաղաքացիների մասնակցության մասին» անդամ պետություններին ուղղված Նախարարների կոմիտեի Rec(2001)19 առաջարկությունը,

Տեղյակ լինելով այն մասին, որ անհրաժեշտ է մեծացնել վստահությունը և արժանահավատությունը մեր ժողովրդավարական հաստատությունների նկատմամբ, և վստահ լինելով, որ որոշումների կայացման գործընթացում քաղաքացիական մասնակցության հնարավորությունների ընդլայնումը այդ նպատակին հասնելու եղանակներից մեկն է,

Խրախուսելով անդամ պետություններին դասեր քաղել մասնակցության միջոցով ձեռք բերված կարծիքներից, տեղեկություններից և փորձագիտությունից և զարգացնել արդյունավետ մասնակցային մշակույթ՝ հենվելով մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի, ժողովրդավարության և իրավունքի գերակայության վրա,

Ընդունում է սույն ուղենիշերը և կոչ է անում անդամ պետություններին առավելագույնս կիրառել դրանք և ապահովել դրանց տարածումը, մասնավորապես՝ այն մարմինների շրջանում, որոնք պատասխանատու են, կամ որևէ կերպ ներգրավված են քաղաքական որոշումների կայացման գործընթացում քաղաքացիական մասնակցության գործում:

I. Նպատակ

1. Սույն ուղենիշեր նպատակ են հետապնդում ամրապնդել և օժանդակել անհատների, ՀԿ-ների և քաղաքացիական լայն հասարակության մասնակցությանը քաղաքական որոշումների ընդունման գործընթացում:

II. Սահմանումներ

2. Սույն ուղենիշերի նպատակով՝ կիրառվում են հետևյալ սահմանումները.

ա. «քաղաքացիական մասնակցություն»՝ անհատների, ՀԿ-ների և քաղաքացիական լայն հասարակության ներգրավումը հանրային կառավարման մարմինների կողմից ընդունվող որոշումների կայացման գործընթացում: Քաղաքական որոշումների գործընթացում քաղաքացիական մասնակցությունը տարբերվում է քաղաքական կուսակցություններում անմիջական մասնակցության առնչությամբ քաղաքական ակտիվությունից և բիզնես շահերի առնչությամբ լոբբինգից,

բ. «որոշումների կայացման գործընթաց»՝ քաղաքական փաստաթղթի, ռազմավարության, օրենքի կամ կանոնակարգի մշակում, ընդունում, իրականացում, գնահատում և վերածնակերպում ազգային, տարածաշրջանային կամ տեղական մակարդակում, կամ ցանկացած այլ գործընթաց, որի ժամանակ հանրային կառավարման մարմնի կողմից իր իրավասության շրջանակում ընդունվում է հանրության, կամ հանրության մի հատվածի վրա ազդեցություն ունեցող որոշում,

գ. «հասարակական կազմակերպություններ» (ՀԿ-ներ)՝ կամավոր հիմունքով ստեղծված ինքնակառավարվող մարմիններ կամ կազմակերպություններ, որոնք ստեղծվել են հետապնդելու իրենց հիմնադիրների կամ անդամների կողմից սահմանված, հիմնականում՝ շահույթ չհետապնդող նպատակներ, ինչպես սահմանված է «Եվրոպայում հասարակական կազմակերպությունների իրավական կարգավիճակի մասին» անդամ պետություններին ուղղված Նախարարների կոմիտեի CM/Rec(2007)14 հանձնարարականում: Դրանք կարող են ընդգրկել, օրինակ՝ կամավոր հիմունքով ստեղծված խմբերը, շահույթ չհետապնդող կազմակերպությունները, միավորումները, հիմնադրամները, բարեգործական կազմակերպությունները կամ աշխարհագրական կամ շահերի վրա հիմնված համայնքները և շահերի պաշտպանության խմբերը,

դ. «քաղաքացիական լայն հասարակություն»՝ անհատների և կազմակերպված, պակաս կազմակերպված կամ ոչ ֆորմալ խմբերի

համակցություն, որոնց միջոցով նման անձինք նպաստում են հասարակության զարգացմանը կամ արտահայտում տեսակետներ և կարծիքներ, այդ թվում՝ մարդու իրավունքների խախտումների, կոռուպցիայի և այլ իրավախախտումների հարցերի շուրջ, կամ կատարում են քննադատական դատողություններ: Նման կազմակերպված կամ պակաս կազմակերպված խմբեր կարող են հանդիսանալ մասնագիտական և տեղական կազմակերպությունները, համալսարանները և հետազոտական կենտրոնները, կրոնական և ոչ կրոնական կազմակերպությունները և մարդու իրավունքների պաշտպանները,

- ե. «հանրային կառավարման մարմին»՝ ցանկացած գործադիր, օրենսդիր կամ վարչական մարմին, որը գործում է ազգային, տարածաշրջանային կամ տեղական մակարդակում, այդ թվում՝ անձինք, որոնք իրականացում են գործադիր լիազորություններ կամ վարչական գործառույթներ:

III. Պայմաններ և սկզբունքներ

Քաղաքացիական մասնակցությունը խրախուսող պայմաններ

- 3. Մասնակցությունը պահանջում է, որ ներգրավված բոլոր անձինք ազնվորեն և անկեղծորեն տեսակետներ փոխանակեն, որպեսզի ապահովվի քաղաքացիական հասարակության դիրքորոշումների արդյունավետորեն հաշվի առնելը որոշում կայացնելու լիազորություն ունեցող հանրային կառավարման մարմինների կողմից: Ուստի, արդյունավետ քաղաքացիական մասնակցության պայմանները հետևյալն են.
 - ա. մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների նկատմամբ հարգանք, իրավունքի գերակայություն, հիմնարար ժողովրդավարական սկզբունքների պահպանում, քաղաքական հանձնառություն, հստակ ընթացակարգեր, երկխոսության ընդհանուր տարածք և կենսական, բազմախոհ և կայուն քաղաքացիական հասարակության համար ընդհանուր առմամբ բարենպաստ պայմաններ,
 - բ. անդամ պետությունների կողմից բարենպաստ պայմանների ստեղծում և պահպանում, որի մաս են կազմում քաղաքական շրջանակը, իրավական դաշտը (հարկ եղած դեպքում) և գործնական միջավայրը, որոնք պետք է երաշխավորեն անհատների, ՀԿ-ների և քաղաքացիական լայն հասարակության՝ միավորումներ ստեղծելու ազատության, հավաքներ կազմակերպելու ազատության, արտահայտվելու ազատության և տեղեկատվության ազատության արդյունավետ իրավունքները:
 - գ. բազմախոհ ժողովրդավարության մեջ քաղաքացիական հասա-

րակության դերակատարման, շահերի պաշտպանության ու պետական գործերի մշտադիտարկման գործառույթների և բազմաբնույթ ու կենսունակ հասարակություն կառուցելու գործում ներդրում կատարելու ճանաչում, պաշտպանություն և աջակցություն:

Սկզբունքներ

4. Քաղաքացիական մասնակցությունը պետք է խրախուսվի և օժանդակվի հետևյալ սկզբունքներով, որոնք վերաբերում են քաղաքական որոշումների կայացման գործընթացում քաղաքացիական մասնակցության մեջ ներգրավված բոլոր դերակատարներին.
 - ա. բոլոր դերակատարների միջև փոխադարձ հարգանք՝ որպես ազնիվ փոխհարաբերության և փոխադարձ վստահության հիմք,
 - բ. հարգանք ՀԿ-ների անկախության նկատմամբ՝ անկախ այն բանից, թե նրանց կարծիքները համընկնում են հանրային կառավարման մարմինների կարծիքի հետ, թե ոչ,
 - գ. հանրային կառավարման մարմինների դիրքորոշման նկատմամբ հարգանք, որոնք պատասխանատու և հաշվետու են որոշումների կայացման համար,
 - դ. հրապարակայնություն, թափանցիկություն և հաշվետվողականություն,
 - ե. արձագանքման կարողություն՝ բոլոր դերակատարների կողմից տրամադրվող համապատասխան կարծիքներով,
 - զ. խտրականության բացառում և ներառականություն, որպեսզի բոլորի ձայնը, այդ թվում՝ պակաս արտոնյալ և առավել խոցելի խմբերի, լսելի լինի և հաշվի առնվի,
 - է. գենդերային հավասարություն և բոլոր խմբերի հավասար մասնակցություն, այդ թվում՝ այն անձանց, որոնք ունեն հատուկ շահեր և կարիքներ, ինչպիսիք են՝ երիտասարդները, ծերերը, հաշմանդամություն ունեցող անձինք կամ փոքրամասնությունները,
 - ը. հասանելիություն՝ հասկանալի լեզվի և մասնակցությունն ապահովող համապատասխան միջոցների միջոցով՝ առցանց կամ անցանց, և ցանկացած սարքի միջոցով:

IV. Քաղաքական որոշումների կայացման գործընթացում քաղաքացիական մասնակցության հիմնական դրույթները

5. Քաղաքացիական մասնակցությունը պետք է նպատակ հետապնդի տրամադրել, հավաքել և փոխանցել անհատների տեսակետները՝ անմիջականորեն կամ ՀԿ-ների և/կամ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների միջոցով, որի ժամանակ փոխանակվում են նշանակալի տեղեկություններ և տեսակետներ, որոնք հիմք են հան-

դիսանում որոշումների կայացման գործընթացի համար այնպես, որ հասարակության կարիքներին տրվի պատշաճ արձագանք:

6. Քաղաքացիական մասնակցությունը պետք է երաշխավորվի համապատասխան, համակարգված և թափանցիկ միջոցներով, այդ թվում, հարկ եղած դեպքում՝ իրավական կամ կարգավորիչ մեխանիզմներով, որոնք կարող են ներառել դրույթներ դատարան դիմելու կամ փոխհատուցման պահանջներին ընթացք տալու մասին այն դեպքերում, երբ իրավական նորմերը խախտվել են: Մասնակցության ցանկացած սահմանափակում կամ պայման պետք է հստակ սահմանվի իրավական դաշտում և պետք է համապատասխանի «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիային և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքին:
7. Քաղաքացիական մասնակցության համար պետք է բաց լինեն համապատասխան լիազորություններ ունեցող հանրային կառավարման մարմինների կողմից որոշումների կայացման գործընթացի տարբեր փուլերը:
8. Տեղեկատվությունը պետք է լինի հեշտ հասանելի, թափանցիկ և մատչելի հասարակության համար, բացառությամբ՝ օրենքով հստակ նախատեսված հիմքերի կամ սահմանափակված տվյալների պաշտպանության նկատառումներով՝ Եվրոպայի խորհրդի համապատասխան կոնվենցիաներին և այլ միջազգային պարտավորություններին համահունչ:
9. Համապատասխան տեղեկությունները պետք է տրամադրվեն ժամանակին, ինչը հնարավորություն կտա կատարել նշանակալի ներդրում այն ժամանակ, երբ դեռ հնարավոր է որոշումները փոխել:
10. Հանրային կառավարման մարմինները պետք է ծրագրեն և կառավարեն քաղաքացիական մասնակցությունը և հստակ սահմանեն դրա նպատակները, դերակատարներին, գործընթացները և տեսանելի ժամանակացույցը, ինչպես նաև կիրառվող մեթոդները:
11. Հանրային կառավարման մարմինները պետք է տրամադրեն արդիական, համալիր տեղեկատվություն որոշումների կայացման գործընթացի և մասնակցության ընթացակարգերի վերաբերյալ:
12. Հանրային կառավարման մարմինները պետք է խուսափեն անհարկի խնդիրներ ստեղծելուց անհատների, ՀԿ-ների և քաղաքացիական լայն հասարակության համար քաղաքացիական մասնակցության ընթացքում և պետք է մասնակցությանն օժանդակելու համար համապատասխան գործողություններ ձեռնարկեն:
13. Քաղաքացիական մասնակցության ընթացքում հանրային կառավարման մարմինների կողմից անհատներին, ՀԿ-ներին կամ քաղաքացիական լայն հասարակությանը օժանդակություն տրամադրելիս պետք

է խուսափել այնպիսի մեթոդներից, որոնք կարող են որևէ կերպ ներազդել մասնակցության վերջնարդյունքի վրա:

14. Հարկ եղած դեպքում՝ պետք է ստեղծվեն համակարգող մարմիններ կամ զարգացվեն գոյություն ունեցողները՝ քաղաքացիական մասնակցության գործընթացներ նախաձեռնելու և կառավարելու նպատակով՝ պայմանով, որ այդ մարմինների գործառույթները հստակ սահմանվեն, ընդգծվեն և ստանան համապատասխան օժանդակություն:
15. Հանրային կառավարման մարմինները և ՀԿ-ները կարող են կնքել համագործակցության շրջանակային համաձայնագրեր՝ քաղաքացիական մասնակցությանը աջակցելու համար:
16. Տրամադրված ժամկետները, բացառությամբ՝ բացառիկ և հստակ սահմանված դեպքերի, պետք է բավարար հնարավորություն տան պատշաճ պատրաստվելու և կառուցողական դիտարկումներ կատարելու համար: Նմանապես, սահմանափակ ընթացակարգերի և/կամ սահմանափակ թվով դերակատարների ներգրավմամբ ընթացակարգերի կիրառումը պետք է կատարվի միայն բացառիկ դեպքերում և պետք է հիմնավորվի:
17. Քաղաքացիական մասնակցության գործողության շրջանակը և մեթոդը պետք է համապատասխանեն խնդրո առարկային: Հանրային կառավարման մարմինները պետք է ստեղծեն առավելագույն ներդրում կատարելու հնարավորություն, այդ թվում՝ մարզինալ, ոչ արտոնյալ և խոցելի անձանցից կազմված խմբերի կողմից:
18. Հանրային կառավարման մարմինները չպետք է վերջնական որոշում ընդունեն, քանի դեռ չի ավարտվել իրենց կողմից նախաձեռնած քաղաքացիական մասնակցության գործընթացը, բացառությամբ՝ արտակարգ հանգամանքների առկայության և դրանց հստակ հիմնավորմամբ:

V. Քաղաքացիական մասնակցության տեսակները

19. Որոշումների կայացման գործընթացում քաղաքացիական մասնակցությունը կարող է իրականացվել տարբեր եղանակներով, այդ թվում՝ տեղեկատվության տրամադրում, խորհրդատվություն, երկխոսություն և ակտիվ ներգրավվածություն գործընթացում⁶:

Տեղեկատվության տրամադրում

20. Որոշումների կայացման բոլոր փուլերում համապատասխան բոլոր տեղեկությունները պետք է ներկայացվեն պարզ և հեշտ ըմբռնելի լեզվով, ինչպես նաև պատշաճ և հասանելի ձևաչափով՝ առանց

⁶ Սահմանված է Որոշումների կայացման գործընթացին քաղաքացիական մասնակցության պատշաճ պրակտիկայի կանոնագրքում:

անհարկի վարչական խոչընդոտների և, սկզբունքորեն, անվճար՝ տվյալների հասանելիության սկզբունքներին համապատասխան⁷:

21. Հանրային կառավարման մարմինները պետք է ապահովեն կարևոր փաստաթղթերի և տեղեկությունների առավելագույն հասանելիություն՝ առցանց և արտացանց՝ չսահմանափակելով նման տեղեկատվության վերլուծության և կրկնակի օգտագործման հնարավորությունները:

Խորհրդատվություն

22. Խորհրդատվության միջոցով հանրային կառավարման մարմինները կարող են տեսակետներ հավաքել անհատներից, ՀԿ-ներից և քաղաքացիական լայն հասարակությունից կոնկրետ քաղաքականության կամ թեմայի վերաբերյալ՝ որպես պաշտոնական ընթացակարգի մաս:
23. Խորհրդատվությունները կարող են իրականացվել տարբեր եղանակներով և գործիքներով, ինչպես օրինակ՝ հանդիպումներ, հանրային լսումներ, ֆոկլուս խմբերի քննարկումներ, հարցումներ, հարցաշարեր և թվային այլ գործիքներ:
24. Հանրային կառավարման մարմինները պետք է տրամադրեն հանրորեն հասանելի գնահատական խորհրդատվությունների արդյունքների վերաբերյալ: Հատկապես՝ պետք է հիմնավորվեն այն որոշումները, որոնք ընդունվել են նման խորհրդատվությունների արդյունքում:

Երկխոսություն

25. Երկխոսությունը համակարգված, երկարատև և արդյունքահեն գործընթաց է, որը հենվում է հանրային կառավարման մարմինների, անհատների, ՀԿ-ների և քաղաքացիական լայն հասարակության միջև տեսակետների փոխանակման փոխադարձ շահի վրա:
26. Հանրային կառավարման մարմինները, ՀԿ-ները և քաղաքացիական լայն հասարակությունը կարող են որոշել ստեղծել տարբեր հարթակներ՝ որպես երկխոսության և մասնակցության կայուն տարածքներ: Նման հարթակ կարող են հանդիսանալ կանոնավոր հանրային լսումները, հանրային ֆորումները, խորհրդատվական խորհուրդները կամ նմանատիպ կառույցներ:

Ակտիվ ներգրավվածություն

27. Ակտիվ ներգրավվածություն նշանակում է անհատներին, ՀԿ-ներին և քաղաքացիական լայն հասարակությանը որոշումների կայացման

7 Տվյալները պետք է լինեն ամբողջական, առաջնային, ժամանակին, հասանելի, համակարգչային մշակման ենթակա, ոչ խտրական, մտավոր սեփականության իրավունքներով և արտոնագրով չպաշտպանված, բողոքարկելի:

գործընթացում քաղաքացիական մասնակցության հնարավորությունների տրամադրում հանրային կառավարման մարմինների կողմից, որոնք ավելին են, քան զուտ տեղեկությունների տրամադրումը, խորհրդակցությունը կամ երկխոսությունը: Այդպիսին կարող են լինել աշխատանքային խմբերը կամ կոմիտեները, որոնք համատեղ աշխատում են փաստաթղթերի, ինչպես նաև քաղաքականությունների և օրենքների մշակման վրա, որոնց վերաբերյալ վերջնական որոշում պետք է կայացնի համապատասխան հանրային կառավարման մարմինը:

28. Համատեղ աշխատանքային խմբերի կամ կոմիտեների առկայության դեպքում հանրային կառավարման մարմինները պետք է սահմանեն թափանցիկ չափանիշներ և գործընթացներ անհատների, ՀԿ-ների և քաղաքացիական լայն հասարակության ներկայացվածության համար:
29. Որոշումների կայացման տարբեր փուլերում կարող են ստեղծվել հանրային կառավարման մարմիններից, ՀԿ-ներից և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներից կազմված տարաբնույթ գործընկերություններ: Կարող են ստեղծվել գործընկերություններ որոշումների իրականացման առնչությամբ:

VI. Իրականացման միջոցներ

30. Քաղաքացիական մասնակցության հնարավորություն ստեղծելու համար անդամ պետությունները պետք է առավելագույնս կիրառեն սույն ուղենիշերը և ապահովեն դրանց տարածումը՝ հնարավորություն տալով հանրային կառավարման մարմիններին իրազեկության բարձրացման միջոցառումներ ձեռնարկել և, իրենց հերթին, լայնորեն տարածել ուղենիշերը, անհրաժեշտության դեպքում՝ իրենց պաշտոնական լեզվով (լեզուներով): Դրանց շարքին են դասվում հեշտ կիրառելի առցանց և անցանց ուղեցույցները, բուկլետները և այլ միջոցներ, հանրային ծառայողների համար վերապատրաստումները և օժանդակությունը քաղաքացիական հասարակության անդամների համար նախատեսված վերապատրաստման մեխանիզմներին:
31. Հարկ եղած դեպքում՝ անդամ պետությունները պետք է ընդունեն կանոններ և մեխանիզմներ, կամ իրենց կանոններում կատարեն համապատասխան փոփոխություններ՝ հնարավորություն տալով հանրային կառավարման մարմիններին կիրառել սույն ուղենիշերը:
32. Անդամ պետությունները կարող են կոչ անել քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին՝
 - հաղորդելու և տարածելու մասնակցության հնարավորությունների մասին տեղեկություններ և նպաստելու քաղաքացիական հասարակության լայն հատվածների կողմից ներդրում կատարելու:

րելու հնարավորությանը,

- նպաստելու քաղաքացիական մասնակցության վերաբերյալ օրենքների և կանոնակարգերի իրականացման գնահատմանը:
33. Սույն ուղենիշերի գործնական կիրառության հարցում անդամ պետությունների փորձառությունը գնահատելու համար Նախարարների կոմիտեն կարող է պահանջել ժողովրդավարության և կառավարման հարցերով եվրոպական կոմիտեից (ԺԿԵԿ), ինչպես նաև Եվրոպայի խորհրդի միջազգային հասարակական կազմակերպությունների համաժողովից (ՄՀԿՀ) հետևել ուղենիշերի իրականացման ընթացքին և գնահատական ներկայացնել Նախարարների կոմիտե:
34. Նախարարների կոմիտեն կարող է փոխանցել այս ուղենիշերը Խորհրդարանական վեհաժողովին, Մարդու իրավունքների հանձնակատարին, Տեղական և տարածաշրջանային իշխանությունների կոնգրեսին, Եվրոպայի խորհրդի ՄՀԿ համաժողովին և «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովին («Վենետիկի հանձնաժողով») և կոչ անել վերջիններիս տարածել և առավելագույնս կիրառել սույն ուղենիշները իրենց աշխատանքի ընթացքում:

Քաղաքական որոշումների կայացմանը քաղաքացիական մասնակցության ուղեցենիշների ՀԱՎԵԼՎԱԾ

Բնագիր փաստաթղթեր

Եվրոպայի Խորհուրդ

Գլխավոր քարտուղար

Եվրոպայում ժողովրդավարության, մարդու իրավունքների և օրենքի գերակայության մասին Գլխավոր քարտուղարի տարեկան զեկույց. Պոպուլիզմ՝ որքան ուժեղ են Եվրոպայի զսպումները և հակակշիռները:
SG(2017)1

Եվրոպայում ժողովրդավարության, մարդու իրավունքների և օրենքի գերակայության մասին Գլխավոր քարտուղարի տարեկան զեկույց. Անվտանգության հրամայական Եվրոպայի համար:
SG(2016)1

Եվրոպայում ժողովրդավարության, մարդու իրավունքների և օրենքի գերակայության մասին Գլխավոր քարտուղարի տարեկան զեկույց. Եվրոպայում ժողովրդավարական անվտանգության համար համատեղ պատասխանատվություն:
SG(2015)1

Եվրոպայում ժողովրդավարության, մարդու իրավունքների և օրենքի գերակայության մասին Գլխավոր քարտուղարի տարեկան զեկույց. Եվրոպայի Խորհուրդի Գլխավոր քարտուղարի զեկույց:
SG(2014)1

Եվրոպայի Խորհուրդի կոնվենցիաները

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության եվրոպական կոնվենցիա
ETS No. 5

Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիա
ETS No. 122

Տեղական իշխանությանը մասնակցելու իրավունքի մասին տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի լրացուցիչ արձանագրություն
CETS No. 207

Միջազգային ոչ կառավարական կազմակերպությունների իրավաբանական անձի կարգավիճակի ճանաչման եվրոպական կոնվենցիա
ETS No. 124

Տեղական մակարդակում հանրային կյանքում օտարերկրացիների մասնակցության եվրոպական կոնվենցիա
ETS No. 144

Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիա
ETS No. 148

Ազգային փոքրամասնությունների պաշտպանության եվրոպական շրջանակային կոնվենցիա
ETS No. 157

Եվրոպական սոցիալական խարտիա (վերանայված)
ETS No. 163

Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության Եվրոպայի Խորհուրդի կոնվենցիա
CETS No 205

Նախարարների կոմիտե

Հանձնարարականներ

Անբարենպաստ շրջանների երիտասարդներին սոցիալական իրավունքների մատչելիության վերաբերյալ CM/Rec(2015)3 հանձնարարական
CM/Rec(2015)3

Ազդարարների պաշտպանության վերաբերյալ CM/Rec(2014)7 հանձնարարական
CM/Rec(2014)7

Համացանցից օգտվողների համար մարդու իրավունքների ուղեցույցի վերաբերյալ CM/Rec(2014)6 հանձնարարական
CM/Rec(2014)6

Մինչև 18 տարեկան երեխաների և երիտասարդների մասնակցության վերաբերյալ CM/Rec(2012)2 հանձնարարական
CM/Rec(2012)2

Քաղաքական և հանրային կյանքին հաշմանդամություն ունեցող ան-

ձանց մասնակցության վերաբերյալ CM/Rec(2011)14 հանձնարարական
CM/Rec(2011)14

Հանուն ժողովրդավարական քաղաքացիության կրթության և մարդու
իրավունքների կրթության Եվրոպայի Խորհուրդի խարտիայի վերաբե-
րյալ CM/Rec(2010)7 հանձնարարական
CM/Rec(2010)7

Սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիման վրա
խտրականության դեմ պայքարի միջոցների վերաբերյալ CM/Rec(2010)5
հանձնարարական
CM/Rec(2010)5

Տեղական և տարածաշրջանային մակարդակում մասնակցության և
մասնակցության քաղաքականությունների գնահատման, աուդիտի և
մշտադիտարկման վերաբերյալ CM/Rec(2009)2 հանձնարարական
CM/Rec(2009)2

Էլեկտրոնային ժողովրդավարության («Էլ-ժողովրդավարություն») վերա-
բերյալ CM/Rec(2009)1 հանձնարարական
CM/Rec(2009)1

Եվրոպայում հասարակական կազմակերպությունների իրավական կար-
գավիճակի վերաբերյալ CM/Rec(2007)14 հանձնարարական
CM/Rec(2007)14

Լրատվամիջոցների բազմակարծության և լրատվամիջոցների բովան-
դակության բազմազանության վերաբերյալ CM/Rec(2007)2 հանձնարա-
րական
CM/Rec(2007)2

Երիտասարդների քաղաքացիության և հանրային կյանքում մասնակ-
ցության վերաբերյալ Rec(2006)14 հանձնարարական
Rec(2006)14

Երիտասարդական քաղաքականության մշակման գործում երիտասար-
դական խորհուրդների դերի վերաբերյալ Rec(2006)1 հանձնարարական
Rec(2006)1

Էլեկտրոնային կառավարման («Էլ-կառավարում») վերաբերյալ
Rec(2004)15 հանձնարարական
Rec(2004)15

Տեղական և տարածաշրջանային կյանքին երիտասարդների մասնակցության վերաբերյալ Rec(2004)13 հանձնարարական
Rec(2004)13

Քաղաքական և պետական որոշումների կայացմանը կանանց և տղամարդկանց հավասարակշռված մասնակցության վերաբերյալ Rec(2003)3 հանձնարարական
Rec(2003)3

Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության վերաբերյալ Rec(2002)2 հանձնարարական
Rec(2002)2

Տեղական հանրային կյանքին քաղաքացիների մասնակցության վերաբերյալ Rec(2001)19 հանձնարարական
Rec(2001)19

Գենդերային հարցերի համալիր ընդգրկման վերաբերյալ թիվ R (98) 14 հանձնարարական
Rec(98)14

Բանաձևեր

Եվրոպայի Խորհրդում միջազգային ոչ կառավարական կազմակերպությունների մասնակցային կարգավիճակի վերաբերյալ CM/Res(2016)3 բանաձև
CM/Res(2016)3

Ուղեցույցեր

Մշակութային բազմազանություն ունեցող հասարակություններում մարդու իրավունքների պաշտպանության և խրախուսման վերաբերյալ Նախարարների կոմիտեի ուղղցույցերն անդամ պետություններին
CM/Del/Dec(2016)1249/4.6-app8

Հռչակագրեր

Որոշումների կայացման գործընթացին քաղաքացիական մասնակցության պատշաճ պրակտիկայի կանոնագրքի մասին հռչակագիր
Decl(21/10/2009)

Սոցիալական համերաշխությունը և միջմշակութային երկխոսությունը խրախուսելու հարցում համայնքային լրատվամիջոցների դերի մասին

հոչակագիր
Decl(11/02/2009)

Հոչակագիր. «Իրականություն դարձնել գենդարային հավասարությունը»

CM(2009)68-final

Մարդու իրավունքների պաշտպանների պաշտպանվածությունը բարելավելու և նրանց գործունեությունը խրախուսելու Եվրոպայի Խորհուրդի գործողությունների մասին հոչակագիր

Decl(06/02/2008)

Տեղական և տարածաշրջանային կառավարման համար պատասխանատու եվրոպական նախարարների 15–րդ համաժողով (Վալենսիա, 2007թ հոկտեմբերի 15-16)

Վալենսիայի հոչակագիր. «Տեղական մակարդակում նորարարության և պատշաճ կառավարման ռազմավարություն» (2007թ հոկտեմբերի 15-16)

CM(2008)14-add

Տարածական պլանավորման համար պատասխանատու եվրոպական նախարարների 16–րդ համաժողով (CEMAT) (Նափֆլիո, Հունաստան, 2014թ հունիսի 17)

Նափֆլիոնի հոչակագիր. «Խրախուսել տարածքային ժողովրդավարությունը տարածական պլանավորման մեջ»

CM(2014)91

Խորհրդարանական վեհաժողով

Բանաձևեր

Բանաձև 2096 (2016) «Ինչպե՞ս կանխարգելել Եվրոպայում ՀԿ-ների գործունեության անհարկի սահմանափակումները»

Resolution 2096 (2016)

Եվրոպայի Խորհրդի անդամ պետություններում մարդու իրավունքի պաշտպանների պաշտպանությունը և դերն հզորացնելու մասին 2095 (2016) բանաձև

Resolution 2095 (2016)

«Ժողովրդավարությունը Եվրոպայում՝ ճգնաժամ և հեռանկարներ» բանաձև

Resolution 1746 (2010)

«Ազդարարների» պաշտպանության մասին բանաձև
Resolution 1729 (2010)

Վեհաժողովի և ՄՀԿ-ների համաժողովի միջև համագործակցության
մասին 1589 (2017) բանաձև
Resolution 1589 (2007)

Հանձնարարականներ

Հանձնարարական 2086 (2016) «Ինչպե՞ս կանխարգելել Եվրոպայում
ՀԿ-ների գործունեության անհարկի սահմանափակումները»
Recommendation 2086 (2016)

Եվրոպայի Խորհրդի անդամ պետություններում մարդու իրավունքի
պաշտպանների պաշտպանությունը և դերն հզորացնելու մասին 2085
(2016) հանձնարարական
Recommendation 2085 (2016)

«Ժողովրդավարության Եվրոպայում՝ ճգնաժամ և հեռանկարներ»-ի մա-
սին 1928 (2010) հանձնարարական
Recommendation 1928 (2010)

Երեխաների մասնակցությունը՝ նրանց վրա ազդեցություն ունեցող որո-
շումների կայացմանը խրախուսելու վերաբերյալ 1864 (2009) հանձնա-
րարական
Recommendation 1864 (2009)E

Տեղական և տարածաշրջանային իշխանությունների կոնգրես

Կոնգրեսի եվրոպական քաղաքային II խարտիա՝ նոր քաղաքային կյան-
քի մանիֆեստ (2008)
European Urban Charter II

Տեղական և տարածաշրջանային կյանքին երիտասարդների մասնակ-
ցության մասին վերանայված եվրոպական խարտիա
(21 May 2003)

Բանաձևեր

Քաղաքացիական հասարակության հետ գործընկերություններ ձևա-
վորելու միջոցով ակտիվ քաղաքացիությունը խրախուսելու մասին 385
(2015) բանաձև
Resolution 385 (2015)

ՄՀԿ-ների համաժողով

ՀԿ-ների մասին օրենսդրության փորձագիտաան խորհուրդ՝ չափանիշների, մեխանիզմների և նախադեպային իրավունքի 2013-2015 թվականների զարգացումների ուսումնասիրություն
OING Conf/Exp (2015) 2

ՀԿ-ների մասին օրենսդրության փորձագիտական խորհուրդ՝ հասարակական կազմակերպությունների քաղաքական գործունեության կարգավորում, 2015
OING Conf/Exp (2015) 3

Որոշումների կայացման գործընթացին քաղաքացիական մասնակցության պատշաճ պրակտիկայի կանոնագիրք
CONF/PLE(2009)CODE1

«Ժողովրդավարություն՝ օրենքի միջոցով» Եվրոպական հանձնաժողով (Վենետիկի հանձնաժողով)

Վենետիկի հանձնաժողովի և ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի «Հավաքների ազատության մասին համատեղ ուղեցույցեր»
CDL-AD(2014)046E

Ժողովրդավարության և կառավարման հարցերով Եվրոպական կոմիտեի (ԺԿԵԿ, անգլ.՝ CDDG) – ԺԿԵԿ-ի և ՄՀԿ-ների համաժողովի համատեղ աշխատանքային խումբ

Քաղաքացիական մասնակցությունը որոշումների կայացման գործընթացներին՝ չափանիշների և պրակտիկայի ընդհանուր պատկերը Եվրոպայի Խորհուրդի անդամ պետություններում (2016թ մայիս)
[ECNL-COE]

Միջազգային այլ կազմակերպությունների փաստաթղթեր

Եվրոպական Միություն

Եվրոպական Միության մասին պայմանագրի և Եվրոպական համայնքի ստեղծման մասին պայմանագրի մեջ փոփոխություններ կատարելու մասին Լիսաբոնի պայմանագիր
(2007/C306/01)

Հանձնաժողովի հաղորդագրություն. «Դեպի խորհրդակցության և երկխոսության ամրապնդված մշակույթ՝ շահագրգիռ կողմերի հետ Հանձնաժողովի խորհրդակցության ընդհանուր սկզբունքներ և նվազագույն

չափանիշներ»

COM/2002/0704

Եվրոպական համայնքների հանձնաժողով COM(2001) 428, Եվրոպական կառավարման հայեցակարգ

COM/2001/428

Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպություն (ԵԱՀԿ)

Խաղաղ հավաքների և միավորումների ազատություններին նվիրված Մարդկային ուղղության 2015թ լրացուցիչ հանդիպման շրջանակներում կազմակերպված քաղաքացիական հասարակության ֆորումի մասնակիցների առաջարկությունները հանրային որոշումների կայացման գործընթացներին միավորումների մասնակցությունը խրախուսելու վերաբերյալ, 2015թ ապրիլ

HDIM.NGO/0033/15

Միավորված ազգերի կազմակերպություն

Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր, ստորագրվել է 1966թ դեկտեմբերի 16-ին, ուժի մեջ է մտել 1976թ մարտի 23-ին՝ 49-րդ հոդվածի համաձայն

CCPR 16/12/1966

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիա և կամընտիր արձանագրություն

Convention

ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհուրդ

Մարդու բոլոր իրավունքների, քաղաքացիական, քաղաքական, տնտեսական և մշակութային իրավունքների, այդ թվում՝ զարգացման իրավունքի խրախուսման և պաշտպանության մասին բանաձև. «Հավասար մասնակցություն քաղաքական և հասարակական գործերին»

A/HRC/33/L.28

«Պատշաճ պրակտիկայից և քաղաժ դասերից բխող գործնական հանձնարարականներ քաղաքացիական հասարակության համար անվտանգ և նպաստավոր միջավայր ստեղծելու և պահպանելու վերաբերյալ», 2016թ ապրիլի 11

A/HRC/32/20

«Հավասար մասնակցություն քաղաքական և հասարակական գործերին». 2015թ հոկտեմբերի 12-ին Մարդու իրավունքների խորհուրդի ընդունած բանաձև

A/HRC/RES/30/9

«Քաղաքացիական հասարակության տարածք». 2014թ հոկտեմբերի 3-ին Մարդու իրավունքների խորհուրդի ընդունած բանաձև

A/HRC/RES/27/31

«Քաղաքացիական հասարակության տարածք՝ օրենսդրությամբ և գործնականում ստեղծել և պահպանել անվտանգ և նպաստավոր միջավայր», 2013թ հոկտեմբերի 9-ին Մարդու իրավունքների խորհուրդի ընդունած բանաձև

A/HRC/RES/24/21

ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողով

Թիվ 25 ընդհանուր մեկնաբանություն՝ հանրային գործերին մասնակցելու իրավունքները, քվեարկության իրավունքները և հանրային ծառայությունների հավասար մատչելիության իրավունքը (հոդ. 25), 1996թ օգոստոսի 27

CCPR/C/21/Rev.1/Add.7

ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողով

ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողով(UNECE)՝ «Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության մատչելիության, որոշումների ընդունման գործընթացին հասարակության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» կոնվենցիա, («Օրհուսի կոնվենցիա»), 1998թ.

Aarhus Convention

ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ

**Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2018)4
հանձնարարականը անդամ պետություններին Տեղական
հանրային կյանքում քաղաքացիական մասնակցության
մասին (ընդունվել է Նախարարների կոմիտեի կողմից
2018թ. մարտի 21 –ին)⁸**

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հաշվի առնելով Նախարարների կոմիտեի **Տեղական հանրային կյանքում քաղաքացիական մասնակցության վերաբերյալ** թիվ Rec(2001)19 հանձնարարականի փոփոխման անհրաժեշտությունը, և հիմք ընդունելով այն փոփոխությունները, որոնք տեղի են ունեցել այդ հանձնարարականի ընդունումից ի վեր, Նախարարների կոմիտեն ընդունել է թիվ **CM/Rec(2018)4** հանձնարարականը Տեղական հանրային կյանքում քաղաքացիական մասնակցության մասին:

Հանձնարարականն անդամ պետությունների կառավարություններին առաջարկում է քայլեր ձեռնարկել ստորև ներկայացված 1-5-րդ պարագրաֆներում ներկայացված խնդիրների լուծման նպատակով կամ դրանց իրականացումը վստահել իրավասու հանրային մարմիններին, հաշվի առնելով նրանց համապատասխան սահմանադրական և օրենսդրական կարգավիճակը:

1. Ձևավորել քաղաքականություն, ընդգրկելով տեղական, և եթե կիրառելի է, տարածքային մարմիններին, որոնք պետք է նպաստեն տեղական հանրային կյանքին քաղաքացիների մասնակցությանը, հաշվի առնելով.
 - Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի սկզբունքները,
 - Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի՝ Տեղական ինքնակառավարման մարմիններում մասնակցության իրավունքի վերաբերյալ լրացուցիչ արձանագրությունը,
 - Քաղաքական որոշումների կայացման գործընթացում քաղաքացիական մասնակցության վերաբերյալ ուղենիշները (CM(2017)83-վերջնական), և
 - Սույն հանձնարարականի Հավելվածի Ա բաժնում սահմանված սկզբունքները:

8 https://search.coe.int/cm/Pages/result_details.aspx?ObjectId=09000016807954c3

2. Իրենց լիազորությունների շրջանակներում ընդունել միջոցներ, հաշվի առնելով վերոնշյալ քաղաքականությունը և սույն հանձնարարականի Հավելվածի Բ բաժինը, մասնավորապես, նպատակ ունենալով կատարելազորձել մասնակցության վերաբերյալ իրավական կարգավորումները և ապահովել, որ ներպետական օրենսդրությունն ու կարգավորումները հնարավորություն են տալիս տեղական ու տարածքային իշխանություններին կիրառել մասնակցության գործիքների լայն շրջանակ:
3. Պատշաճ կերպով հրավիրել տեղական և տարածքային իշխանություններին.
 - Համաձայնության գալու սույն հանձնարարականի Հավելվածի Ա բաժնում շարադրված սկզբունքների շուրջ և միջոցներ ձեռնարկել տեղական հանրային կյանքին քաղաքացիների մասնակցությանը նպաստող քաղաքականության արդյունավետ իրականացման համար.
 - Բարելավելու տեղական հանրային կյանքում քաղաքացիների մասնակցության վերաբերյալ տեղական և տարածքային կարգավորումները և այդպիսի մասնակցության համար պրակտիկ նախադրյալները, և իրենց լիազորությունների շրջանակներում ձեռնարկելու այլ միջոցներ՝ քաղաքացիների մասնակցությանը նպաստելու նպատակով, պատշաճ կերպով հաշվի առնելով սույն հանձնարարականի Հավելվածի Բ բաժնում թվարկված միջոցները:
4. Պարբերաբար վերանայել քաղաքացիների մասնակցության վերաբերյալ քաղաքականությունները՝ ապահովելու համար նրանց արդյունավետությունն ու արդիականությունը:
5. Ապահովել, որ սույն հանձնարարականը թարգմանվի համապատասխան երկրի պաշտոնական լեզվով (լեզուներով), և համապատասխան ձևով հրապարակվի ու ներկայացվի տեղական և տարածքային մարմինների ուշադրությանը:

Սույն հանձնարարականը փոխարինում է Նախարարների կոմիտեի **Տեղական հանրային կյանքում քաղաքացիական մասնակցության մասին** թիվ Rec(2001)19 հանձնարարականին:

CM/Rec(2018)4 հանձնարարականի Հավելվածի Ա բաժինն ամրագրում է տեղական ժողովրդավարական մասնակցության քաղաքականության հիմնարար սկզբունքները: Մասնավորապես, պետությունները պետք է.

1. Գործեն Եվրոպայի խորհրդի Պաշտոնական փաստաթղթերի հասանելիության վերաբերյալ կոնվենցիայում ամրագրված սկզբունքների համաձայն՝ կապված տեղական համայնքի վերաբերյալ տարաբնույթ հարցերի հետ՝ իրենց քաղաքացիներին հնարավորություն

տալով հայտնելու իրենց կարծիքն այն որոշումների վերաբերյալ, որոնք ազդում են իրենց համայնքի կամ իրենց վրա, և տեղական իշխանությունների կողմից որոշումների կայացման գործընթացում թափանցիկություն ապահովելու համար, դրանով իսկ բարձրացնելով որոշում կայացնողների հաշվետվողականությունը.

2. Փնտրել նոր ուղիներ քաղաքացիական ակտիվությունը բարձրացնելու և ժողովրդավարական մասնակցության մշակույթին նպաստելու նպատակով.
3. Զարգացնել համայնքին պատկանելու գիտակցությունը և խրախուսել քաղաքացիներին՝ կրելու անձնական պատասխանատվություն համայնքներում կյանքի բարելավմանը նպաստելու համար.
4. Մեծ կարևորություն տալ հանրային մարմինների և քաղաքացիների միջև հաղորդակցմանը և խրախուսել տեղական իշխանություններին շեշտադրում կատարել քաղաքացիների մասնակցության վրա ու ուշադրություն դարձնել նրանց պահանջներին ու սպասելիքներին, այնպես, որպեսզի ապահովվի նրանց արտահայտած կարիքներին համապատասխան արձագանք.
5. Ցուցաբերել համակողմանի մոտեցում քաղաքացիների մասնակցությանը, հաշվի առնելով ինչպես ներկայացուցչական ժողովրդավարության գործընթացները, այնպես էլ որոշումների կայացման ու տեղական նշանակության գործերի կառավարման գործընթացում ուղղակի մասնակցության ձևերը.
6. Խուսափել խիստ կոշտ լուծումներից և թույլ տալ նորարարություններ, առաջնայնություն տալով քաղաքացիների հզորացմանը. հետևաբար, պետությունները պետք է ապահովեն մասնակցության գործիքների լայն ընտրանի և դրանց համադրության ու դրանց օգտագործման ձևի հարմարեցման հնարավորություն՝ կախված հանգամանքներից.
7. Սկսել տեղական մասնակցության հետ կապված իրավիճակի խորքային գնահատումից, ստեղծել համապատասխան ուղենիշներ և ներդնել մշտադիտարկման համակարգ՝ հետևելու համար բոլոր փոփոխություններին, նպատակ ունենալով վեր հանել քաղաքացիների մասնակցության գործընթացում բոլոր դրական և բացասական միտումների պատճառները և գնահատել ընդունված մեխանիզմների ազդեցությունը.
8. Հնարավոր դարձնել քաղաքացիների մասնակցության վերաբերյալ լավագույն փորձի մասին տեղեկատվության փոխանակումը պետությունների միջև և նրանց ներսում, աջակցել տեղական իշխանություններին մասնակցության տարբեր մեթոդների արդյունավետության մասին իրազեկված լինելու հարցում և ապահովել, որ հանրությունը լիարժեք կերպով տեղեկացված լինի բոլոր հնարավորություն-

ների մասին.

9. Հատուկ ուշադրություն դարձնել այն քաղաքացիներին, ովքեր ավելի շատ դժվարություններ ունեն ակտիվորեն ընդգրկվելու համար, և ովքեր փաստացիորեն դուրս են մնում տեղական հանրային կյանքից.
10. Նպաստել տեղական քաղաքականությունում և տեղական հանրային կյանքում կանանց և տղամարդկանց հավասարակշռված մասնակցությանը.
11. Ճանաչել այն ներուժը, որն ունեն երեխաներն ու երիտասարդները տեղական համայնքների կայուն զարգացման առումով և շեշտադրել նրանց հնարավոր դերը.
12. Ճանաչել և բարձրացնել միավորումների և քաղաքացիների խմբերի դերը որպես հիմնական գործընկերներ մասնակցության մշակույթի զարգացման և պահպանման գործընթացում և որպես շարժիչ ուժ ժողովրդավարական մասնակցության գործնական կիրառման գործում.
13. Ճանաչել մշակութային առումով տարբեր և ներառական հասարակությունների կարողությունը՝ նպաստելու իրենց համայնքների հանրային կյանքում յուրաքանչյուրի մասնակցությանը.
14. Խրախուսել և օգտագործել բոլոր մակարդակների կառավարման մարմինների համատեղ ջանքերը, որտեղ յուրաքանչյուր մարմին պետք է կատարի համապատասխան գործողություն իր իրավասության շրջանակներում, գործելով սուբսիդիարության սկզբունքին համապատասխան:

Հանձնարարականի Հավելվածի Բ բաժինը սահմանում է տեղական հանրային կյանքում քաղաքացիների մասնակցության խրախուսմանն ու ընդլայնմանն ուղղված քայլերն ու միջոցները, դրանք բաժանելով չորս ենթախմբի.

- I. Ընդհանուր քայլեր և միջոցներ,
- II. Տեղական ընտրություններին և ներկայացուցչական ժողովրդավարության համակարգին մասնակցության հետ կապված քայլեր և միջոցներ,
- III. Տեղական որոշումների կայացմանը և տեղական նշանակության հարցերի կառավարմանը քաղաքացիների մասնակցությունը խրախուսող քայլեր և միջոցներ,
- IV. Տարբեր պատճառներով մասնակցելու ավելի մեծ դժվարություններ ունեցող քաղաքացիների կատեգորիաների խրախուսմանն ուղղված հատուկ քայլեր և միջոցներ:

**Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2009)2
հանձնարարականը անդամ պետություններին
Տեղական և տարածքային մակարդակում
մասնակցության և մասնակցության քաղաքականու-
թյունների գնահատման, աուդիտի և մշտադիտարկման
վերաբերյալ (ընդունվել է Նախարարների կոմիտեի
կողմից 2009թ. մարտի 11 –ին)⁹**

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Նախարարների կոմիտեն ընդունել է թիվ CM/Rec(2009)2 հանձնարարականը Տեղական և տարածքային մակարդակում մասնակցության և մասնակցության քաղաքականությունների գնահատման, աուդիտի և մշտադիտարկման վերաբերյալ, հաշվի առնելով, որ մասնակցության գործիքների արդյունավետության գնահատումը պահանջում է հատուկ ուշադրություն ոչ միայն դրանց ընդունումից և իրականացումից հետո, այլ որպես քաղաքականության մշակման անբաժանելի մաս, և որ այդպիսի գնահատումը պետք է իրականացվի քաղաքականություն մշակողների, պրակտիկ և հետազոտական աշխատանքով զբաղվողների միջև սերտ համագործակցությամբ, ինչպես նաև նկատի ունենալով այն հանգամանքը, որ Եւ շրջանակներում միջկառավարական համագործակցության միջոցով մշակվել և մի շարք անդամ պետություններում կիրառվել է CLEAR վերլուծական գործիքը (Տեղական մակարդակում քաղաքացիական մասնակցության ինքնագնահատման գործիք), որը հանդիսանում է ախտորոշիչ գործիք և նպատակ ունի սկզբում վեր հանել տեղական մարմիններում մասնակցության ուժեղ և թույլ կողմերը, իսկ այնուհետև՝ սահմանել առավել համակողմանի ռազմավարություններ հանրային մասնակցությունը բարձրացնելու նպատակով:

Հանձնարարականը անդամ պետություններին առաջարկում է.

1. Համագործակցել տեղական և տարածքային մարմինների և այլ շահառուների, ներառյալ տեղական մարմինների միավորումների հետ, նպատակ ունենալով.
 - Ա. ձեռնարկել կամ ակտիվացնել ժողովրդավարական մասնակցության և տեղական ու տարածքային մակարդակում դրա ազդեցության գնահատումը, այնպես, որ դա խրախուսի համագործակցությունը քաղաքականություն մշակողների, պրակտիկ և հետազոտական աշխատանք կատարողների, ներառյալ՝ ակադեմիական ինստիտուտների միջև.
 - Բ. նպաստել վերլուծական գործիքների, օրինակ՝ սույն հանձնարա-

9 https://search.coe.int/cm/Pages/result_details.aspx?ObjectID=09000016805d1979

րականի Հավելվածում ներկայացված **CLEAR գործիքի օգտագործմանը և այդ գործիքների օգտագործման արդյունքում ստացված արդյունքների տարածմանը.**

- Գ. Խրախուսել տեղական մարմիններին լիարժեքորեն օգտագործել իրենց ներուժը քաղաքացիների իրազեկվածության և ժողովրդավարության գործառնության ընկալման բարձրացման ու դրանում նրանց ավելի մեծ մասնակցության խրախուսման նպատակով.
- Դ. Ձեռնարկել կամ ակտիվացնել մասնակցության գործընթացում հիմնական միտումների մշտադիտարկումն ու վերլուծությունը.
2. Ըստ անհրաժեշտության խրախուսել փորձի միջազգային փոխանակումը տեղական մարմինների և այլ շահառուների, ներառյալ տեղական մարմինների միավորումների միջև, ինչպես նաև հաջողված մեթոդաբանությունների տարածումը.
3. այնքանով, որքանով տեղական կառավարման իրավական կարգավորումների սահմանումը պատվիրակված է տարածքային կառավարման մարմիններին, խրախուսել այդ մակարդակում վերոնշյալ 1-ին և 2-րդ պարագրաֆներում թվարկված միջոցառումների իրականացումը.
4. թարգմանել սույն հանձնարարականը պետության պաշտոնական լեզվով (լեզուներով) և ակտիվորեն տարածել այն տեղական մարմինների, նրանց միավորումների և այլ համապատասխան կողմերի շրջանում:

Թիվ **CM/Rec(2009)2** հանձնարարականի Հավելվածը ներկայացնում է Տեղական մակարդակում քաղաքացիական մասնակցության ինքնագնահատման գործիքին (CLEAR վերլուծական գործիքին): Հավելվածի 1-ին մասում ներկայացված է CLEAR վերլուծական գործիքը, մասնավորապես մանրամասնեցված են քաղաքացիական մասնակցության վրա ազդող հինգ գործոնները: Մասնակցությունը առավել հաջողված է, եթե քաղաքացիները.

- կարող են մասնակցել, այսինքն՝ ունեն մասնակցության ռեսուրսներ, հմտություններ և գիտելիքներ,
- ցանկանում են մասնակցել, այսինքն՝ ունեն կապվածության զգացողություն, որն ամրապնդում է մասնակցությունը,
- հնարավորություն ունեն մասնակցելու, այսինքն՝ ապահովված են մասնակցության հնարավորությամբ,
- նրանց խնդրում են մասնակցել, այսինքն՝ նրանք ներգրավված են պետական մարմինների կամ կամավորական խմբերի կողմից,
- ստանում են արձագանք, այսինքն՝ տեսնում են ապացույցներ,

որ իրենց տեսակետները հաշվի են առնվում:

CLEAR վերլուծական գործիքը օգնում է վերլուծել այս հինգ գործոնները կոնկրետ համայնքում՝ նպաստելու համար մասնակցության բարելավմանն ուղղված կոնկրետ քաղաքականությունների կատարելագործմանը: Սկսելով քաղաքացիական մասնակցությունը որոշող հինգ գործոնների վերլուծությունից, այն վեր է հանում այն հիմնական փոփոխությունները, որոնք կարող են չափվել և վերլուծության ենթարկվել: Վերլուծությունից հետո այն մշակում է քաղաքականության պատասխաններ հիմք ընդունելով առաջարկվող քաղաքականության թիրախները և գործողությունների վերաբերյալ գաղափարները:

Հավելվածի 1-ին մասում ներկայացված է նաև հարցաթերթիկ, որը հանդիսանում է CLEAR վերլուծական գործիքի հիմնարար բաղադրիչը և առաջարկում է այն հարցերը, որոնք պետք է տրվեն գործիքն օգտագործելիս:

Հավելվածի 2-րդ մասում ներկայացված է CLEAR վերլուծական գործիքի կիրառման ուղեցույցը, որը մի շարք քաղաքներում իրականացված փորձարկման հիման վրա ցույց է տալիս, թե ինչպես պետք է կիրառել CLEAR վերլուծական գործիքը: Մասնավորապես, այս մասում մանրամասն շարադրված է վերլուծական գործիքի կիրառման հինգ հիմնական փուլ.

1. Նախքան մեկնարկը՝ հստակեցնել նպատակները և CLEAR վերլուծական գործիքի դերը,
2. Նախապատրաստում՝ վեր հանել ռեսուրսներն ու պլանավորել,
3. CLEAR վերլուծական գործիքի օգտագործում՝ բազմակողմանի գնահատում,
4. Արդյունքների վերլուծություն՝ ուժեղ և թույլ կողմերի բացահայտում,
5. CLEAR վերլուծության հիման վրա քաղաքականության լուծումների մշակում:

**Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2004)13
հանձնարարականը անդամ պետություններին Տեղական
և տարածքային կյանքում երիտասարդների մասնակցու-
թյան վերաբերյալ (ընդունվել է Նախարարների կոմիտեի
կողմից 2004թ. նոյեմբերի 17 –ին)¹⁰**

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Նախարարների կոմիտեն ընդունել է թիվ CM/Rec(2004)13 հանձնարարականը անդամ պետություններին Տեղական և տարածքային կյանքում երիտասարդների մասնակցության վերաբերյալ, հաշվի առնելով այն, որ երիտասարդների մասնակցությունը որոշիչ գործոն է սոցիալական միասնության ապահովման և ժողովրդավարության գործառնության գործընթացում, և վերահաստատելով քաղաքացիական հասարակություն կառուցելու գործում երիտասարդների մասնակցության կարևոր դերն ու երիտասարդների վերաբերյալ բոլոր քաղաքականություններում երիտասարդներին որպես ռեսուրս, այլ ոչ որպես խնդիր համարելու անհրաժեշտությունը:

Հանձնարարականը անդամ պետություններին առաջարկում է, հաշվի առնելով իրենց համապատասխան օրենսդրական, վարչական և սահմանադրական կարգավորումները, նպաստել և աջակցել Տեղական և տարածքային կյանքում երիտասարդների մասնակցության վերաբերյալ վերանայված եվրոպական խարտիայի իրականացմանը, որն ընդունվել է Եվրոպայի խորհրդի Տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսի թիվ 128(2003) հանձնարարականի շրջանակներում, և այդ նպատակով.

- Ա. Խրախուսել տեղական և տարածքային իշխանություններին հաշվի առնել վերանայված խարտիայում ամրագրված սկզբունքները՝ բոլոր ոլորտներում երիտասարդների վերաբերյալ քաղաքականությունների և ծրագրերի մշակման ու իրականացման ժամանակ.
- Բ. Նպաստել տեղական և տարածքային կյանքում երիտասարդների ակտիվ մասնակցությանը նպաստող միջավայրի ձևավորմանը, խրախուսելով տեղական և տարածքային մարմիններին.
- ի. խրախուսելու երիտասարդների մասնակցությունը միավորումներին, մասնավորապես երիտասարդական կազմակերպությունների գործունեությանը, և զարգացնելու երիտասարդական կազմակերպությունների և տեղական ու տարածքային մարմինների միջև համագործակցությունը,

10 https://search.coe.int/cm/Pages/result_details.aspx?ObjectID=09000016805dbd33

ըստ անհրաժեշտության նաև դա իրականացնելով որպես գործընկերություններ.

- ii. Տեղական և տարածքային մակարդակում հիմնելու, օրինակ, երիտասարդական խորհրդակցական մարմիններ, ինչպիսիք են՝ երիտասարդական խորհուրդները, երիտասարդական պառլամենտները կամ ֆորումները, թույլ տալով երիտասարդներին, անկախ այս կամ այն կազմակերպությանը կամ միավորմանը անդամակցելուց, արտահայտել իրենց տեսակետները և ներկայացնել առաջարկներ նրանց վրա ազդեցություն ունեցող քաղաքականությունների ձևավորման և իրականացման վերաբերյալ.
 - iii. նպաստելու կրթական հաստատություններում երեխաների և երիտասարդների ակտիվ մասնակցության բոլոր ձևերին.
 - iv. նպաստելու երիտասարդ աշխատողների, ուսուցիչների և երիտասարդների մասնակցության գործում այլ համապատասխան դերակատարների, ներառյալ տեղական և տարածքային մակարդակում քաղաքացիական ծառայողների վերապատրաստմանը.
 - v. ապահովել տեղեկատվություն և խորհրդատվություն երիտասարդներին մասնակցության վերաբերյալ.
- Գ. Խրախուսել կառավարություններին ընդլայնել համապատասխան տարածքում մշտապես և օրինական կերպով բնակվող, ընտրելու իրավունք ունեցող երիտասարդների՝ տեղական և տարածքային ընտրություններին մասնակցելու հնարավորությունը.
- Դ. Խրախուսել տեղական և տարածքային մարմիններին տեղական և տարածքային ժողովրդավարության պրակտիկայում ինտեգրելու այն աշխատանքը, որը կատարվել է Եվրոպայի խորհրդի կողմից ժողովրդավարական քաղաքացիության համար կրթության վերաբերյալ ֆորմալ և ոչ ֆորմալ կրթության համատեքստում,
- Ե. Հրավիրել տեղական և տարածքային մարմիններին, երիտասարդների և ներգրավված գործընկերների հետ խորհրդակցությամբ, հետևելու և մշտադիտարկելու Տեղական և տարածքային կյանքում երիտասարդների մասնակցության վերաբերյալ վերանայված եվրոպական խարտիայի իրականացումը:

Հանձնարականի Հավելվածում ներկայացված է Տեղական և տարածքային կյանքում երկտասարդների մասնակցության վերաբերյալ վերանայված եվրոպական խարտիան, որը սահմանում է սկզբունքները, ոլորտային (սպորտի, հանգստի և միավորումների գործունեության, երիտասարդների զբաղվածության ապահովման, բնակարանային ապա-

հովման և տրանսպորտի, կրթության ու վերապատրաստման, առողջապահության, գենդերային հավասարության, գյուղական վայրերի, կայուն զարգացման և բնապահպանության, հակախտրականության և այլն) քաղաքականությունները, երիտասարդների մասնակցության գործիքները (վերապատրաստում, իրազեկում, SS միջոցով երիտասարդների մասնակցության ապահովում, ՋԼՄ-ներում երիտասարդների մասնակցության ապահովում, երիտասարդական ծրագրերին և նախաձեռնություններին աջակցություն, ՀԿ-ներում և քաղաքական կուսակցություններում երիտասարդների ներգրավվածություն և այլն), և տեղական ու տարածքային նշանակության հարցերին երիտասարդների ինստիտուցիոնալ մասնակցության ձևերը (երիտասարդական խորհուրդներ, երիտասարդական պառլամենտներ, երիտասարդական ֆորումներ և այլն):

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2007)12 հանձնարարականը անդամ պետություններին Տեղական և տարածքային մակարդակում կարողությունների զարգացման վերաբերյալ (ընդունվել է Նախարարների կոմիտեի կողմից 2007թ. հոկտեմբերի 10 –ին)¹¹

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Նախարարների կոմիտեն ընդունել է թիվ CM/Rec(2007)12 հանձնարարականը անդամ պետություններին Տեղական և տարածքային մակարդակում կարողությունների զարգացման վերաբերյալ, հաշվի առնելով, որ Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի համաձայն “Տեղական ինքնակառավարում հասկացությունը նշանակում է՝ տեղական ինքնակառավարման մարմինների իրավունքը և կարողությունը՝ կանոնակարգելու և կառավարելու պետական գործերի զգալի մասը (օրենքի շրջանակներում)” սեփական պատասխանատվությամբ և տեղական բնակչության շահերից ելնելով”; և հաշվի առնելով, որ այս դրույթն իրագործելու համար տեղական մարմիններին անհրաժեշտ են կայացած իրավական և ինստիտուցիոնալ հիմքեր և “լիարժեք ու բացառիկ իրավասություն” Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի դրույթներին համապատասխան, ֆինանսական ռեսուրսներ, որոնք “պետք է համաչափ լինեն Սահմանադրությամբ կամ օրենքով նրանց տրված լիազորություններին”, և բարձրորակ տեղական հան-

11 https://search.coe.int/cm/Pages/result_details.aspx?ObjectID=09000016805d5271

րային ծառայություններ մատուցելու ու բնակչությանը իր ժողովրդավարական գործընթացներին ներգրավելու կարողություն:

Հանձնարարականը անդամ պետություններին առաջարկում է.

1. Հստակորեն ճանաչել.

Ա. Տեղական իշխանության՝ բարձրորակ տեղական հանրային ծառայություններ մատուցելու և տեղական մարմինների ժողովրդավարական գործառնությանը բնակիչներին ներգրավելու կարողության կարևորությունը.

Բ. Որ տեղական իշխանության կարողությունը էականորեն կապված է ընտրված ներկայացուցիչների հմտություններից, կազմակերպության կորպորատիվ կառավարման կարողությունից, աշխատուժի կարողություններից (հմտություններ, անձնակազմի հավաքագրում և պահպանում), և ֆինանսների ու ծրագրերի կառավարման հմտություններից,

Գ. Այս կարողության հետագա զարգացման կարևորությունը:

2. ըստ անհրաժեշտության համագործակցել տեղական իշխանությունների և այլ շահառուների, ներառյալ տեղական մարմինների միավորումների հետ՝ տեղական մարմինների կարողությունների զարգացման ռազմավարական մոտեցումների մշակման գործընթացում, որը պետք է վեր հանի կարիքները, նախագծի կոնկրետ, արակտիկ և թիրախային ծրագրեր և համաձայնություններ ձեռք բերի դրանց իրականացման համար.

3. հնարավորություն տալ, խրախուսել, և ըստ անհրաժեշտության, աջակցել տեղական իշխանություններին և այլ շահառուներին, ներառյալ տեղական մարմինների միավորումներին, խորհրդակցության, համագործակցության և ռազմավարական մոտեցումների մշակման շրջանակներում՝

- զարգացնելու իրենց դերը տեղական կառավարման կարողությունների ամրապնդման գործում, որը վերաբերում է ինչպես ընտրված ներկայացուցիչներին, այնպես էլ անձնակազմին.

- մշակելու իրենց սեփական ռազմավարական պլանները տեղական իշխանությունների կարողությունների զարգացման համար, շարունակաբար ընդլայնելով իրենց ղեկավարումն ու ռազմավարական կառավարումը, ծառայությունների մատուցումը, համայնքային մասնակցությունը և հանրային էթիկան.

- ստեղծելու անհրաժեշտ կառուցվածքներ, գործընթացներ և կարողություններ իրենց կազմակերպության շրջանակներում՝ հետազոտելու, պլանավորելու, ֆինանսավորելու, իրականացնելու և գնահատելու կարողությունների զարգացման

- ծրագրեր տեղական և տարածքային մարմինների համար.
- առավելագույնս օգտագործելու կարողությունների զարգացման մեթոդաբանությունը որպես վերապարտաստման դասընթաց, փորձագիտական գնահատական, հենանշում (benchmarking) և լավագույն փորձի փոխանակում.
 - առավելագույնս օգտագործել իրականացման կառավարման մեթոդները՝ բարելավելու համար ծառայությունների մատուցումը.
4. իրենց իրավասության շրջանակներում համապատասխան շահառուների, ներառյալ տեղական մարմինների և/կամ նրանց միավորումների հետ վերանայել տեղական մարմինների աշխատակիցների ծառայության պայմանները,
 5. այլ անդամ պետությունների և միջազգային գործընկերների շրջանում տարածել կարողությունների զարգացման գործիքները, իրականացված ծրագրերի արդյունքները և հնարավոր դարձնել այս տեղեկատվության օգտագործումը.
 6. ըստ անհրաժեշտության խրախուսել փորձի միջազգային փոխանակումը տեղական մարմինների և այլ շահառուների, ներառյալ տեղական մարմինների միավորումների միջև:

**Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2007)4
հանձնարարականը անդամ պետություններին Տեղական
և տարածքային հանրային ծառայությունների
վերաբերյալ (ընդունվել է Նախարարների կոմիտեի
կողմից 2007թ. հունվարի 31 –ին)¹²**

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Նախարարների կոմիտեն ընդունել է թիվ **CM/Rec(2007)4** հանձնարարականը անդամ պետություններին Տեղական և տարածքային հանրային ծառայությունների վերաբերյալ, հաշվի առնելով, ի թիվս այլոց, որ տեղական և տարածքային ծառայությունները ձևավորում են բնակիչների ամենօրյա կյանքը և մեծապես որոշում են նրանց կյանքի որակը, և որ այս ծառայությունները նշանակալի ներդրում ունեն տեղական և տարածքային զարգացման գործում:

Հանձնարարականը անդամ պետություններին առաջարկում է.

1. Տեղական և տարածքային հանրային ծառայությունների դերի և կար-

¹² https://search.coe.int/cm/Pages/result_details.aspx?ObjectID=09000016805d6b5e

ևորության առումով.

- I. Իրենց բոլոր ազգային քաղաքականությունները, ծրագրերը և օրենսդրական բարեփոխումները, որոնք առնչվում կամ ազդում են տեղական և տարածքային ծառայությունների վրա, կառուցել հետևյալ սկզբունքների հիման վրա.
 - Ա. Տեղական և տարածքային ծառայությունները տեղական և տարածքային մարմինների ինքնակառավարման արտահայտություն են և հանդիսանում են հանրային շահերին ծառայելու կարևոր միջոց: Դրանք նպաստում են տեղական և տարածքային մարմինների լիազորությունների իրականացմանը.
 - Բ. Տեղական և տարածքային ծառայությունները նպաստում են սոցիալական միասնությանը՝ ապահովելով ներդաշնակ ծառայություններ և իրականացնելով օժանդակության քաղաքականություններ, որոնք ընդունվել են ազգային, տարածքային և տեղական մակարդակում.
 - Գ. Տեղական և տարածքային ծառայությունները նպաստում են կայուն զարգացմանը և տեղական ու տարածքային իշխանության տարածքում առկա ռեսուրսների հավասար ու ունիվերսալ բաշխմանը: Դրանք համաձայնեցնում են գյուղական և քաղաքային տարածքների պահանջները, ինչպես նաև տնտեսության ու բնապահպանության պահանջները:
- II. Հանրային ծառայությունների ապակենտրոնացման առումով.
 2. Իրենց բոլոր ազգային քաղաքականությունները, օրենսդրական նախաձեռնությունները և բարեփոխումները կապված հանրային ծառայությունների տրամադրման համար պատասխանատու վարչակազմի մակարդակի հետ, կառուցել Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի 4-րդ հոդվածի 3-րդ պարագրաֆի և հետևյալ սկզբունքների վրա.
 - Ա. տեղական և տարածքային հանրային ծառայությունների մոտարկումը բնակչությանը հիմնարար անհրաժեշտություն է, և տեղական ու տարածքային մարմիններն էական դերակատարում ունեն այս ծառայությունների մատուցման գործում: Քաղաքացիների կարիքներին ու ակնկալիքներին հարմարեցված ծառայությունների ապահովման նպատակով տեղական ու տարածքային մարմինները պետք է օգուտ քաղեն ապակենտրոնացման բարձր աստիճանից և այս ծառայությունները մատուցելիս անկախ գործելու կարողությունից.
 - Բ. հանրային ծառայությունների ապակենտրոնացումը պետք է համապատասխանի հոգուտ քաղաքացիների հանրային ծառայությունների համաձայնեցված և միասնական կիրառ-

ման, համակարգման և ներդաշնակության սկզբունքներին.

Գ. ցանկալի ապակենտրոնացման աստիճանը կախված է այնպիսի գործոններից, ինչպիսիք են՝

- տարածքային կառուցվածքը, տեղական և տարածքային մարմինների չափը,
- ծառայության բնույթը, կարևորությունը և տարածքային ուղղվածությունը,
- տեղական և տարածքային իշխանությունների արդյունավետ կարողությունը՝ իրականացնելու համապատասխան խնդիրը,
- ծառայությունների մատուցման որակն ու արդյունավետությունը,
- հանրային իշխանությունների գործողությունների փոխհամաձայնեցվածությունը,
- կոնկրետ ծառայության կարևորությունը համայնքի և դրա օգտագործողների կյանքի և կարիքների համար:

3. ազգային մակարդակում տեղական և տարածքային մարմինների համար պարտավորություններ ստեղծող գործողություններ ձեռնարկելու դեպքում նրանց տրամադրել օգնություն, ընդունելով անհրաժեշտ միջոցներ, ներառյալ ֆինանսական միջոցներ՝ հնարավոր դարձնելով որակյալ ծառայությունների մատուցումը.

4. ըստ անհրաժեշտության խրախուսել և ստեղծել խորհրդակցության, համագործակցության և համատեղ կառավարման ապարատ համապատասխան մակարդակների միջև, ներառյալ, եթե կիրառելի է, կամավոր և մասնավոր սեկտորների միջև՝ փոխգործակցության ապահովման և կրկնություններից խուսափելու համար:

III. Տեղական և տարածքային ծառայությունների սահմանման, կարգավորման և կառավարման գործում ծառայություններից օգտվողների դերի առումով.

5. ապահովել, որ տեղական ու տարածքային հանրային ծառայությունների վերաբերյալ բոլոր ներպետական քաղաքականությունները և այդ ծառայությունները մատուցելու լավագույն ձևի բոլոր ընտրություններն իրականացվեն սպառողի և հարկատուի բավարարվածության հիմնական նպատակով, և հիմնված լինեն իրականացված կարիքների վերլուծության վրա, մասնավորապես, տեղական և տարածքային մակարդակում, համայնքային ակնկալիքների մասին տեղեկատվության և հնարավոր լավագույն գին/որակ համադրության հիման վրա.

6. Ըստ անհրաժեշտության, օգնել տեղական և տարածքային մար-

միններին տեղական և տարածքային ծառայություններ սահմանելիս և տրամադրելիս որդեգրելու համակողմանի և ինտեգրված մոտեցում, որը հաշվի է առնում անձին, նրա կարիքները՝ նպատակ ունենալով առաջարկել հնարավորինս մասնագիտացված անձնավորված ծառայություններ.

7. ստեղծել պայմաններ և ապահովել աջակցություն այնպես, որ ապարատը գործի հնարավորություն տալով իրավասու մարմիններին և ծառայություն մատուցողներին իրենց տարաբնույթ ծառայությունները հարմարեցնել քաղաքացիների ակնկալիքների արագ փոփոխություններին և օբյեկտիվ հանգամանքներին.
8. ֆինանսական և բյուջետային սահմանափակումների շրջանակներում ապահովել կոնկրետ տեղական և տարածքային այն ծառայությունների ապահովման շարունակականությունը, որոնք համարվում են խիստ կարևոր բնակչության համար.
9. ելնելով հատուկ կարիքներից և խորհրդակցելով տեղական ու տարածքային մարմինների հետ, ընդունել կենսականորեն կարևոր ծառայություններից օգտվողների պաշտպանության համար նվազագույն չափանիշներ, և ստեղծել անհրաժեշտ ապարատ դրանց համապատասխանության մշտադիտարկման համար. եթե կիրառելի է, ապա այս չափանիշները պետք է համապատասխանեն միջազգային և եվրոպական գործիքների դրույթներին, որոնց պետությունը մասնակցում է:

IV. Տեղական և տարածքային ծառայությունները կարգավորող իրավական դրույթների առումով.

10. հստակորեն սահմանել տեղական և տարածքային ծառայությունների ոլորտում կառավարության տարբեր մակարդակների պարտականությունը և դերերի հավասարակշռված բաշխումն այդ մակարդակների միջև. դերերի այսպիսի բաշխումը, որը ընկալվում և ընդունվում է համապատասխան շահառուների կողմից, հնարավոր կդարձնի խուսափել լիազորությունների վակուումից և լիազորությունների համընկնումից.
11. ընդունել իրավական կարգավորումներ տեղական և տարածքային հանրային ծառայությունների վերաբերյալ՝ ապահովելու համար դրա բավարար ճկունությունը, որը թույլ կտա ծառայություններ մատուցել տարբեր ձևերով և ըստ մատուցողի ընտրության՝ հանրային կամ մասնավոր, առևտրային և ոչ առևտրային ոլորտներում:

V. Տեղական և տարածքային հանրային ծառայությունների արդյունավետության կառավարման առումով.

12. կախված տեղական և տարածքային մարմինների նախաձեռ-

նություններից, լիազորություններից և որոշումների կայացման իրավասությունից, խրախուսել և աջակցել նրանց ստեղծել արդյունավետության կառավարման համակարգեր և կանոնավոր կերպով փոխանակել իրենց փորձը այդ ոլորտներում այլ պետությունների տեղական մարմինների հետ:

13. ապահովել, որ արդյունավետության կառավարման վերաբերյալ ցանկացած ազգային նախաձեռնության նպատակը լինի ծառայությունների բարելավումը, այլ ոչ թե վատ աշխատանքի համար որոշ մարմիններին պատասխանատվության ենթարկելը կամ հսկողության նոր ձևերի սահմանումը:
 14. նպաստել համապատասխան տեղեկատվության ձեռքբերմանը և հասանելի դարձնել տեղական ու տարածքային հանրային ծառայության կառավարման մեթոդների, նրանց կառավարման արդյունքների և օգտագործողների հետ հարաբերությունների բարելավման հնարավոր եղանակների վերաբերյալ տարբեր ընտրությունների մասին տեղեկատվությունը, համագործակցելով տեղական և տարածքային մարմինների, նրանց միավորումների և նրանց վերապատրաստմամբ զբաղվող մարմինների հետ:
 15. բոլոր հնարավոր միջոցներով խրախուսել այս հարցերում նորարարությունը կամ նպաստել դրան, ինչպես նաև տեղեկատվության փոխանակումը ինչպես ազգային, այնպես էլ միջազգային մակարդակում գործող մարմինների միջև, համագործակցելով տեղական և տարածքային մարմինների, նրանց միավորումների և նրանց վերապատրաստմամբ զբաղվող մարմինների հետ:
- VI. Սույն հանձնարարականի վերաբերյալ ձեռնարկվող գործողությունների առումով.
16. Հիմնվել սույն հանձնարարականի Հավելվածում ներկայացված ուղեցույցի վրա՝ համապատասխան քաղաքական, օրենսդրական և ֆինանսական միջոցներ ձեռնարկելու համար՝ նպատակ ունենալով աջակցել և խրախուսել տեղական և տարածքային մարմիններին՝ հանրային ծառայությունների՝ հանրության շահերին լավագույնս հարմարեցնելու և սպառողների իրավունքների ու կարիքների լիարժեք հարգանքի ապահովմանն ուղղված իրենց ջանքերում.
 17. թարգմանել սույն հանձնարարականը պաշտոնական լեզվով (լեզուներով) և տարածել այն տեղական և տարածքային մարմինների կամ նրանց միավորումների շրջանում, հրավիրելով նրանց ուշադրությունը հատկապես Հավելվածի 2-րդ մասում տեղ գտած ուղեցույցի վրա:

Հանձնարականի Հավելվածում ներկայացված է Տեղական և տարածքային ծառայությունների վերաբերյալ ուղեցույցը, որի 1-ին մասում շարադրված է կենտրոնական իշխանության մարմինների ուղեցույցը, իսկ 2-րդ մասում՝ տեղական և տարածքային մարմինների ուղեցույցը:

**Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2004)12
հանձնարարականը անդամ պետություններին Տեղական
և տարածքային մարմինների կառուցվածքում և/կամ
սահմանների հետ կապված բարեփոխումների
իրականացման գործընթացի վերաբերյալ (ընդունվել է
Նախարարների կոմիտեի կողմից
2004թ. հոկտեմբերի 20 -ին)¹³**

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Նախարարների կոմիտեն ընդունել է թիվ **CM/Rec(2004)12 հանձնարարականը** Տեղական և տարածքային մարմինների կառուցվածքում և/կամ սահմանների հետ կապված բարեփոխումների իրականացման գործընթացի վերաբերյալ, հաշվի առնելով, որ անդամ պետությունների ընդհանուր փորձը տեղական և տարածքային իշխանությունների սահմանների և/կամ կառուցվածքի բարեփոխումների գործընթացում հիմք է հանդիսանում հետագայում այս հարցերի հետ կապված գործունեության կապակցությամբ անդամ երկրներին ուղղված հանձնարարական ընդունելու համար:

Սույն հանձնարարականը անդամ պետություններին առաջարկում է տեղական և/կամ տարածքային իշխանությունների սահմանների և/կամ կառուցվածքի բարեփոխումներ իրականացնելիս.

1. Կատարել պատշաճ նախապատրաստական աշխատանքներ՝ կիրառելի իրավական և պրակտիկ նախադրյալները վեր հանելու և հաշվի առնելու համար.
2. Ապահովել լավ ինստիտուցիոնալ երկխոսության հիման վրա կառուցված, պատշաճ մշակված որոշումների կայացման գործընթացի առկայություն.
3. Մշակել քայլ առ քայլ ծրագիր և հստակորեն սահմանված պարտականություններ, ներառյալ բարեփոխումների իրականացման ղեկավարում, ինչպես նաև սահմանել դրա հետևողական մշտադիտարկում.

¹³ https://search.coe.int/cm/Pages/result_details.aspx?ObjectID=09000016805dbeda

4. Ձեռնարկել արդյունքների լայն և անկողմնակալ գնահատում և այդ մասին տեղեկացնել տեղական և տարածքային մարմիններին:

Համաձայն ստորև ներկայացված Ա, Բ, Գ և Դ կետով սահմանված լավագույն պրակտիկայի, ապահովել, որ բարեփոխումների գործընթացի նպատակները, մեթոդները և արդյունքները լիովին համապատասխանեն Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի դրույթներին:

Ա. Նախապատրաստում

I. Վերլուծություն

1. Պատշաճ նախապատրաստումը նշանակում է լինել իրազեկված հետևյալի մասին.
 - խնդիրների սահմանման ձևը պետք է հայեցակարգային առումով կապված լինի հնարավոր լուծումների հետ.
 - ցանկացած տեղական և/կամ տարածքային իշխանությունների համակարգի նկատմամբ կիրառելի են հետևյալ հինգ պարամետրերը. չափ, իրավասություն, ինքնավարության աստիճան, ֆինանսական կարգավորումներ և գործունեության մեթոդներ.
 - այս պարամետրերը փոխկապակցված են և դրանցից մեկի փոփոխությունը ազդում է մյուսի կամ մյուսների վրա.
 - բարեփոխումների շահառուների և այլ շահագրգիռ կողմերի միջև պետք է առկա լինի փոխհամաձայնություն, որը թույլ է տալիս սահմանել բարեփոխման հստակ նպատակները.
2. որպես բարեփոխումների մեկնարկային կետ անհրաժեշտ է սահմանել նպատակ, որը պետք է կապված լինի չափի կամ իրավասության հետ: Այդպիսի նպատակ չունենալը հանգեցնում է գործողությունների հստակ ռազմավարության սահմանման անկարողության.
3. բարեփոխումների ցանկացած ծրագիր պետք է ղեկավարվի պետության կառավարման տարբեր մակարդակների համակողմանի հայեցակարգով և դրանց փոխգործակցությամբ, ինչպես առկա, այնպես էլ բարեփոխումներից հետո ակնկալվող իրավիճակի վերաբերյալ.
4. լայն սոցիալ-տնտեսական համատեքստը, որտեղ պետք է տեղի ունենա բարեփոխումը, պետք է հստակորեն վերլուծության ենթարկվի, մասնավորապես, նկատի ունենալով տնտեսական պայմանները և բնակչության բաշխվածությունն ամբողջ տարածքում.
5. Բնույթով և մակարդակով քաղաքացիների պահանջներին համապատասխանող ծառայությունների մատուցման ձախողումը, ինչպես նաև ժողովրդավարական կյանքի ցածր որակը կարող է թուլացնել տեղական և տարածքային իշխանությունների լեգիտիմությունը: Այդ պատճառով անհրաժեշտ է իրականացնել բարեփոխումների առկա

նախադրյալների վերլուծություն:

6. Չափի առումով անհրաժեշտ է հաշվի առնել դրա կարևոր և համալիր ազդեցությունը տեղական և տարածքային իշխանությունների գործառնության և իրենց խնդիրներն իրականացնելու կարողության վրա, բոլոր իրավիճակների համար կիրառելի օպտիմալ չափի բացակայությունը, դրա վրա տարբեր գործոնների ազդեցությունը, չափի և տեղական ու տարածքային ժողովրդավարության որակի միջև հստակ կապի բացակայությունը և այլն:
7. Հանրային կապիտալի սեփականության, անձնակազմի և ինստիտուտների տեղափոխման, ինչպես նաև ֆինանսական բեռի հնարավոր փոփոխման հարցերը չպետք է անտեսվեն նախապատրաստական փուլում:
8. Անհրաժեշտ է օգտագործել նոր տեխնոլոգիաները՝ ծառայությունների մատուցման արդյունավետությունը բարելավելու և տեղական ու տարածքային ժողովրդավարության որակն ընդլայնելու համար:
9. անհրաժեշտ է օգտագործել այլ համայնքներում, ինչպես նաև այլ պետություններում առկա փորձը:
10. տարածքային և/կամ վարչական բարեփոխումների առաջարկ ներկայացնելու որոշումը պետք է կայացվի միայն այն դեպքում, երբ նախապատրաստական վերլուծությունն ավարտված է և այն կարող է լիովին հաշվի առնվել:

II. Մասնակցություն

11. Համակողմանի համակարգային բարեփոխումները էապես կախված են փոխհամաձայնություն (consensus) ստեղծելու կարողությունից: Այն ավելի հեշտ է ձեռք բերել փոքրամասշտաբ բարեփոխումների դեպքում:
12. Բարեփոխումների շահառուների եւ այլ շահագրգիռ կողմերի միջեւ պետք է լինի փոխհամաձայնության այն նվազագույն աստիճանը, որը հնարավորություն կտա հստակ սահմանել բարեփոխման նպատակները:
13. Շահառուների եւ այլ շահագրգիռ կողմերի ներառումը ընդհանուր բնույթի նախապատրաստական փուլերում կարող է օգտակար միջոց լինել այդ փոխհամաձայնությունը ձեռք բերելու համար:
14. Տեղական կամ տարածքային մարմինների կողմից կամավոր մասնակցության վրա հիմնված բարեփոխումներն ավելի նախընտրելի են, քան իշխանության բարձր օղակի կողմից իր լիազորության իրականացումը համապատասխան շահագրգիռ կողմերի կամքին հակառակ: «Ներքեից վերել» նախաձեռնությունը հաջողված բարեփոխման վերածվելու համար պետք է լրացվի իշխանության բարձր օղակի որոշմամբ, եթե նույնիսկ դա տեղի է ունենում բարեփոխման

մեջ ներգրավված որոշ մարմինների կամքին հակառակ: «Վերելից ներքե» նախաձեռնությունը հաջողված բարեփոխման վերածվելու համար պետք է ձգտի ապահովել կամավոր մասնակցություն բարեփոխման ենթակա տարածքային կառավարման մակարդակում:

15. Շահառուները եւ շահագիգիռ այլ կողմերը պետք է գործընթացում ընդգրկվեն նախապատրաստական փուլից սկսած:
16. Համայնքների միացումը եւ նրանց սահմանները որել կերպ փոփոխող այլ փոփոխությունները պետք է իրականացվեն միայն Տեղական ինքակառավարման եվրոպական խարտիայով նախատեսված սկզբունքների համաձայն (ինչպիսիք են համայնքների հետ խորհրդակցությունը, հնարավորության դեպքում՝ դրա իրականացումը հանրաքվեի միջոցով):
17. Բարեփոխման ցանկացած գործընթաց իր նախապատրաստական, որոշման կայացման, իրականացման եւ գնահատման փուլերում պետք է հիմնվի ինստիտուցիոնալ երկխոսության վրա, որը պետք է բավարարի արդյունավետության, թափանցիկության, հաշվետվողականության, ներկայացվածության եւ նպատակայնության պահանջները:
18. Ինստիտուցիոնալ երկխոսության արդյունավետության համար այն պետք է՝
 - տեղի ունենա ճիշտ ժամանակին,
 - իրականացվի հստակ սահմանված ընթացակարգերի հիման վրա,
 - համապատասխան ողջ տեղեկատվությունը պետք է հասանելի լինի բոլոր մասնակիցներին, մասնավորապես համապատասխան ամսաթվերը, օրակարգերը եւ իրադարձությունները պետք է նախապես հրապարակվեն.
 - եթե արդյունքը պարտադիր բնույթ չի կրում, ապա այն պետք է առնվազն դառնա պատշաճ քննարկման առարկա վերջնական որոշումը կայացնելու գործընթացում,
 - ինստիտուցիոնալ երկխոսությունը պետք է լինի իմաստային եւ անարդյունավետ չդառնա զուգահեռ գործընթացների պատճառով,
 - տեղեկատվությունը հանրությանը հասանելի դարձնելու վերաբերյալ կանոնների համաձայն բոլոր մասնակիցները պետք է համաձայնության գան տեղեկատվության հրապարակման հիմքի վերաբերյալ՝ մասնակիցների մոտ անհրաժեշտ վստահություն ապահովելու նպատակով:
19. Ինստիտուցիոնալ երկխոսության թափանցիկության ապահովման համար պետք է հարգել հանրային տեղեկատվության հասանելիու-

թյան վերաբերյալ կանոնները եւ երկխոսության արդյունքները հնարավորինս շուտ հրապարակել:

20. Ինստիտուցիոնալ երկխոսության մասնակիցները հաշվետու են ժողովրդավարական ճանապարհով ընտրված մարմիններին (ժողովներին):
21. Ինստիտուցիոնալ երկխոսության ներկայացվածության ապահովման համար տվյալ հարցում օրինական շահեր ունեցող բոլոր մակարդակի տեղական կամ տարածքային մարմինների ներկայացուցիչները պետք է ներգրավվեն այդ գործընթացին, անկախ այն հանգամանքից, թե որ քաղաքական ուժն են ներկայացնում այդ տեղական կամ տարածքային մարմինները: Մասնակցությունը երկխոսությանը չպետք է սահմանափակվի միայն քաղաքական մեծամասնության ներկայացուցիչներով: Այնքանով, որքանով մասնակիցները ներկայացնում են տեղական կամ տարածքային մարմինները, նրանք պետք է լինեն այդ տեղական կամ տարածքային մարմինների ներկայացուցիչները:
22. Ինստիտուցիոնալ երկխոսության նպատակայնության համար պետք է՝
 - հնարավորինս օգտագործվեն առկա ռեսուրսներն ու ընթացակարգերը,
 - պետք է խուսափել ոչ անհրաժեշտ կրկնօրինակումից,
 - տարբեր մակարդակների միջեւ (պետություն-տարածք, պետություն-տեղական մակարդակ, տարածքային մակարդակ-տեղական մակարդակ, Ֆեդերալ մակարդակ-տեղական մակարդակ) երկխոսությունները պետք է լավ համակարգված լինեն:

III. Պլանավորում

23. Բարեփոխումների իրականացման ժամանակացույցին պետք է պատշաճ ուշադրություն դարձվի: Մի կողմից, պետք է բավարար ժամանակ տրամադրել անհրաժեշտ քննարկումներին և պրակտիկ համաձայնություններին ինչպես կենտրոնական, այնպես էլ տեղական մակարդակում, իսկ մյուս կողմից՝ չափազանց երկար ժամկետի արդյունքում ճիշտ պահը կարող է կորսվել: Ցանկացած առաջարկվող բարեփոխում պետք է սովորաբար տևի մի քանի տարի:
24. Բարեփոխման ցանկացած ծրագիր պետք է մշակվի հստակ սահմանված քայլերով:
25. Ցանկացած բարեփոխում պահանջում է հստակ պարտականությունների սահմանում, ներառյալ ղեկավարման առումով, շարունակականություն և հետևողականություն ապահովելու համար:
26. Անհրաժեշտ է դասեր քաղել ինչպես սեփական, այնպես էլ օտա-

րերկրյա փորձից: Այնուամենայնիվ, կոնկրետ լուծումներն անհրաժեշտ է հարմարեցնել:

27. Բարեփոխումների ռազմավարությունը պետք է ներառի համապատասխանեցման գործընթաց՝ հասցեագրելու համար առանձին տեղական ու տարածքային մարմինների հատուկ կարիքները, որոնք առաջանում են բարեփոխումների ընթացքում:
28. Եթե բնակչությունն անհավասարաչափ է բաշխված տարածքում և տնտեսապես տարբերվում է, տարբերակված լուծումներ կիրառելու հնարավորությունը պետք է հաշվի առնվի:

Բ. Որոշման կայացում

1. Առաջարկված բարեփոխման վերաբերյալ որոշումը պետք է կայացվի ինստիտուցիոնալ բարձրագույն օղակում, որին պետք է նախորդեն համապատասխան ինստիտուտների հետ խորհրդակցությունները (տես ինստիտուցիոնալ երկխոսության վերաբերյալ հանձնարարականները) եւ կարող է ազդեցություն կրել կամ եզրափակվել հանրաքվեով, եթե խորհրդակցության նման ձեւը սահմանված է օրենքով:
2. Բարեփոխման ծրագրի և դրա իրականացման վերաբերյալ որոշումը պետք է կայացվի բարձրագույն ինստիտուցիոնալ մակարդակում, հիմնվելով ներգրավված ինստիտուտների հետ խորհրդակցությունների վրա (տես ինստիտուցիոնալ երկխոսության վերաբերյալ հանձնարարականները):
3. Բարեփոխումները կարող են աջակցություն ստանալ ինչպես շահագրգիռ կողմերին խորհրդակցություններում ներգրավվելու, այնպես էլ ազգային իրավակարգավորումների շրջանակում տեղական և տարածքային մարմինների հզորացման միջոցով:

Գ. Իրականացում

1. Ինչպես արդեն նշվել է, ղեկավարումն էական նշանակություն ունի հաջող իրականացման համար:
2. Քանի որ իրականացման փուլում գործընթացի շեշտադրումները կենտրոնական իշխանություններից անցնում են ապակենտրոնացված իշխանություններին, հատկապես կարևոր է հստակորեն սահմանել ապակենտրոնացված իշխանության ղեկավարության պարտականությունը իրականացման փուլում:
3. Բարեփոխումների հետ կապված կենտրոնական քաղաքական հանձնառությունն անհրաժեշտ է իրականացման փուլում առաջացած կարևոր խնդիրները լուծելու համար:
4. Իրականացման փուլի համար անհրաժեշտ է ունենալ ընդհանուր մո-

տեցումներ, օրինակ՝ ներառելով բոլոր շահագրգիռ դերակատարների ներգրավմամբ պլանավորման ընթացակարգեր:

5. “Ներքևից վերև” փորձնական մոտեցումը կարող է հանգեցնել օգտակար արդյունքների նաև իրականացման փուլում:
6. Կենտրոնական կառավարությունը պետք է իրականացնի աջակցող ծրագրեր՝ ապահովելով տեխնոլոգիաներ և այլ անհրաժեշտ ենթակառուցվածքներ:
7. Անհրաժեշտ է սահմանել հուսալի իրավական կարգավորումներ անցումային փուլում բնականոն բյուջետային կարգապահություն ապահովելու համար:
8. Բարեփոխումների իրականացման մշտադիտարկումը խիստ էական է խոչընդոտները ժամանակին վեր հանելու համար և ներգրավված տարբեր տեղական ու տարածքային իշխանությունների փորձի համադրություն կատարելու համար:
9. Այդ մշտադիտարկումը պետք է իրականացվի բոլոր ներգրավված հանրային կառավարման մակարդակներում, ինչպես հենց ներգրավված կողմերի, այնպես էլ անկախ մշտադիտարկողների կողմից:

Դ. Գնահատում

1. Բարեփոխումների ավարտից հետո պետք է իրականացվի լայնածավալ անկախ գնահատում՝ չսահմանափակվելով միայն վարչական կառուցվածքների բարեփոխումների վրա, նպատակ ունենալով գնահատել բարեփոխումների նպատակների իրականացման աստիճանը:
2. Գնահատումը պետք է նաև կատարվի բարեփոխումների գործընթացում ուղղակիորեն ներգրավված սուբյեկտների կողմից:
3. Գնահատման արդյունքները պետք է հրապարակվեն:
4. Անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել բարեփոխումների փոփոխման համար այն դեպքում, եթե դրանք չեն համապատասխանել իրենց նպատակներին:
5. Անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել, որ գնահատման արդյունքները հաշվի առնվեն բարեփոխումների ընդհանուր քաղաքականության մշակման և հետագա բոլոր բարեփոխումների դեպքում:
6. Գնահատումը նաև պետք է հասանելի դարձնել Եվրոպայի խորհրդի անդամ այլ պետությունների համար և ուղարկել ի գիտություն Եվրոպայի խորհրդի Տեղական ու տարածքային իշխանությունների Կոնգրեսին:

Նախարարների կոմիտեի թիվ R(98)12 հանձնարարականը անդամ պետություններին Տեղական մարմինների գործողությունների նկատմամբ հսկողության վերաբերյալ (ընդունվել է Նախարարների կոմիտեի կողմից 1998թ. սեպտեմբերի 18 -ին)¹⁴

ԱՄՓՈՓԱԳԻ

Նախարարների կոմիտեն ընդունել է թիվ **R(98)12 հանձնարարականը** Տեղական մարմինների գործողությունների նկատմամբ հսկողության վերաբերյալ, հաշվի առնելով Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի դրույթները և այն հանգամանքը, որ տեղական մարմինների գործողությունների նկատմամբ հսկողության բնույթն ու շրջանակը պետք է տարբերակվի, կախված վերադաս մարմինների անունից նրանց իրականացրած խնդիրներից կամ իրենց սեփական իրավասության շրջանակներում իրականացված գործողություններից:

Հանձնարարականը անդամ պետություններին առաջարկում է.

1. Ընդունել համապատասխան միջոցներ՝
 - Ընդլայնելու Խարտիայի 8-րդ հոդվածով սահմանված սկզբունքների կիրառումը տեղական մարմինների գործողությունների նկատմամբ հսկողության բոլոր ձևերի նկատմամբ.
 - Ճանաչելու քաղաքացիների քաղաքական հսկողության նշանակալի դերը և նպաստելու այդ հսկողության իրականացմանը, ի թիվս այլոց, օգտագործելով ուղղակի ժողովրդավարության համապատասխան գործիքները.
 - Ամրապնդելու տեղական մարմինների գործողունեության թափանցիկությունը և ապահովելու, ընդհանուր առմամբ, այն որոշումների հանրային բնույթը, որոնք համայնքի համար առաջացնում են ֆինանսական ծախսեր, ինչպես նաև քաղաքացիների և համապատասխան իրավաբանական անձանց համար այդ որոշումների հասանելիության իրական հնարավորություն՝ օրենքով սահմանված ընթացակարգերին համապատասխան.
 - Խարտիայի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն թույլատրելու վարչական սանկցիաներ տեղական մարմինների ներկայացուցիչների նկատմամբ միայն բացառիկ դեպքերում, ուղեկցելով դրանց օգտագործումը համապատասխան երաշխիքներով՝ ապահովելու համար դրանց համապատասխանությունը տեղական ընտրական մանդատների ազատ իրականացմանը.

14 https://search.coe.int/cm/Pages/result_details.aspx?ObjectId=09000016804f8499

- Ապահովելու ընթացակարգեր, որպեսզի տեղական մարմինները կարողանան ինքնուրույն լուծել իրենց ներքին խնդիրները և սահմանելու հսկող վարչական մարմինների միջամտությունը միայն այն դեպքում, երբ այդ ընթացակարգերը որևէ արդյունք չեն տվել:
2. Անհրաժեշտության դեպքում ձեռնարկել համապատասխան օրենսդրական բարեփոխումներ հսկողության համակարգի և ենթակայության սկզբունքի միջև համապատասխանությունը, և այդ համակարգերի արդյունավետությունը բարելավելու համար, հաշվի առնելով սույն հանձնարարականի հավելվածում ներկայացված ուղենիշները:
- Հանձնարարականի Հավելվածում ներկայացված են Տեղական մարմինների գործողությունների նկատմամբ հսկողության համակարգերի բարելավման ուղենիշներ, որոնք սահմանում են առանձին ուղենիշներ վարչական հսկողության շրջանակի վերաբերյալ, վարչական հսկողության այլընտրանքային մեխանիզմների զարգացման վերաբերյալ, հսկողական ընթացակարգերի վերաբերյալ (դատական ընթացակարգեր, վարչական մարմինների առջև ընթացակարգեր, ֆինանսական հսկողություն և կառավարման հսկողություն) և ոչ ֆորմալ հսկողության դիսկի կանխարգելման վերաբերյալ:

ՏԵՂԱԿԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐ

Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2011)11 հանձնարարականը անդամ պետություններին Վերադաս մարմինների կողմից տեղական մարմինների նոր լիազորությունների ֆինանսավորման վերաբերյալ (ընդունվել է Նախարարների կոմիտեի կողմից 2011թ. հոկտեմբերի 12 –ին)¹⁵

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Նախարարների կոմիտեն ընդունել է թիվ CM/Rec(2011)11 հանձնարարականը Վերադաս մարմինների կողմից տեղական մարմինների նոր լիազորությունների ֆինանսավորման վերաբերյալ, նպատակ ունենալով հասցեագրել տեղական մարմինների լիազորությունների ֆինանսավորման ոլորտի առավել հիմնական հարցերը, հիմնվելով Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների փորձի վրա:

Հանձնարարականն անդամ պետություններին առաջարկում է.

Ա. Գործել հետևյալ դրույթների համաձայն,

1. Նոր լիազորությունների համար փոխհատուցում

15 https://search.coe.int/cm/Pages/result_details.aspx?ObjectID=09000016805afc97

- i. Երբ վերադաս մարմինը կայացնում է որոշումներ, որոնք սահմանում են կամ կարող են առաջացնել լրացուցիչ ծախսեր տեղական մարմինների համար, ապա վերադաս մարմինը պետք է փոխհատուցում տրամադրի տեղական մարմիններին:
- iii. Երբ նոր լիազորությունները ներդրվում են տեղական կառավարության պահանջով, ապա դրանք պետք է ֆինանսավորվեն տեղական ռեսուրսների հաշվին, սակայն նոր ծախսերի որոշակի մասի բաշխումը կարող է արդարացված լինել:
- iv. Եթե վերադաս որոշումները կրճատում են տեղական մարմինների ծախսերը, ապա հաշվետվողականության սկզբունքի համաձայն այդպիսի որոշումներին վերագրելի տնտեսված տեղական միջոցները պետք է փոխանցվեն վերադաս մարմնին:

2. Կարգավորումներ գերածախսերի կամ նվազ ծախսերի համար

Հետագա ստուգումները կարող են բացահայտել, որ փաստացի ծախսերը տարբերվում են ծախսերի նախահաշիվներից: Ընդհանուր առմամբ, սա կարող է հանգեցնել փոխհատուցման փոփոխության, սակայն վարչական պատճառներից ելնելով անհրաժեշտ է սահմանել կանոններ, որոնք սահմանափակում են այն դեպքերը, երբ փոխհատուցման քննարկումները կարող են վերսկսվել:

3. Լիազորության փոխանցման համար փոխհատուցում

Փաստացի ծախսերի աճը կապված վերադաս մարմնի կողմից տեղական մարմիններին փոխանցված նոր լիազորության հետ, որը նպատակ չունի փոփոխել օգտագործողին մատուցվող ծառայության մակարդակը, պետք է փոխհատուցվի:

4. Ոչ մի փոխհատուցում ընդհանուր կարգավորման համար

- i. Փոխհատուցում չի պահանջվում, եթե վերադաս մարմինը կրճատում է դոտացիան, տեղական հարկերի դրույքաչափերի վերին շեմը կամ եկամուտների բաշխման հարկային չափաբաժինը, որպեսզի նվազեցնի տեղական մարմինների՝ մակրոտնտեսական քաղաքականության պատճառներով պայմանավորված ծախսերը: Սակայն, այս դեպքում վերադաս մարմինը պետք է հանրությանը հստակորեն պարզաբանի տեղական ծախսերի կրճատման նպատակը:
- ii. Փոխհատուցում չի պահանջվում, եթե տեղական փաստացի ծախսերում փոփոխությունների պատճառը ընդհանուր չափանիշների փոփոխություններն են, որոնք միատեսակ ազդեցություն են ունեցել մասնավոր հատվածի և տեղական մարմինների վրա, օրինակ՝ ընդհանուր հարկումը կամ զբաղվածության մասին օրենսդրությունը, եթե դրանք չեն

հանգեցրել անհամաչափ ազդեցության տեղական մարմինների վրա:

- iii. Առանձին տեղական մարմիններին տրվող դոտացիաների փոփոխությունը չպետք է փոխհատուցվի, եթե տեղական կառավարմանն ամբողջությամբ տրամադրվող գումարը փոփոխության չի ենթարկվել:

5. Փոխհատուցման կանոնների ֆորմալիզացիա

Տեղական մարմիններին տրվող փոխհատուցման վերաբերյալ կանոնները պետք է ձևակերպվեն այնպես, որ վերադաս մարմինը պահպանի գործող նորմերը և փոխհատուցի տեղական մարմինների՝ նոր լիազորություններով պայմանավորված ծախսերը:

6. Փոխհատուցման մեթոդները

- i. Փոխհատուցումը կարող է տրվել այլ լիազորություններում կատարված փոփոխությունների ձևով, որը կչեզոքացնի տեղական ծախսերի վրա ազդեցությունը:
- ii. Փոխհատուցումը չի կարող տրվել այն ծառայությունների համար, որոնք սովորաբար ֆինանսավորվում են օգտագործողների վճարներից:
- iii. Բոլոր դեպքերում հարկերի հաշվին ֆինանսավորվող ծառայությունների դեպքում փոխհատուցումը պետք է տրվի դոտացիաների կամ հարկերի բաշխման հանձնառությունների միջոցով:
- iv. Տեղական մարմիններին նոր տեղական հարկեր սահմանելու կամ գործող տեղական հարկերը բարձրացնելու հնարավորություն տալու միջոցով փոխհատուցումից անհրաժեշտ է խուսափել:

7. Նախընտրելի փոխհատուցում դոտացիայի տեսքով

- i. Փոխհատուցումը պետք է սովորաբար կատարվի դոտացիայի տեսքով:
- ii. Փոխհատուցման նպատակներով կամ որևէ այլ նպատակներով նպատակային դոտացիաների օգտագործումը պետք է սահմանակալի:
- iii. Նպատակային դոտացիաների օգտագործման դեպքում դրանք պետք է որոշակի ժամանակահատված հետո փոխարինվեն ընդհանուր դոտացիայով:

8. Նախադեպի ազդեցություն

Նոր լիազորության ծախսերի սկզբնական նախահաշիվը կարող է դառնալ ոչ լիարժեք դատարանի կամ նախադեպեր սահմանող այլ անկախ մարմինների հետագա որոշումների հիման վրա: Այս դեպքում վերադաս մարմինը պետք է հաշվի առնի փոխհատուցման անհրաժեշտու-

թյունը:

9. Խորհրդակցությունը տեղական կառավարման մակարդակում

Տեղական մակարդակում խորհրդակցությունը պետք է իրականացվի նոր լիազորությունների համար փոխհատուցման չափի և տրամադրման հետ կապված բոլոր հարցերով:

Խորհրդակցությունը պետք է իրականացվի հնարավորինս վաղ, նոր լիազորության մշակման փուլում և տեղական կառավարման մարմնին պետք է տրվի ողջամիտ ժամանակ՝ փաստացի ծախսերը լիարժեք քննարկելու համար:

Պառլամենտին ներկայացվող ցանկացած առաջարկ տեղական մարմինների նոր լիազորության վերաբերյալ պետք է ներառի տեղեկատվություն տեղական կառավարման կողմի հետ խորհրդակցությունների վերաբերյալ:

Նախարարների կոմիտեի թիվ Rec(2005)1 հանձնարարականը անդամ պետություններին Տեղական և տարածքային մարմինների ֆինանսական ռեսուրսների վերաբերյալ (ընդունվել է Նախարարների կոմիտեի կողմից 2005թ. հունվարի 19 –ին)¹⁶

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Նախարարների կոմիտեն ընդունել է թիվ **Rec(2005)1 հանձնարարականը** Տեղական և տարածքային մարմինների ֆինանսական ռեսուրսների վերաբերյալ, հաշվի առնելով, որ տեղական ինքնակառավարումը ազդում է ֆինանսական ինքնավարության աստիճանի վրա, և որ տեղի են ունեցել փոփոխություններ Նախարարների կոմիտեի Տեղական հարկման, ֆինանսական համահարթեցման և տեղական մարմիններին տրամադրվող դոտացիաների վերաբերյալ թիվ Rec(2000)14 հանձնարարականի ընդունումից ի վեր, ինչը հիմք է դրանում փոփոխություններ կատարելու համար:

Հանձնարարականն անդամ պետությունների կառավարություններին առաջարկում է.

1. Ապահովել հանրային ֆինանսական ռեսուրսների արդարացի բաշխվածություն կառավարության տարբեր մակարդակների միջև, հաշվի առնելով դրանցից յուրաքանչյուրի համար սահմանված պարտավորությունները և դրանցում կատարված փոփոխությունները, ինչպես նաև տնտեսական հանգամանքները,

¹⁶ https://search.coe.int/cm/Pages/result_details.aspx?ObjectID=09000016805db09e

2. Երաշխավորել տեղական մարմիններին իրենց ծախսերի ֆինանսավորման այնպիսի համակարգ, որը հիմնված է հետևյալ սկզբունքների վրա.
 - Տեղական մարմինների ռեսուրսները և դրանց բաշխումը պետք է համապատասխանի այն պահանջին, համաձայն որի նրանք պետք է իրենց պարտավորություններն իրականացնեն արդյունավետ կերպով.
 - Տեղական մարմիններն իրավասու են ներպետական տնտեսական քաղաքականության շրջանակներում մոբիլիզացնել իրենց սեփական վերաբերելի ռեսուրսները.
 - Փոխանցումների կայուն չափաբաժինը, և ընդհանուր առմամբ, նրանց սեփական միջոցները չպետք է լինեն նպատակային.
 - Պետական դոտացիաների գումարը պետք է լինի արդար, թափանցիկ և կանխատեսելի.
 - Ֆինանսական համահարթեցման համակարգը պետք է թույլ տա տեղական մարմիններին իրենց քաղաքացիներին տրամադրել ծառայությունների հարաբերականորեն լայն մակարդակ՝ ի պատասխան հարկերի ու տուրքերի հարաբերական մակարդակների.
 - Եթե ազգային տնտեսության քաղաքականությունը պահանջում է, ապա պետք է ձեռնարկվեն միջոցներ տեղական մարմինների ֆինանսավորման համակարգի՝ այդ պահանջներին համապատասխանությունն ապահովելու համար.
3. Անհրաժեշտության դեպքում վերանայել տեղական հարկերի և տեղական մարմիններին տրամադրվող դոտացիաների վերաբերյալ օրենսդրական և վարչական կարգավորումները այնպես, որ խրախուսվի ծառայությունների բարելավումն ու դրանց արդյունավետ մատուցումը, և ֆինանսական համահարթեցման վերաբերյալ օրենսդրական ու վարչական կարգավորումները, որպեսզի ապահովվի մարմինների միջև ներդաշնակությունն ու արդարացիությունը.
4. Ներառել տեղական խորհրդատուներին այս ոլորտում անհրաժեշտ բարեփոխումների քննարկումներում:

Հանձնարարականի Հավելվածը ներառում է Կենտրոնական մարմինների համար ուղեցույցը (որը սահմանում է հասկացությունները, ընդհանուր սկզբունքները, տեղական հարկման ուղեհիշները, ֆինանսական համահարթեցման ուղեհիշները, տեղական մարմիններին տրվող դոտացիաները, այլ ֆինանսական ռեսուրսները, վարկերը) և տեղական ու տարածքային մարմինների համար ուղեցույցը (որը սահմանում է ընդհանուր սկզբունքները, տեղական հարկումը, տուրքերը և վճարները, այլ ռեսուրսները):

**Նախարարների կոմիտեի թիվ Rec(2004)1
հանձնարարականը անդամ պետություններին Տեղական
և տարածքային մակարդակում ֆինանսական և
բյուջետային կառավարման վերաբերյալ
(ընդունվել է Նախարարների կոմիտեի կողմից
2004թ. հունվարի 8 –ին)¹⁷**

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Նախարարների կոմիտեն ընդունել է թիվ **Rec(2004)1 հանձնարարականը** Տեղական և տարածքային մակարդակում ֆինանսական և բյուջետային կառավարման վերաբերյալ, հաշվի առնելով, որ ֆինանսական և բյուջետային կառավարման ընթացակարգերը պետք է կապված լինեն համայնքների և տարածքային մարմինների կարիքների հետ առավել մեծ արդյունավետություն ապահովելու համար, և որ հանրային ծախսերը պետք կատարվեն բաց ձևով ու օրենքին համապատասխան և ֆինանսական ու բյուջետային կառավարման ընթացակարգերն այս առումով մեծ դեր են կատարում:

Հանձնարարականը անդամ պետությունների կառավարություններին առաջարկում է.

1. Տեղական ու տարածքային մակարդակներում ֆինանսական և բյուջետային կառավարման իրենց քաղաքականությունը խարսխել հետևյալ սկզբունքների վրա.
 - Ա. ազգային տնտեսության քաղաքականության մակրո-տնտեսական թիրախների հետ համապատասխանության ապահովում,
 - Բ. տեղական և տարածքային մարմինների ֆինանսական կայունություն սահմանում և ապահովում,
 - Գ. համայնքին մատուցվող ծառայությունների ծախսերի արդյունավետության փնտրտուք,
 - Դ. որոշումների բաց լինելու և հաշվետվողականության ապահովում:
2. ապահովել, որ այս սկզբունքները պահպանվեն համապատասխան միջոցների միջոցով, ներառյալ ներպետական իրավունքի օգտագործումը՝ ըստ անհրաժեշտության տեղական և տարածքային մակարդակներում ֆինանսական և բյուջետային կառավարման կարգավորումները փոփոխելու համար, օգտագործելով սույն հանձնարարականին կից ներկայացված ուղեցույցը:
3. ներգրավել տեղական և տարածքային մարմիններին կամ նրանց ներկայացուցիչներին քննարկումներում և բոլոր այն բարեփոխումներում, որոնք կարող են անհրաժեշտ լինել տեղական և տարած-

¹⁷ https://search.coe.int/cm/Pages/result_details.aspx?ObjectID=09000016805de0df

քային մակարդակում ֆինանսական և բյուջետային կառավարման ոլորտում, և կառավարման տարբեր մակարդակների միջև ֆինանսական հարաբերությունների ոլորտում, մասնավորապես՝ որպես արձագանք սույն հանձնարարականին:

4. թարգմանել սույն հանձնարարականն իրենց պաշտոնական լեզվով (լեզուներով) և տարածել այն իրենց տեղական և տարածքային մարմինների և նրանց միավորումների շրջանում, հրավիրելով նրանց ուշադրությունը Հավելվածի երկրորդ մասում նրանց համար սահմանված ուղենիշների վրա:

Հանձնարարականի Հավելվածը ներառում է Կենտրոնական մարմինների համար ուղենիշներ (առաջին մաս), սահմանելով ընդհանուր սկզբունքները, տեղական և տարածքային մարմինների ֆինանսական ինքնավարության սահմանափակումները, ֆինանսական նախահաշվարկի մեթոդները, ֆինանսական ռիսկի գնահատումն ու կառավարումը, տեղական ընտրովի ներկայացուցիչներն ու աշխատակիցները, հսկողությունը, տեղական մարմինների ֆինանսական դժվարությունների վերականգնումը: Այն ներառում է նաև Տեղական և տարածքային մարմինների համար ուղենիշներ (երկրորդ մաս), սահմանելով ընդհանուր սկզբունքները, տեղեկատվությունը և բաց լինելը, բյուջեի նախապատրաստումը, ֆինանսական ռիսկի գնահատումն ու կառավարումը, բյուջեի հաստատումը, բյուջեի իրականացումը, բյուջետային հաշիվները, հսկողությունը, ֆինանսական դժվարությունները:

**Նախարարների կոմիտեի թիվ Rec(2000)14
հանձնարարականը անդամ պետություններին Տեղական
հարկման, ֆինանսական համահարթեցման և տեղական
մարմիններին տրամադրվող դոտացիաների վերաբերյալ
(ընդունվել է Նախարարների կոմիտեի կողմից
2000թ. սեպտեմբերի 6 –ին)¹⁸**

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Նախարարների կոմիտեն ընդունել է թիվ **Rec(2000)14 հանձնարարականը** Տեղական հարկման, ֆինանսական համահարթեցման և տեղական մարմիններին տրամադրվող դոտացիաների վերաբերյալ, հաշվի առնելով, որ տեղական ինքնակառավարումը ներառում է ֆինանսական ինքնավարության որոշակի մակարդակ, և որ տեղական հարկումը, ֆինանսական համահարթեցումը և պետական դոտացիաները պետք է հարմարեցվեն տեղական համայնքների կարիքներին՝ օպտիմալացնե-

18 https://search.coe.int/cm/Pages/result_details.aspx?ObjectID=09000016804ff8e7

լու համար իրենց մարմինների գործունեության արդյունավետությունը՝ դիտարկելով ներպետական մակարդակում գործող կանոններն ու վարքագծերի կանոնագրքերը:

Հանձնարարականը անդամ պետությունների կառավարություններին առաջարկում է.

1. Ապահովել հանրային ֆինանսական ռեսուրսների արդարացի բաշխվածություն կառավարության տարբեր մակարդակների միջև, հաշվի առնելով դրանցից յուրաքաչյուրի համար սահմանված պարտավորությունները և դրանց զարգացումը:
2. Երաշխավորել տեղական մարմինների համար իրենց ծախսերի ֆինանսավորման այնպիսի համակարգ, որը հիմնված է հետևյալ սկզբունքների վրա.
 - Տեղական մարմինների ռեսուրսները և դրանց բաշխումը պետք է համապատասխանեն իրենց պարտավորություններն արդյունավետ կերպով իրականացնելու կարիքին.
 - Փոխանցումների կայուն չափաբաժինը, և ընդհանուր առմամբ, նրանց սեփական միջոցները չպետք է լինեն նպատակային.
 - Տեղական մարմիններն իրավասու են ներպետական տնտեսական քաղաքականության շրջանակներում մոբիլիզացնել իրենց սեփական վերաբերելի ռեսուրսները. պետք է պահպանել հարկային մակարդակում լուրջ մրցակցության հնարավորությունը, խուսափելով վնասակար հարկային մրցակցությունից.
 - Պետական դոտացիաների գումարը պետք է լինի արդար և կանխատեսելի.
 - Ֆինանսական համահարթեցման համակարգը ամբողջությամբ պետք է համապատասխանի ազգային տնտեսության քաղաքականության սահմանափակումներին:
3. Անհրաժեշտության դեպքում վերանայել տեղական հարկերի, ֆինանսական համահարթեցման և տեղական մարմիններին տրամադրվող դոտացիաների վերաբերյալ օրենսդրական և վարչական կարգավորումները, հաշվի առնելով, ի թիվս այլոց, սույն հանձնարարականին կից ներկայացված ուղենիշները և եղանակները՝ հասնելու համար դոտացիաների արդարացի բաշխմանը և խրախուսելու ծառայությունների բարելավումը ու նրանց արդյունավետ մատուցումը:
4. Ներառել տեղական ընտրովի ներկայացուցիչներին այս ոլորտում ձեռնարկվող բարեփոխումների և այդպիսի բարեփոխումների իրականացման մեխանիզմների վերաբերյալ քննարկումներում:

Հանձնարարականի Հավելվածում ներկայացված են Տեղական հարկման, ֆինանսական համահարթեցման և տեղական մարմիններին

րի տրամադրվող դոտացիաների վերաբերյալ ուղենիշները: Տեղական հարկման վերաբերյալ ուղենիշները սահմանում են հարկային եկամուտների մակարդակը և տեղական հարկման կառուցվածքը: Ֆինանսական համահարթեցման վերաբերյալ ուղենիշները սահմանում են համահարթեցման նկատառումներով ծախսային կարիքների նախահաշիվների կազմման մեթոդները և ֆինանսական համահարթեցման մեխանիզմները: Տեղական մարմիններին տրամադրվող դոտացիաների վերաբերյալ ուղենիշները սահմանում են ընդհանուր դոտացիաները և հատուկ դոտացիաները:

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԵՎ ԱՆԴՐՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

**Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2007)5
հանձնարարականը անդամ պետություններին Հարավ-
արևելյան Եվրոպայում անդրսահմանային
համագործակցության համաձայնագրերի կնքման
վերաբերյալ (ընդունվել է Նախարարների կոմիտեի
կողմից 2007թ. հունվարի 31 -ին)¹⁹**

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Նախարարների կոմիտեն ընդունել է թիվ CM/Rec(2007)5 հանձնարարականը Հարավ-արևելյան Եվրոպայում անդրսահմանային համագործակցության համաձայնագրերի կնքման վերաբերյալ, հաշվի առնելով, որ հարևան երկրների միջև լավ հարաբերությունները հիմք են հանդիսանում առավել ազատ և հանդուրժող Եվրոպայի համար, որը միավորող ժողովրդավարական կայունության բանալին է:

Հանձնարարականը խրախուսում է անդամ պետություններին կնքել բազմակողմ համաձայնագրեր փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հատուկ հարցերի վերաբերյալ, որոնք հասցեագրում են իրենց ժողովուրդների և համայնքների նկատառումները, և առաջարկում է անդամ պետություններին քննարկել նոր բազմակողմ համաձայնագրերի ընդունումը անդրազգային համագործակցության ոլորտում, ըստ անհրաժեշտության հիմնվելով սույն հանձնարարականի հավելվածում ներկայացված համաձայնագրի տիպորինակի վրա:

Հանձնարարականի 1-ին հավելվածում տեղ է գտել Սահմանային տարածքներում աղետների դեպքում Հարավ-արևելյան Եվրոպայի պե-

¹⁹ https://search.coe.int/cm/Pages/result_details.aspx?ObjectID=09000016805d6bb2

տուփայունների միջև փոխօգնության մասին համաձայնագրի տիպորինակը, իսկ 2-րդ հավելվածում տեղ է գտել Հարավ-արևելյան Եվրոպայի պետությունների միջև Տեղական սահմանային երթևեկության վերաբերյալ համաձայնագրի տիպորինակը:

**Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2005)2
հանձնարարականը անդամ պետություններին
տարածաշրջանների կամ տարածքային մարմինների
միջև անդրսահմանային և միջտարածքային
համագործակցության լավագույն պրակտիկայի և դրա
խոչընդոտների նվազեցման վերաբերյալ
(ընդունվել է Նախարարների կոմիտեի կողմից
2005թ. հունվարի 19 –ին)²⁰**

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Նախարարների կոմիտեն ընդունել է թիվ CM/Rec(2005)2 հանձնարարականը տարածաշրջանների կամ տարածքային մարմինների միջև անդրսահմանային և միջտարածքային համագործակցության լավագույն պրակտիկայի և դրա խոչընդոտների նվազեցման վերաբերյալ, հաշվի առնելով, որ լավագույն պրակտիկայի ընդհանրացումն ու խոչընդոտների հաղթահարումը կարող է նպաստել Մադրիդի կոնվենցիայի և դրա արձանագրությունների վավերացմանը դրանք չվավերացրած պետությունների կողմից և հնարավորություն տալ կողմերին լիարժեքորեն կիրառել դրանց դրույթները, ինչպես նաև այն, որ անդրսահմանային և միջտարածքային համագործակցության խոչընդոտների հաղթահարումը կարող է նաև նպաստել նոր իրավական փաստաթղթերի և միջպետական համաձայնագրերի պատրաստմանը, հաշվի առնելով այդ համագործակցության զարգացումները:

Հանձնարարականը անդամ պետությունների կառավարություններին առաջարկում է.

1. Սահմանել համապատասխան իրավական կարգավորումներ տարածաշրջանների կամ տարածքային մարմինների՝ անդրսահմանային և/կամ միջտարածքային համագործակցությանն ուղղված գործողությունների համար, դրանք համապատասխանեցնելով Մադրիդի կոնվենցիայի և դրա արձանագրությունների սկզբունքներին.
2. Քննարկել Կոնվենցիայի և դրա արձանագրությունների վավերաց-

²⁰ https://search.coe.int/cm/Pages/result_details.aspx?ObjectID=09000016805db0a8

ման հարցը.

3. Ձեռնարկել սույն հանձնարարականի հավելվածում առաջարկվող միջոցները, դրանք ըստ անհրաժեշտության հարմարեցնելով կոնկրետ իրավիճակների, նպատակ ունենալով բարելավել անդրսահմանային և միջտարածքային համագործակցությունը և նվազեցնել իրենց տարածաշրջանների կամ տարածքային մարմինների կողմից իրենց անդրսահմանային և/կամ միջտարածքային համագործակցությանն ուղղված գործողություններում բացահայտված խոչընդոտները.
4. Ներգրավել տարածաշրջաններին և ներպետական օրենդությամբ համապատասխան լիազորություններ ունեցող մարմիններին սույն հանձնարարականի հավելվածում առաջարկվող միջոցների նախապատրաստման և իրականացման գործընթացում.
5. Շարունակել երկխոսությունն ու համագործակցությունը Տեղական և տարածքային ժողովրդավարության հարցերով ղեկավար կոմիտեի (CDLR) և Անդրսահմանային համագործակցության հարցերով ղեկավար կոմիտեի (LR-CT) շրջանակներում, նպատակ ունենալով ամրապնդել իրավական հիմքը և պրակտիկ հանձնառությունները անդրսահմանային և/կամ միջտարածքային համագործակցության համար:

Սույն հանձնարարականի Հավելվածում շարադրված են անդրսահմանային և միջտարածքային համագործակցության իրավական կարգավորման հետ կապված միջոցները, տեղեկատվության, վերապատրաստման և ինստիտուցիոնալ երկխոսության վերաբերյալ միջոցները և անդրսահմանային զարգացման վերաբերյալ միջոցները:

Նախարարների կոմիտեի թիվ Rec(2003)2 հանձնարարականը անդամ պետություններին Անբարենպաստ իրավիճակում գտնվող քաղաքային տարածքներում հարևան ծառայությունների վերաբերյալ (ընդունվել է Նախարարների կոմիտեի կողմից 2003թ. փետրվարի 13 –ին)²¹

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Նախարարների կոմիտեն ընդունել է թիվ Rec(2003)2 հանձնարարականը Անբարենպաստ իրավիճակում գտնվող քաղաքային տարածքներում հարևան ծառայությունների վերաբերյալ, հաշվի առնելով, որ հավասարակշռված և ներդաշնակ քաղաքային միջավայրը էական է դրա

21 https://search.coe.int/cm/Pages/result_details.aspx?ObjectID=09000016805e0c0b

բնակիչների կյանքի որակի, սոցիալ տնտեսական ու մշակութային ինտեգրացիայի համար, և հարգանքի, սոլիդարության ու քաղաքացիական խաղաղության վրա հիմնված փոխադարձ հարաբերությունների համար, և այն, որ հանրային մարմինները, մասնավորապես, տեղական մարմինները նշանակալի դեր են կատարում անբարենպաստ իրավիճակում գտնվող քաղաքային տարածքներում ապրելու ներդաշնակ պայմաններ ստեղծելու կամ դրանք վերականգնելու գործում:

Հանձնարարականը անդամ պետությունների կառավարություններին առաջարկում է.

1. Նպաստել այն միջոցներին, որոնք կոչված են ապահովելու, որ հարևան ծառայությունները անբարենպաստ իրավիճակում գտնվող քաղաքային տարածքներում համապատասխանեն այն չափանիշներին, որոնք ընդհանուր առմամբ սահմանված են քաղաքացիներին առաջարկվող ծառայությունների համար, և իրենց ձևով ու որակով հարմարեցվեն համապատասխան հարևանության հատուկ կարիքներին.
2. Հասնել այդ ծառայությունների առավել ծախսարդյունավետ մատուցմանը, ներառյալ ընդունելով այնպիսի լուծումներ, ինչպիսիք են՝ ծառայությունների մատուցումը մեկ վայրում կամ ծառայության մատուցումը մեկ կենտրոնի կողմից կազմակերպելու մոտեցման մշակումը, նպատակ ունենալով նվազեցնել մոտ ծառայությունների համեմատ խիստ բարձր լինելու ֆինանսական բեռի ռիսկը.
3. Հաշվի առնել սույն հանձնարարականի հավելվածում ներկայացված ուղենիշները իրենց քաղաքականությունները և օրենսդրությունը մշակելիս, նպատակ ունենալով բարելավել հանրային հարևան ծառայությունների մատուցումը անբարենպաստ իրավիճակում գտնվող քաղաքային տարածքներում որպես քաղաքային սեգրեգացիայի դեմ պայքարի միջոց.
4. Միավորել տեղական մարմիններին և այլ հանրային ծառայություններ մատուցողներին՝ հարևան ծառայությունների մատուցման միջոցով քաղաքային սեգրեգացիայի դեմ պայքարին ուղղված ազգային քաղաքականությունների սահմանման, իրականացման և հետագա արձագանքի հավաքագրման գործընթացում.
5. Ձեռնարկել համապատասխան քաղաքականությունների հետ կապված, օրենսդրական և ֆինանսական միջոցներ՝ տեղական մարմիններին անբարենպաստ իրավիճակում գտնվող քաղաքային տարածքների կարիքներին համապատասխան հարևան ծառայությունների ստեղծման ու հարմարեցմանն ուղղված իրենց ջանքերում աջակցելու համար, հարգելով տեղական մարմինների նախաձեռնությունները, իրավասությունը և որոշումների կայացման լիազորությունները.

6. Ապահովել այս հանձնարարականի և դրա հավելվածի թարգմանությունը իրենց պաշտոնական լեզվով (լեզուներով) և տարածել դրանք տեղական մարմինների և հանրության շրջանում համապատասխան միջոցներով (օրինակ՝ կայքերի միջոցով)։
7. Նախաձեռնել երկխոսություն տեղական մարմինների և այլ հանրային ծառայություններ մատուցողների միջև իրենց երկրներում, նպատակ ունենալով իրականացնել համատեղ ծրագրեր՝ քաղաքային անհավասարությունները և սեգրեգացիան նվազեցնելու և հավելվածում ներկայացված ուղենիշները հաշվի առնելու նպատակով։

Հանձնարարականի հավելվածը ներկայացնում է անբարենպաստ իրավիճակում գտնվող քաղաքային տարածքներում հարևան ծառայությունների մասին ուղենիշներ, որտեղ շարադրված են թիրախային տարածքների ավելի լավ սահմանազատումը, ծառայությունների բարեփոխումը՝ դրանք մարդկանց, և ոչ խնդիրների համար պատասխանատվություն ստանձնող ծառայություն դարձնելու նպատակով, ծառայությունների բարեփոխումը՝ գլոբալ, ինտեգրված, անդրսեկտորային և բազմամյա մոտեցման հիման վրա, հատուկ կարիքների արձագանքը, տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման կոնսոլիդացիան և խրախուսումը, արդյունավետ գնահատման համակարգերի ներդրումը։

ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԼԱՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈՒՋՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ԼԱՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 12 ՍԿՋՐՈՒՆՔՆԵՐԸ²²

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Նորարարության և լավ կառավարման ռազմավարությունը հաստատվել է Տեղական և տարածքային իշխանությունների համար պատասխանատու եվրոպական նախարարների համաժողովի կողմից իր 15-րդ նստաշրջանում, որը տեղի է ունեցել 2007թ. հոկտեմբերի 15-16-ը Իսպանիայի Վալենսիա քաղաքում։ 2008թ. մարտին այն ընդունվել է Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի կողմից և հաստատվել Տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսի կողմից թիվ 239 (2007) բանաձևով։

Նորարարության և լավ կառավարման ռազմավարության նպատակն է մոբիլիզացնել և խրախուսել շահահունների կողմից ազգային և տեղա-

22 <https://www.coe.int/en/web/good-governance/12-principles-and-elope> (ոչ պաշտոնական թարգմանություն)

կան մակարդակում գործողությունների իրականացումն այնպես, որ եվրոպական բոլոր երկրների քաղաքացիները օգուտ ստանան լավ ժողովրդավարական կառավարումից, հաստատուն կերպով բարելավելով տեղական հանրային ծառայությունների որակը, բնակչության ներգրավումը և այն քաղաքականությունները, որոնք բավարարում են նրանց լեգիտիմ ակնկալիքները:

Այս նպատակի իրականացման համար Նորարարության և լավ կառավարման ռազմավարությունն առաջադրում է հետևյալ խնդիրները.

1. Քաղաքացիները պետք է լինեն բոլոր ժողովրդավարական ինստիտուտների և գործընթացների կենտրոնում.
2. Տեղական մարմինները պետք է մշտապես բարելավեն իրենց կառավարումը՝ Լավ կառավարման 12 սկզբունքներին համապատասխան,
3. Անդամ պետությունները պետք է ստեղծեն և պահպանեն ինստիտուցիոնալ նախադրյալներ տեղական կառավարման բարելավման համար, Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայով ստանձնված պարտավորությունների և Եվրոպայի խորհրդի այլ ստանդարտների հիման վրա:

Նորարարության և լավ կառավարման ռազմավարությունը, հաշվի առնելով Եվրոպայի խորհրդում և այլ միջազգային կազմակերպություններում լավ կառավարման ուղղությամբ կատարված աշխատանքը, փորձն ու արդյունքները, և մասնավորապես Եվրոպայի խորհրդի սեփական ձեռքբերումները ժողովրդավարության, մարդու իրավունքների և իրավունքի գերակայության ոլորտներում, սահմանում է Լավ կառավարման հետևյալ 12 սկզբունքները.

Սկզբունք 1.

Ընտրությունների արդար իրականացում, ներկայացուցչություն և մասնակցություն

- Տեղական ընտրությունները պետք է իրականացվեն ազատ և արդար, միջազգային չափանիշներին և ներպետական օրենսդրությանը համապատասխան, և առանց որևէ խարդախության:
- Քաղաքացիները հանրային գործունեության կենտրոնն են և տեղական մակարդակում նրանք հստակ սահմանված ձևերի միջոցով պետք է ընդգրկված լինեն հանրային կյանքում:
- Բոլոր տղամարդիկ և կանայք պետք է հնարավորություն ունենան կարծիք հայտնելու որոշումների կայացման գործընթացում՝ ուղղակիորեն կամ նրանց շահերը ներկայացնող լեգիտիմ միջնորդ մարմինների միջոցով: Այսպիսի լայն մասնակցությունը հիմնված է արտահայտվելու, հանրահավաքների և միավորվելու ազատությունների վրա:
- Բոլորի, ներառյալ քիչ արտոնյալ և առավել խոցելի անձանց կարծիք-

ները պետք է լավ են և հաշվի առնվեն որոշումներ կայացնելիս, ներառյալ ռեսուրսների բաշխման միջոցով:

- Մշտապես պետք է անկողմնակալ ջանքեր գործադրվեն տարբեր լեզուներում ակնկալիքների միջև միջնորդ հանդիսանալու և ողջ համայնքի լավագույն շահերի շուրջ լայն փոխհամաձայնության հասնելու ու դրա միջոցների վերաբերյալ:
- Որոշումները պետք է կայացվեն մեծամասնության կամքի համաձայն, սակայն փոքրամասնություն կազմող անձանց իրավունքներն ու ազատությունները պետք է հարգվեն:

Սկզբունք 2.

Արձագանքելու պատրաստակամություն

- Նպատակները, կանոնները, կառուցվածքները և ընթացակարգերը պետք է հարմարեցվեն քաղաքացիների լեզուներում ակնկալիքներին և կարիքներին:
- Հանրային ծառայությունները պետք է մատուցվեն և բողոքներին ու դիմումներին պետք է տրվի պատշաճ պատասխան ողջամիտ ժամկետում:

Սկզբունք 3.

Նպատակայնություն և արդյունավետություն

- Արդյունքները համապատասխանում են նախապես համաձայնեցված նպատակներին.
- Առկա ռեսուրսների շրջանակներում իրականացվում է առավելագույն հնարավորը.
- Իրականացման կառավարման համակարգերը հնարավարություն են տալիս գնահատել և ընդլայնել ծառայությունների նպատակայնությունն ու արդյունավետությունը.
- Աուդիտներն իրականացվում են կանոնավոր կերպով՝ գործունեության արդյունավետությունը գնահատելու և բարելավելու համար.

Սկզբունք 4.

Բաց և թափանցիկ գործունեություն

- Որոշումները կայացվում և իրականացվում են կանոնների և կարգավորումների համաձայն,
- Օրենքով սահմանված կարգով գաղտնի չհամարվող ողջ տեղեկատվությունը հասանելի է հանրությանը (օրինակ՝ մասնավոր կյանքի պաշտպանության կամ գնումների ընթացակարգերի արդարացիությունը ապահովելու նպատակով)
- Որոշումների վերաբերյալ տեղեկատվությունը, քաղաքականությունների իրականացումը և արդյունքները հասանելի են հանրությանը այնպես, որ հնարավոր լինի արդյունավետ կերպով հետևել և նպաս-

տել տեղական մարմնի աշխատանքին:

Սկզբունք 5.

Իրավունքի գերակայություն

- Տեղական մարմինները պետք է հետևեն օրենքներին ու դատական ակտերին:
- Կանոններն ու կարգավորումներն ընդունվում են օրենքով սահմանված ընթացակարգերի համաձայն և իրականացվում են անկողմնակալորեն:

Սկզբունք 6.

Էթիկական վարքագիծ

- Հանրային բարիքը վեր է անհատական շահերից.
- Գոյություն ունեն արդյունավետ միջոցներ՝ կոռուպցիայի բոլոր ձևերի կանխարգելման և դրանց դեմ պայքարելու համար.
- Շահերի բախումները հայտարարագրվում են ճիշտ ժամանակին և ընդգրկված անձինք պետք է գերծ մնան համապատասխան որոշումներ կայացնելու գործընթացին մասնակցելուց:

Սկզբունք 7.

Իրավասություն և կարողություն

- Կառավարում իրականացնող անձանց պրոֆեսիոնալ հմտությունները շարունակաբար պետք է պահպանվեն և կատարելագործվեն՝ նրանց ներդրումն ու ազդեցությունը բարելավելու համար.
- Հանրային ծառայողները շահագրգռված են շարունակաբար բարելավելու իրենց գործունեության արդյունավետությունը.
- Հմտությունները կարողության վերածելու և ավելի լավ արդյունքներ արձանագրելու համար ստեղծվում և օգտագործվում են պրակտիկ մեթոդներ ու ընթացակարգեր.

Սկզբունք 8.

Նորարարություն և փոփոխություններ կատարելուն միտված բաց գործելակերպ

- Նոր և արդյունավետ լուծումներ են փնտրվում և ծառայությունների մատուցման ժամանակակից մեթոդներից օգուտներ են քաղվում.
- Առկա է փորձարարական և փորձնական ծրագրեր իրականացնելու և ուրիշների փորձից սովորելու պատրաստականություն
- Փոփոխությունների իրականացման նպաստավոր միջավայր է ստեղծված՝ նպատակ ունենալով հասնել ավելի լավ արդյունքների:

Սկզբունք 9.

Կայունություն և երկարաժամկետ կողմնորոշում

- Ընթացիկ քաղաքականություններում հաշվի են առնվում ապագա սերունդների կարիքները,
- Համայնքի կայունությունը մշտապես հաշվի է առնվում: Որոշումները ձգտում են արտացոլել բոլոր ծախսերը և չփոխանցել բնապահպանական, կառուցվածքային, ֆինանսական, տնտեսական կամ սոցիալական խնդիրներն ու հակասությունները ապագա սերունդներին.
- Առկա է լայն և երկարաժամկետ հեռանկար համայնքի ապագայի վերաբերյալ՝ այդպիսի զարգացման համար անհրաժեշտ կարիքների առումով.
- Առկա է այդ հեռանկարի համար հիմք հանդիսացող պատմական, մշակութային և սոցիալական բարդությունների վերաբերյալ ընկալում.

Սկզբունք 10.

Որակյալ ֆինանսական կառավարում

- Գանձումները չեն գերազանցում մատուցված ծառայությունների ծախսերը և անհամաչափորեն չեն նվազեցնում պահանջարկը, մասնավորապես, կարևոր հանրային ծառայությունների դեպքում
- Ֆինանսական կառավարման ընթացքում, ներառյալ պայմանագրեր կնքելիս և վարկային միջոցներ օգտագործելիս, ռեսուրսների, եկամուտների և պահուստների վերաբերյալ նախահաշիվներ կազմելիս և բացառիկ եկամուտներ օգտագործելիս պահպանվում է շրջահայացությունը.
- Բազմամյա բյուջետային ծրագրերը կազմվում են հանրության հետ խորհրդակցելով.
- Ռիսկերը պատշաճ կերպով գնահատվում և կառավարվում են, ներառյալ հաշիվներ միավորելիս և, հանրային ու մասնավոր սեկտորների գործընկերության դեպքում ռիսկերը իրատեսորեն բաժանելու միջոցով.
- Տեղական մարմինը մասնակցում է միջհամայնքային սոլիդարության, օգուտների ու բեռի արդարացի բաշխման և ռիսկերի նվազեցման վերաբերյալ հանձնառություններին (համահարթեցման համակարգեր, միջհամայնքային համագործակցություն, ռիսկերի փոխադարձություն և այլն):

Սկզբունք 11.

Մարդու իրավունքներ, մշակութային բազմազանություն և սոցիալական համախմբվածություն

- Տեղական մարմնի ազդեցության ոլորտում մարդու իրավունքները հարգվում են, պաշտպանվում և իրականացվում են և պայքար է իրա-

կանացվում ցանկացած հիմքով խտրականության դեմ.

- Մշակութային բազմազանությունը դիտարկվում է որպես արժեք և շարունակական ջանքեր են գործադրվում ապահովելու համար, որ բոլորն ունենան իրենց տեղը համայնքում, նույնացվեն դրա հետ և իրենց բացառված չզգան.
- Պետք է նպաստել սոցիալական համախմբվածությանը և անբարենպաստ իրավիճակում գտնվող տարածքների ինտեգրացիային,
- Առաջնային ծառայությունների մատչելիությունը ապահովված է, մասնավորապես բնակչության առավել խոցելի խմբերի համար:

Սկզբունք 12.

Հաշվետվողականություն

- Բոլոր որոշում կայացնողները՝ կոլեկտիվ կամ միանձնյա, պատասխանատու են իրենց կայացրած որոշումների համար.
- Որոշումների մասին տեղեկացվում է, տրվում են բացատրություններ և կարող են կիրառվել սանկցիաներ.
- Առկա են արդյունավետ միջոցներ ոչ բարեխիղճ կառավարման դեմ և տեղական մարմինների բոլոր այն գործողությունների դեմ, որոնք խախտում են քաղաքացիական իրավունքները:

ՄԱՍ 2.

ՏԵՂԱԿԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԻՔՆԵՐ

Տեղական կառավարման բարեփոխումների փորձագիտական կենտրոնի առաջնահերթություններից մեկը հանդիսանում է կարողությունների զարգացմանն ուղղված գործիքների մշակումն ու խթանումը: Այս գործիքները բխում են եվրոպական լավագույն պրակտիկայից և հնարավորություն են տալիս ամրապնդել և գնահատել տեղական մարմինների կարողությունները տարբեր ոլորտներում: Գործիքները պարբերաբար թարմացվում են:

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ

**Քաղաքացիական մասնակցության գործիքակազմ (CLEAR)
(ընդունվել է 2008թ. նոյեմբերի 28-ին Տեղական և
տարածքային ժողովրդավարության եվրոպական
կոմիտեի (CDLR) կողմից)²³**

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Այս գործիքը մշակվել է աջակցելու համար տեղական մարմինների ջանքերին՝ տրամադրելով տեղական մակարդակում քաղաքացիական մասնակցության համար ինքնագնահատման գործիք, որն օգնում է մշակել քաղաքականությունների մակարդակում արձագանքի միջոցներ, որոնք առավել տեղին են կոնկրետ իրավիճակների համար:

Քաղաքացիական մասնակցության գործիքը միտված է աջակցել տեղական մարմիններին և տեղական այլ կազմակերպություններին ու խմբերին՝ առավել լավ ընկալելու հանրային մասնակցությունը տեղերում: Այն հանդիսանում է ախտորոշիչ գործիք, որն օգնում է վեր հանել մասնակցության ուժեղ կողմերն ու խնդիրները, որից հետո կարող են մշակվել հանրային մասնակցությունն ընդլայնող համակողմանի ռազմավարություններ՝ խոչընդոտները հաղթահարելու համար: Համայնքային կարողությունը կամ քաղաքացիության զգացողության ձևավորումն այնպիսի մարտահրավերներ են, որոնց հաղթահարումը քաղաքականություն մշակողների համար այնքան էլ հեշտ չէ:

Քաղաքացիական մասնակցության գործիքի կարգավորումները

23 <https://rm.coe.int/168074701b>

ցույց են տալիս, որ տեղական մասնակցության բարելավումը հնարավոր է. այն վեր է հանում բոլոր հիմնական գործոնները, որոնք բարձրացնում են մասնակցությունը և կարող են կրել քաղաքականություն մշակողների ազդեցությունը: Տեղական մարմինները կարող են ամրապնդել քաղաքացիական մասնակցությունը: Դրանք կարող են ամրապնդել համայնքի կյանքն ու միասնականությունը, աջակցել սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանը և քաղաքացիների հզորացմանը՝ մասնակցելու խթանելու համար: Քաղաքացիական մասնակցության գործիքն իր հարցաթերթիկի հետ մեկտեղ օգնում է վերլուծել մասնակցության տարբեր ուղղությունները:

Այս փաստաթղթի առաջին մասը բովանդակում է Քաղաքացիական մասնակցության ինքնազանահատման գործիքը, իսկ երկրորդ մասը ներկայացնում է այդ գործիքն օգտագործողների ուղեցույցը, որը ցույց է տալիս, թե ինչպես տվյալ գործիքը կարող է օգտագործվել մասնակցությունը վերլուծելու համար և բացատրում է, թե ինչպես պետք է օգտագործել Քաղաքացիական մասնակցության գործիքը:

Քաղաքացիական մասնակցության ինքնազանահատման գործիքում ներկայացված են քաղաքացիական մասնակցության վրա ազդող հինգ գործոնները: Մասնակցությունն առավել հաջողված է, եթե քաղաքացիները.

- **կարող են մասնակցել**, այսինքն՝ ունեն մասնակցության ռեսուրսներ, հմտություններ և գիտելիքներ,
- **ցանկանում են մասնակցել**, այսինքն՝ ունեն կապվածության զգացողություն, որն ամրապնդում է մասնակցությունը,
- **հնարավորություն ունեն մասնակցելու**, այսինքն՝ ապահովված են մասնակցության հնարավորությամբ,
- **հարցված են**, այսինքն՝ ներգրավված են պետական մարմինների կամ կամավորական խմբերի կողմից,
- **ստանում են արձագանք**, այսինքն՝ տեսնում են ապացույցներ, որ իրենց տեսակետները հաշվի են առնվում:

Քաղաքացիական մասնակցության վերլուծական գործիքն օգնում է վերլուծել այս հինգ գործոնները կոնկրետ համայնքում՝ մասնակցության բարելավմանն ուղղված կոնկրետ քաղաքականությունների կատարելագործմանը նպաստելու համար: Սկսելով քաղաքացիական մասնակցությունը որոշող հինգ գործոնների վերլուծությունից, այն վեր է հանում այն հիմնական փոփոխությունները, որոնք կարող են չափվել և վերլուծության ենթարկվել: Վերլուծությունից հետո այն մշակում է քաղաքականության պատասխաններ՝ հիմք ընդունելով առաջարկվող քաղաքականության թիրախները և գործողությունների վերաբերյալ գաղափարները:

Փաստաթղթի 1-ին մասում աղյուսակի տեսքով ներկայացված է նաև թվարկված հինգ գործոնների ընդհանուր նկարագիրը՝ վերլուծություն-

նից մինչև քաղաքականության մակարդակում արձագանք և քաղաքացիական մասնակցության բարելավում, ինչպես նաև հարցաթերթիկ, որը հանդիսանում է Քաղաքացիական մասնակցության վերլուծական գործիքի հիմնարար բաղադրիչը և առաջարկում է այն հարցերը, որոնք պետք է տրվեն գործիքն օգտագործելիս:

Փաստաթղթի 2-րդ մասում ներկայացված է Քաղաքացիական մասնակցության վերլուծական գործիքի կիրառման ուղեցույցը, որը ցույց է տալիս, թե ինչպես պետք է կիրառել Քաղաքացիական մասնակցության վերլուծական գործիքը: CLEAR վերլուծական գործիքն օգտագործելու բացառիկ ձև առկա չէ: Դրա առավելությունն այն է, որ այն ճկուն է: Սա կիրառելի է ոչ միայն գործիքի, այլև դրա կիրառման մեթոդաբանության առումով: Ինքնագնահատումը կարող է տեղի ունենալ տարբեր կերպ, կախված համատեքստից և հստակ որոշված նպատակից:

Փաստաթղթի երկրորդ մասը նկարագրում է գործիքի օգտագործումն ու գնահատումը, այդ գործընթացը բաժանելով հինգ հիմնական փուլի.

1. Նախքան մեկնարկը՝ հստակեցնել նպատակները և Քաղաքացիական մասնակցության վերլուծական գործիքի դերը,
2. Նախապատրաստում՝ վեր հանել ռեսուրսներն ու պլանավորել,
3. Քաղաքացիական մասնակցության վերլուծական գործիքի օգտագործում՝ բազմակողմանի գնահատում,
4. Արդյունքների վերլուծություն՝ ուժեղ և թույլ կողմերի բացահայտում,
5. Քաղաքացիական մասնակցության վերլուծության հիման վրա քաղաքականության լուծումների մշակում:

Այս փուլերից յուրաքանչյուրի մանրամասն նկարագրությունը ներառում է նաև աղյուսակի տեսքով հիմնական տեղեկատվություն՝ տեղական հանգամանքների նկատմամբ վերոթվարկյալ հինգ գործոններից յուրաքանչյուրի հարմարեցման վերաբերյալ և օգտագործված եզրույթների բացատրական բառարան:

Գործիքակազմ
Քաղաքացիական մասնակցությունը
որոշումների կայացմանը
(ընդունվել է 2018թ. մարտին Տեղական և տարածքային
ժողովրդավարության եվրոպական կոմիտեի
(CDLR) կողմից)²⁴

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Գործիքակազմը միտված է համատեքստային դարձնելու քաղաքացիական մասնակցության դերը նպատակային և արդյունավետ տեղական կառավարման գործում, ինչպես սահմանված է Եվրոպայի խորհրդի չափանիշներով և կարգավորումներով, աջակցելու տեղական մարմիններին՝ իրենց համայնքային ընթացիկ իրավիճակը և որոշումների կայացմանը յուրաքանչյուր շահառուի իրական ներգրավման պոտենցիալը հասկանալու հարցում, և ուղղորդելու տեղական մարմիններին ընտրելու հատուկ ռազմավարություններ և գործողություններ ներգրավման տարբեր մակարդակների ու որոշումների կայացման գործընթացի տարբեր փուլերի համար:

Այս գործիքը բաղկացած է երեք բաժնից.

1. Եվրոպայի խորհրդի՝ քաղաքացիական մասնակցության սկզբունքները սահմանող հիմնական իրավակարգավորումների հավաքածու.
2. Կիրառական ցուցումներ գործիքն օգտագործելու և ընդհանուր համայնքում մասնակցության հակվածությունը հասկանալու համար, ինչպես նաև կոնկրետ հարցով մասնակցային գործընթացում յուրաքանչյուր շահառուի ներգրավման ներուժի մանրամասն վերլուծության համար.
3. Տարբեր շահառուների մասնակցության գործընթացներն ակտիվացնելուն և մասնակցության մակարդակը բարձրացնելուն միտված ռազմավարությունների նկարագիր, որը հիմնված է նրանց ներգրավման պոտենցիալի գնահատման վրա:

Առաջին բաժինը նպատակ ունի ծանոթացնել քաղաքական որոշումների կայացման գործընթացում քաղաքացիական մասնակցության վերաբերյալ Եվրոպայի խորհրդի ուղենիշներին և կարգավորումներին: Այս գործիքի հիմքում ընկած են Նախարարների կոմիտեի 2001թ. հանձնարարականը անդամ պետություններին Տեղական հանրային կյանքում քաղաքացիական մասնակցության վերաբերյալ, 2008թ. Քաղաքացիական մասնակցության գործիքը (CLEAR), 2015թ. Անդրսահմանային

24 <https://rm.coe.int/civil-participation-in-decision-making-toolkit-/168075c1a5>

կառավարման գործընթացում քաղաքացիական մասնակցության Եվրոպական փորձը և 2016թ. քաղաքացիական մասնակցության ուղենիշները:

Երկրորդ բաժինը ներկայացնում է գործիքը, որը բաղկացած է երկու բաղադրիչից.

1. *Համայնքի գնահատում*, որը Քաղաքացիական մասնակցության գործիքի իրավակարգավորումների հիման վրա վեր է ածվում ինքնագնահատման գործիքի, որի նպատակն է բացահայտել մասնակցության վրա հատուկ ազդեցություն ունեցող, համայնքին ներհատուկ առավել համապատասխան ուղղությունները:
2. *Շահակիրների գնահատում*, որը քարտեզագրում է յուրաքանչյուր շահակրին (հիմնվելով հանրային իշխանությունների համար նրանց համապատասխանության վրա և մասնակցության նրանց սեփական հետաքրքրվածության վրա) որոշումների կայացման գործընթացի ընթացիկ կարգավորումների շրջանակներում:

Առաջին բաղադրիչ

Մասնակցային որոշումների կայացման գործընթացը արդյունավետ կերպով իրականացնելու համար կարևոր է նախ գնահատել համայնքի ընդհանուր վերաբերմունքը մասնակցության վերաբերյալ: Համայնքը ձևավորվում է սոցիալական կապիտալով (բնակչության միջին տարիքը, քաղաքացիական հասարակության ակտիվության մակարդակը, տեղեկատվության հասանելիությունը և այլն), տնտեսական կապիտալով (միջին եկամուտը, ռեսուրսների բաշխումը, զբաղվածության հնարավորությունները և այլն), մարդկային կապիտալով (համայնքի անդամների հմտություններն ու գիտելիքները, որոնք նրանք կարող են օգտագործել կամ տարածել) և քաղաքական կապիտալով (համայնքում քաղաքական ընդգրկվածությունը, որոշումների կայացման գործընթացում համայնքի ընդգրկվածության մակարդակը և այլն): Սրանք այն չորս ուղղություններն են, որոնք պետք է գնահատվեն հանրային մարմնի կողմից՝ իրավիճակի գնահատում իրականացնելու համար: Արդյունավետ մասնակցային գործընթաց սկսելու համար, ըստ էության, կարևոր է հասկանալ, թե այս պարամետրերը կոնկրետ համայնքում ինչպես են ազդում մասնակցության հակվածության վրա: Վերոթվարկյալ բոլոր բաղադրիչներն ըստ ուղղությունների մանրամասն ներկայացված և պարզաբանված են փաստաթղթի այս մասում:

Երկրորդ բաղադրիչ

Ներգրավման վերաբերյալ համայնքի հակվածությունը գնահատելուց հետո, անհրաժեշտ է իրականացնել յուրաքանչյուր շահակրի գնահատում: Այս գործընթացն ընդգրկում է 2 փուլ.

1. Շահակիրների նույնականացում և համակարգում տվյալների բա-

զայում (առաջարկվող համակարգումն առանձնացնում է հետևյալ կատեգորիաները. ինստիտուցիոնալ դերակատարներ, քաղաքացիական հասարակություն, մասնավոր սեկտոր)։

2. Յուրաքանչյուր շահակրի՝ ներգրավվելու կարողության և ցանկության գնահատում (որն առաջարկվում է իրականացնել երկու պարամետրերի հիման վրա. համապատասխանության հետ կապված պարամետրեր և հետաքրքրվածության հետ կապված պարամետրեր, որոնցից յուրաքանչյուրի գնահատումը պետք է իրականացվի սոցիալական կապիտալի, տնտեսական կապիտալի, մարդկային կապիտալի և քաղաքական կապիտալի ուղղություններով)։

Երրորդ բաժնում մանրամասն ներկայացված են հետևյալ ռազմավարությունները.

1. Մասնակցության իրականացման ռազմավարություններ (տեղեկատվություն, խորհրդակցություն, երկխոսություն, գործընկերություն)։
2. Մասնակցության ընդլայնման ռազմավարություններ (տեղեկատվությունից խորհրդատվություն, խորհրդատվությունից երկխոսություն, երկխոսությունից գործընկերություն և գործընկերության ամրապնդում)։

Որոշումների կայացմանը քաղաքացիական մասնակցության աշխատանքային գործիք²⁵

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Այս գործիքի նպատակն է աջակցել տեղական քաղաքականություն մշակողներին՝ մասնակցային գործընթացներում ներգրավվող տեղական շահառուներին վեր հանելու գործում, նպատակ ունենալով նպաստել տեղական որոշումների կայացման գործընթացում քաղաքացիների ներգրավմանը։ Այն հիմնված է երեք քայլերի վրա, որոնք թույլ են տալիս ավտոմատ կերպով գեներացնել շահառուների քարտեզագրումը Excel ձևաչափի փաստաթղթում։

²⁵ [https://www.coe.int/en/web/good-governance/toolkits#{%2225571686%22:\[1\]}](https://www.coe.int/en/web/good-governance/toolkits#{%2225571686%22:[1]})

ԼԱՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Կառավարման գերազանցության եվրոպական հավաստագրում (ELoGE)

Կառավարման գերազանցության եվրոպական հավաստագրումը տրվում է այն տեղական մարմիններին, որոնք արձանագրել են լավ կառավարման ընդհանուր բարձր մակարդակ՝ Տեղական մակարդակում լավ կառավարման 12 սկզբունքներին և համապատասխան ելակետային հենանիշերին համաձայն:

Լավ կառավարման ելակետային հենանիշեր²⁶

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Նորարարության և լավ ժողովրդավարական կառավարման 12 սկզբունքների համար **Ելակետային հենանիշերի** սահմանումը թույլ է տալիս բացահայտել այն տեղական մարմիններին, որոնք առավել մոտ են բոլոր (կամ գրեթե բոլոր) սկզբունքների պահպանմանը և հետևաբար կարող են ստանալ Կառավարման գերազանցության եվրոպական հավաստագրումը (ELoGE –European Label of Governance' Excellence):

Ելակետային հենանիշերը տրամադրում են հետևյալ տեղեկատվությունը.

- Ա. Լավ կառավարման սկզբունքի նկարագրությունը և գործողությունները ցանկը, որոնք պետք է օգնեն տեղական մարմիններին այդ սկզբունքին համապատասխանությունն ապահովելու գործում.
- Բ. Ինքնագնահատման վերաբերյալ բաժին, որտեղ տեղական մարմինները պետք է բացահայտեն տվյալ սկզբունքի հետ կապված իրենց հասունության մակարդակը.
- Գ. Տեղական մարմնի կողմից իրականացված ինքնագնահատմանն ուղեկցող ապացույցներ:

Փաստաթղթում ներկայացված են նաև քաղաքացիների և տեղական ընտրովի ներկայացուցիչների հարցման համար նախատեսված հարցաթերթիկներ, որոնք կազմված են Լավ ժողովրդավարական կառավարման 12 սկզբունքներին համաձայն:

Տեղական մարմինը պետք է ծանոթանա յուրաքանչյուր սկզբունքի վերաբերյալ տրամադրված տեղեկատվությանը, քննարկի տվյալ սկզբունքին համապատասխանությանն աջակցող առկա ապացույցը, իրականացնի գնահատում տվյալ սկզբունքի հետ կապված իր հասու-

26 <https://rm.coe.int/1680746d9f>

նության մակարդակի վերաբերյալ, և արձանագրի այն ապացույցը, որը ցանկանում է ներկայացնել ի աջակցություն իր ինքնագնահատման:

Տեղեկատվական գրքույկ Կառավարման գերազանցության եվրոպական հավաստագրման (ELoGE) վերաբերյալ²⁷

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Սույն տեղեկատվական գրքույկն ամփոփ ներկայացնում է Լավ Ժողովրդավարական կառավարման 12 սկզբունքներն ու դրանց նշանակությունը, ինչպես նաև Կառավարման գերազանցության եվրոպական հավաստագրումը, ելակետային հենանիշերը, տեղական մարմինների կողմից իրականացման ենթակա գործողությունները քայլ առ քայլ ձևաչափով, որոնք միտված են Կառավարման գերազանցության եվրոպական հավաստագրում ստանալու հայտ ներկայացնելուն:

Տեղական մակարդակում լավ կառավարման վերաբերյալ էլեկտրոնային գործիք²⁸

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Այս ծրագիրը նպատակ ունի աջակցել տեղական կառավարման ընթացիկ գործընթացին՝ նպաստելու տեղական ընտրովի ներկայացուցիչների էթիկական վարքագծին ԵԽ տարածքում, և աջակցելու տեղական կառավարությունների բարելավմանն ու մարդկային ռեսուրսների կառավարմանը, հիմնվելով եվրոպական չափանիշների և ելակետային հենանիշերի վրա: Այն նպատակ ունի մշակել Տեղական մակարդակում լավ կառավարման վերաբերյալ էլեկտրոնային գործիք այս ոլորտում Եվրոպայի խորհրդի կողմից կատարված աշխատանքի, մասնավորապես Լավ Ժողովրդավարական կառավարման վերաբերյալ 12 եվրոպական սկզբունքների և կառավարման գերազանցության եվրոպական հավաստագրման հիման վրա:

27 <https://rm.coe.int/12-principles-brochure-final/1680741931>

28 <https://etool.coe.int/login>

ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ ԵՎ ԴԵԿԱՎԱՐՈՒՄ

Գործիքակազմ

Վերապատրաստման կարիքների վերլուծություն և վերապատրաստման ազգային ռազմավարություն (TNA)²⁹

ԱՄՓՈՓԱԳԻՐ

“Վերապատրաստման կարիքների վերլուծություն և ազգային վերապատրաստման ռազմավարություններ” գործիքը մշակվել է տեղական և տարածքային մարմինների համար 2016թ. դեկտեմբերին: Այն ներկայացնում է վերապատրաստման կարիքների գնահատման սկզբունքները, վերապատրաստման կարիքների գնահատման գործընթացում հետազոտության իրականացման հետ կապված հարցերը և վերապատրաստման ազգային ռազմավարությունների սկզբունքները:

Սույն փաստաթղթի առաջին մասում ներկայացված է վերապատրաստման կարիքների գնահատման կարևորությունն ու դերը, վերապատրաստման կարիքների սահմանման ձևերը, վերապատրաստման կարիքների վերլուծությանն ուղղված 4 քայլերը (բացերի վերլուծություն, խնդիրների, պատճառների, դրանց հետևանքների և հիմքի բացահայտում, վերապատրաստման գործողությունների հիմնավորվածության և կազմակերպության համար դրանց կարևորության հիերարխիայի սահմանում, վերապատրաստման շրջանակի և թեմաների ու հնարավոր կազմակերպչական լուծումների նախանշում) և վերապատրաստման կարիքների վերլուծությունը որպես շարունակական գործընթաց:

Փաստաթղթի երկրորդ մասում ներկայացված է հետազոտական ծրագրի իրականացումը, որակական հետազոտական մեթոդները, քանակական հետազոտական մեթոդները, սոցիալական հետազոտության հավաստիությունն ու հիմնավորվածությունը, վերապատրաստման կարիքների վերլուծության հարցաթերթիկի տիպորինակ և անհատական խորքային հարցազրույցների ուղեցույցի տիպորինակ:

Փաստաթղթի երրորդ մասում ներկայացված են վերապատրաստման ազգային ռազմավարությունները տեղական կառավարությունների համար, որը ներառում է վերապատրաստման կարիքների վերլուծության համակարգային կապը վերապատրաստման ազգային ռազմավարության հետ, ռազմավարական պլանավորման մասնակցային մոտեցումը, ռազմավարության մշակման գործընթացի ընթացքը և Վերապատրաստման ազգային ռազմավարության շրջանակը:

29 <https://rm.coe.int/1680746e54>

Գործիքակազմ Մարդկային ռեսուրսների կառավարում (HRM)³⁰

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Տեղական մակարդակում լավ կառավարման համար մարդկային ռեսուրսների ժամանակակից և արդյունավետ կառավարման կարևորությունը հաշվի առնելով, Մարդկային ռեսուրսների կառավարման գործիքը մշակվել, հարմարեցվել և կատարելագործվել է միջկառավարական փոխանակման, փորձի, ուլորտում իրականացված դիտարկումների և պրակտիկայի հիման վրա: Այս գործիքը հիմնականում մշակվել է տեղական մարմինների մարդկային ռեսուրսների պրակտիկ աշխատակիցների, ինչպես նաև տեղական մարմինների բարձրաստիճան կառավարման և տեղական մարմինների ընտրովի անդամների կողմից հանրային ծառայության հետ կապված բարեփոխումներ իրականացնելու և մարդկային ռեսուրսների կառավարումը բարելավելու գործընթացում օգտագործման համար:

Սույն գործիքը նպատակ ունի.

- Աջակցել կազմակերպական ռազմավարությունների և առաջնահերթությունների հետ մարդկային ռեսուրսների կառավարման պրակտիկ գործունեության միջև կապերի ընկալման զարգացմանը.
- Նախանշել մարդկանց արժեքը շեշտադրելու և մարդկային ռեսուրսների կառավարման պրակտիկ գործունեության ձևերը.
- Գնահատել լավ մարդկային ռեսուրսների կառավարման առումով կազմակերպության իրավասությունն ու արդյունավետությունը.
- Հստակեցնել կազմակերպության ներսում բոլոր շահառուների դերերն ու պարտականությունները՝ կապված մարդկային ռեսուրսների կառավարման հետ.
- Հնարավորություն տալ չափել և համեմատել մարդկային ռեսուրսների կառավարման պրակտիկ գործունեության զարգացումը նմանատիպ ինստիտուտների հետ.
- Հնարավոր դարձնել լավ տեղեկացված գործողությունների պլանավորումն ու որոշումների կայացումը՝ հաշվի առնելով ազդեցությունը աշխատակիցների վրա.
- Հնարավորություն ընձեռել տեղական մարմիններին պատասխանատվություն ստանձնելու իրենց մարդկային ռեսուրսների կառավարման գործունեության բարելավման համար:

30 <https://rm.coe.int/1680746cb9>

Մարդկային ռեսուրսների կառավարման գործիքը կազմված է 5 մասից, որոնք ներկայացնում են մարդկային ռեսուրսների կառավարման հիմնական կետերը:

- 1. Առաջին մասում** ներկայացված է մարդկային ռեսուրսների ժամանակակից և արդյունավետ կառավարման կարևորությունը: Այստեղ ընդգծվում է մարդկային ռեսուրսների կառավարման նշանակությունը՝ մարդկային ռեսուրսների կառավարման հիմնական գաղափարների, մոտեցումների և ասպեկտների (ներառյալ մասնագիտական էթիկան) ներկայացման միջոցով, ինչպես նաև ներկայացվում է այս ոլորտի անհրաժեշտությունը տեղական ինքնակառավարման մարմիններում լավ կառավարման գործընթացի բարելավման համար:
- 2. Երկրորդ մասում** ներկայացված և պարզաբանված են մարդկային ռեսուրսների կառավարման ստանդարտ գործիքները, մասնավորապես, անձնակազմի ընտրության, աշխատանքի ընդունման, վերապատրաստման, գնահատման և խթանման գործընթացներում կիրառվող գործիքները և դրանցից յուրաքանչյուրի համար մոդելի ընտրության հիմքերը: Առաջարկվող մոդելները կարող են հարմարեցվել տեղական ինքնակառավարման մարմինների կոնկրետ համատեքստում:
- 3. Երրորդ մասում** ներկայացված են մարդկային ռեսուրսների կառավարման արդյունավետության գնահատման մեխանիզմների և ցուցանիշների կիրառումը, պատասխանելով այնպիսի հարցերին, ինչպիսիք են՝ ինչ է արդյունավետության գնահատումը, ինչու է այն կարևոր, ինչպես սահմանել արդյունավետության գնահատման մեխանիզմներ մարդկային ռեսուրսների կառավարման համար, ինչպես այն չափել և ինչպես կազմել ռազմավարական պլան:
- 4. Չորրորդ մասում** ներկայացված է մարդկային ռեսուրսների կառավարման գենդերային ասպեկտը, որտեղ անդրադարձ է կատարվում կանանց կարիերայի աճի ընդհանուր խոչընդոտներին, գենդերային բաղադրիչի և մարդկային ռեսուրսների կառավարման կապերին:
- 5. Հինգերորդ մասում** ներկայացված են պրակտիկ ծրագրեր մարդկային ռեսուրսների կառավարման բարելավման համար: Այս ծրագրերը հնարավորություն են տալիս գնահատել ընթացիկ մարդկային ռեսուրսների կառավարումը, ծրագիր մշակել թույլ կողմերի բարելավման համար և ուժեղ կողմերի հետ կապված փորձը կիսել մյուսների հետ:

Մարդկային ռեսուրսների կառավարման գործիքը ներառում է նաև հետևյալ 4 հավելվածը.

- 1. Առաջին հավելվածում** ներկայացված են Մարդկային ռեսուրսների կառավարման պրակտիկ օրինակներ և լավագույն պրակտիկա, որտեղ տեղ են գտել այլ եվրոպական պետությունների (Ալբանիա, Սեր-

բիա, Ֆրանսիա, Գերմանիա, Բելգիա, Մեծ Բրիտանիա) տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մշակված և օգտագործված մարդկային ռեսուրսների կառավարման գործիքների կոնկրետ օրինակներ:

2. *Երկրորդ հավելվածում* ներկայացված են տեղական կառավարման մակարդակում աշխատակիցների և ավագանու անդամների համար մարդկային ռեսուրսների ժամանակակից և արդյունավետ կառավարման հիմնական օգուտները:
3. *Երրորդ հավելվածում* ներկայացված են գենդերային մեյնսթրիմինգի պրակտիկ կիրառման հարցերը, հիմնվելով տարբեր երկրներում (Ավստրիա, Ֆրանսիա, Իսպանիա, Շվեյցարիա, Ավստրալիա) առկա կոնկրետ օրինակների վրա:
4. *Չորրորդ հավելվածում* շարադրված է Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ R(2000)10 հանձնարարականը անդամ պետություններին Հանրային ծառայողների վարքագծի կանոնակարգի վերաբերյալ:

Գործիքակազմ Առաջնորդության ակադեմիայի ծրագիր (LAP)³¹

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Առաջնորդության ակադեմիայի ծրագիրը բոլոր մակարդակի հանրային մարմինների համար նախատեսված ինտերակտիվ վերապատրաստման ծրագիր է, որը նպատակ ունի 3 փուլով զարգացնել առաջնորդությունը կազմակերպություններում, առաջնորդությունը ռազմավարության համար և առաջնորդությունը կարողությունների զարգացման համար:

Երեք փուլերից յուրաքանչյուրը բաղկացած է մոդուլներից (ընդհանուր առմամբ՝ 25 մոդուլ), որոնցից յուրաքանչյուրի համար շարադրված են մոդուլի նպատակը, կառուցվածքը, ներկայացվող նյութը, հիմնական հասկացությունները, պրակտիկ առաջադրանքները և անհրաժեշտ հղումների ցանկը:

Գործիքը ներառում է նաև վերապատրաստման մանրամասնեցված ծրագիր և վերապատրաստողների համար նախատեսված ուղեցույց, որտեղ ներկայացված է յուրաքանչյուր մոդուլը վարելու անհրաժեշտ մեթոդաբանությունը:

Առաջնորդության ակադեմիայի ծրագրի վերաբերյալ առկա է նաև

31 <https://www.coe.int/en/web/good-governance/lap>

ամփոփ տեղակատվական գրքույկ³²:

Գործիքակազմ

Տեղական կառավարման պրոֆեսիոնալ զարգացման համար վերապատրաստման ծրագրերի գնահատման և մշտադիտարկման (URSO)³³

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Տեղական կառավարման պրոֆեսիոնալ զարգացման համար վերապատրաստման ծրագրերի գնահատման և մշտադիտարկման գործիքը նպաստում է մարդկային ռեսուրսների կառավարման բարելավմանը, տրամադրելով կոնկրետ գործիքներ և ընթացակարգեր, որոնք պետք է իրականացվեն հանրային ծառայողների վերապատրաստման ծրագրերի գնահատման և մշտադիտարկման շրջանակներում:

Տեղական կառավարման պրոֆեսիոնալ զարգացման համար վերապատրաստման ծրագրերի գնահատման և մշտադիտարկման գործիքը կազմված է երկու հիմնական բաժնից.

1. Մշտադիտարկման և գնահատման ընկալումը

Առաջին բաժնի առաջին գլուխը ներկայացնում է մշտադիտարկման և գնահատման մեթոդաբանության իրականացման հիմքը և տեղական կառավարման համար վերապատրաստման ծրագրեր իրականացնելիս որակի ապահովման հետ կապված հարցերի հասցեագրումը: Երկրորդ գլուխը ներկայացնում է մշտադիտարկման ու գնահատման հետ կապված հայեցակարգային և կոնկրետ ասպեկտները ընդհանուր առմամբ և մասնավորապես մասնագիտական զարգացման վերապատրաստման դասընթացների ու ծրագրերի առումով, հաշվի առնելով գնահատման օբյեկտը, նպատակը, գնահատման չափանիշները, գնահատման գործընթացը և գնահատման փուլերը: Երրորդ գլուխը ներկայացնում է տեղական կառավարման համար վերապատրաստման ծրագրի գնահատման տիպորինակ, հիմնվելով տեսական և մեթոդաբանական հարցերի վրա:

2. Մշտադիտարկման և գնահատման մեթոդաբանությունը

Երկրորդ բաժնին իրենից ներկայացնում է մշտադիտարկման և գնա-

32 <https://rm.coe.int/lap-leadership-academy-programme-brochure/168075babf>

33 <https://www.coe.int/en/web/good-governance/urso>

հատման ռազմավարության սահմանման և մշտադիտարկման ու գնահատման իրականացման քայլ առ քայլ ուղեցույց:

Տեղական կառավարման պրոֆեսիոնալ զարգացման համար վերապատրաստման ծրագրերի գնահատման և մշտադիտարկման գործիքն իր հավելվածներում ներկայացնում է մշտադիտարկման և գնահատման ցուցանիշների ցանկը՝ համապատասխան չափանիշներին կատարված հղումներով (Հավելված 1), մշտադիտարկման և գնահատման ցուցանիշների ցանկը՝ ըստ համապատասխան չափանիշի խմբավորված տվյալների հավաքագրման համար գործիքներին կատարված հղումներով (Հավելված 2), տվյալների հավաքագրման համար գործիքների տիպորինակները (Հավելված 3): Չորրորդ հավելվածում ներկայացված է կարողությունների զարգացմանն ուղղված երկօրյա վերապատրաստման դասընթացի ծրագիր, որի նպատակն է պրակտիկ աշխատողներին և ընտրովի ներկայացուցիչներին ծանոթացնել գործիքի բովանդակությանը:

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՈՐԱԿՅԱԼ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գործիքակազմ

Գործունեության արդյունավետության կառավարման ծրագիր (PMP)³⁴

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Գործունեության արդյունավետության կառավարման գործիքը հանդիսանում է Ռազմավարական մունիցիպալ պլանավորման գործիքի լրացում և կարող է աջակցել համայնքային ռազմավարության հաջող իրականացման և քաղաքացիներին բարելավված ծառայությունների մատուցման ապահովմանը:

Գործունեության արդյունավետության կառավարման գործիքը կազմված է 6 բաժնից.

1. *Առաջին բաժնում* ներկայացված է գործունեության արդյունավետության կառավարումը որպես հանրային ծառայությունների բարելավման մեթոդ, և անդրադարձ է կատարված գործունեության արդյունավետության կառավարման կարևորությանը, ծառայությունների մատուցման կառավարման դրական կողմերին, տեղեկում բոլոր մակարդակների նկատմամբ գործունեության արդյունավետության

34 <https://rm.coe.int/168070c09f>

կիրառմանը, գործունեության արդյունավետության ցուցանիշներին, գործունեության արդյունավետության մշակույթի զարգացմանը, հանրայնացմանը և մշտադիտարկմանը.

2. *Երկրորդ բաժնում* ներկայացված են առանձին երկրների՝ Ալբանիայի, Սերբիայի, Ֆրանսիայի և Անգլիայի կոնկրետ օրինակներ.
3. *Երրորդ բաժնում* ներկայացված են կատարված եզրահանգումները.
4. *Չորրորդ բաժնում* ներկայացված է ինքնագնահատման գործիքը, անդրադարձ կատարելով դրա կիրառման ձևերին և օգտագործման եղանակներին.
5. *Հինգերորդ բաժնում* ներկայացված է ներպետական և/կամ բազմազգ իրավակարգավորումների շրջանակներում Եվրոպայի խորհրդի կողմից իրականացված գործունեության արդյունավետության կառավարման ծրագրերի մեթոդաբանությունը.
6. *Վեցերորդ բաժնում* ներկայացված են Անգլիայում տեղական կառավարման մակարդակում կիրառված գործունեության արդյունավետության ցուցանիշները:

Գործիքակազմ

Համայնքային Ռազմավարական պլանավորում (SMP)³⁵

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Այս գործիքը նկարագրում է համայնքային ռազմավարական պլանավորման գործընթացում ընդգրկված քայլերն ու գործողությունները, ինչպես նաև գործունեության արդյունավետության հետ կապված ցուցանիշները, որոնք պետք է մշակվեն այդ պլանի հաջող իրականացումն և նախանշված նպատակների իրականացումն ապահովելու համար: Սույն գործիքը նախ, կենտրոնանում է համայնքային ռազմավարական պլանավորման, իսկ այնուհետև՝ գործունեության արդյունավետության կառավարման վրա: Վերջինս ներկայացված է որպես առանձին գործիք (տես նախորդ գործիքը):

Համայնքային Ռազմավարական պլանավորման գործիքը բաղկացած է 2 բաժնից.

1. *Համայնքային Ռազմավարական պլանավորման նախաբան*, որը ներկայացնում է ռազմավարական մունիցիպալ պլանավորման նպատակն ու բովանդակությունը, ռազմավարական մունիցիպալ

35 <https://rm.coe.int/16807470ea>

պլանավորումը և հիմնական քայլերը.

2. Համայնքային Ռազմավարական պլանավորման քայլերը, որտեղ մանրամասն ներկայացված են հետևյալ քայլերը. նախապատրաստում, համայնքի պրոֆիլ, առաջիկա քայլեր, տեսլականի հաստատում, գործողությունների պլանի մշակում:

Համայնքային Ռազմավարական պլանավորման գործիքակազմը ներառում է նաև եզրույթաբանական բառարան և հավելված, որտեղ ներկայացված է Համայնքային Ռազմավարական պլանավորման ազգային ուղեցույցի տիպորինակ Ալբանիայի փորձի հիման վրա:

Գործիքակազմ **Լավագույն գործելակերպի ծրագիր (BPP)³⁶**

ԱՄՓՈՓԱԳԻ

Սույն գործիքակազմը տեղական մարմինների համար ներկայացնում է գաղափարներ և ուղենիշներ՝ նպաստելու համար հաջողված, թափանցիկ, տեղին, բավարար, վերարտադրվող և կայուն պրակտիկային: Այն կենտրոնանում է այն եղանակների վրա, որոնց միջոցով լավագույն պրակտիկան կարելի է հաջող կերպով կիսել այլ տեղական մարմինների հետ: Սա կարող է հանգեցնել տեղական մարմնի վարկանիշի բարձրացմանը որպես որակյալ ծառայությունների մատուցման առաջնորդ և որպես որակն առաջնային համարող կազմակերպություն:

Այս գործիքը հատկապես օգտակար է տեղական մարմինների միավորումների համար, որոնք իրականացնում են լավագույն պրակտիկայի վերաբերյալ ծրագրեր և ցանկանում են առավելագույնս օգտագործել դրանք՝ առաջնորդության չափանիշները բարձրացնելու և բոլոր տեղական մարմինների գործունեության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

Սույն գործիքը բաղկացած է 2 մասից.

1. *Լավագույն պրակտիկայի բացահայտում*, որն անդրադառնում է լավագույն պրակտիկայի հիմքերին, դրա նշանակությանը, լավագույն պրակտիկայի վերաբերյալ ծրագրերի կազմակերպման հիմնահարցերին և լավագույն պրակտիկայի վերաբերյալ ծրագրերի հիմնական փուլերին:
2. *Լավագույն պրակտիկայի փոխակերպումը վերապատրաստման ծրագրի*, որն անդրադառնում է լավագույն պրակտիկան տարածելու

36 <https://rm.coe.int/1680746d97>

տարբեր եղանակներին, մասնավորապես, միջոցառումներ և գործողություններ (լավագույն պրակտիկայի վերաբերյալ բաց դռների օր, սեմինարներ, ուսումնական փոխանակումներ, ուսումնական այցեր), հրապարակումներ (կայք, տեղեկատվական փաթեթներ, ուսումնական օրինակներ, ամսագրեր էլեկտրոնային կրիչներ), անհատական մակարդակով տարածում (խորհրդատվություն, աշխատակիցների գործուղում, ցանցերի ձևավորում): Այս մասում մանրամասն ներկայացված են նաև գնահատման ու մշտադիտարկման մեթոդները, ինչպես նաև հաջողության հասնելու համար էական գործոնները, որոնց շարքին են դասվում ներքին աջակցությունը, արդյունավետ մարկեթինգն ու խրախուսումը, կոլեգիալ ցանցը, ուսումնական հնարավորությունների օգտագործումը, առաջընթացի պարբերաբար մշտադիտարկումը և երախտագիտությունը անձնակազմին:

Սույն գործիքի 1-ին հավելվածում ներկայացված է Լավագույն գործելակերպի համար առաջարկվող կառուցվածքը, իսկ 2-րդ հավելվածում ներկայացված է Լավագույն գործելակերպի ծրագրի շրջանակներում իրականացված գործողությունների վերաբերյալ զեկույցի օրինակ:

Գործիքակազմ

Տեղական մարմինների միավորումների կարողությունների զարգացում (LGA)³⁷

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Տեղական մարմինների միավորումների կարողությունների ամրապնդման գործիքն առաջարկում է միջոցներ տեղական մարմինների միավորումների գործունեության արդյունավետության վերլուծություն և փոխակերպման համար՝ ռազմավարական պլան մշակելու և գործառնության ու կազմակերպման բարելավման միջոցով: Այն առաջարկում է զարգացման ծրագիր տեղական մարմինների միավորումների համար:

Տեղական մարմինների միավորումների կարողությունների ամրապնդման գործիքը բաղկացած է 6 բաժնից.

1. *Նախաբան*, որտեղ ներկայացված են գործիքի նպատակն ու բովանդակությունը, ինչպես նաև տեղական մարմինների միավորման դերը ապակենտրոնացման գործընթացում.
2. *Տեղական մարմինների միավորման վերլուծություն*, որտեղ ներկայացված են տեղական մարմինների միավորման գործունեության

37 <https://rm.coe.int/1680746eae>

արդյունավետության ցուցանիշները, որոնք կարող են օգտագործվել միավորման կարողությունն ու գործունեության արդյունավետությունն ուսումնասիրելու և նրա թույլ և ուժեղ կողմերը գնահատելու համար.

3. *Տեղական մարմինների միավորման փոխակերպում*, որտեղ ներկայացված է կազմակերպության զարգացումը համակողմանի մոտեցման միջոցով.
4. *Պլանավորումը տեղական մարմինների միավորումում*, որն անդրադառնում է ռազմավարական պլանին, որպես բարեփոխման առաջին քայլի, ու ֆինանսական ռազմավարությանը.
5. *Տեղական մարմինների միավորման գործառույթները*, որտեղ ներկայացված են հաղորդակցման ռազմավարությունը, անդրադառնալով հաղորդակցման և կազմակերպման արդյունավետության փոխկապակցվածությանը և տեղական մարմինների միավորման կողմից տեղական մարմինների կարիքներն ու սպասումները լսելու, ընկալելու և նրանց հետ կապի մեջ լինելու անհրաժեշտությանը: Այս բաժնում ներկայացված է նաև ջատագովության ռազմավարությունը, դրանում ամրագվող սկզբունքներն ու պլանները, ինչպես նաև կարողությունների զարգացմանն ուղղված ծառայությունների մատուցումը, որն աջակցում է տեղական մարմիններին ավելի լավ իրականացնել կառավարումը:
6. *Կազմակերպումը տեղական մարմինների միավորումում*, որն անդրադառնում է միավորման առաջնորդությանը, դրա կառուցվածքին և կառավարմանը:

Գործիքի հավելվածներում ներկայացված են լավ կառավարման սկզբունքները, Եվրոպայում տեղական մարմինների միավորումների լավագույն պրակտիկայի ստուգացանկ, Բուլղարիայում տեղական մարմինների միավորման պրակտիկ օրինակ, տեղական մարմինների տեղակատվական ցանցը (LOGIN) և այլն:

Գործիքակազմ **Հանրային էթիկայի հենանշում (PEB)³⁸**

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հանրային էթիկայի հենանշման գործիքը աջակցում է համապատասխան մարմիններին ձևավորել էթիկ ենթակառուցվածքներ հանրային կառավարման ոլորտում, գնահատել կոռուպցիոն ռիսկերը և բարելա-

38 <https://rm.coe.int/peb-public-ethics-benchmarking/1680746d52>

վել էթիկական չափանիշները Եվրոպական հարցաթերթի միջոցով, որը կարող է հարմարեցվել տեղական հանգամանքներին որպես ազգային ելակետային հենանիշ:

Գործիքը կազմված է երկու հիմնական մասից, որոնցից յուրաքանչյուրը կարող է օգտագործվել ինչպես առանձին-առանձին, այնպես էլ միասին՝ կախված տեղական համատեքստից և ծրագրի շրջանակից:

1. *Առաջին մասը* ներկայացնում է տեղական մակարդակում կոռուպցիոն ռիսկերի դեմ պայքարի հետ կապված կարևոր հարցերը, շարադրելով որոշ Եվրոպական պետությունների կոռուպցիայի դեմ պայքարի ռազմավարական մոտեցումները և տեղական կառավարման համակարգում էթիկական ենթակառուցվածքների ձևավորման հետ կապված հարցերը: Այս մասում անդրադարձ է կատարվում նաև կոռուպցիոն ռիսկերի վերլուծությանը, մասնավորապես, շարադրված են ռիսկերի բացահայտման ու գնահատման կազմակերպումը տարբեր մոդելների միջոցով, և կոռուպցիոն ռիսկերի մակարդակի վերհանումն ու գնահատումը:
2. *Երկրորդ մասը* ներկայացնում է տեղական մակարդակում հանրային էթիկայի հենանշման մեթոդաբանությունը և բարելավումը, անդրադառնալով հանրային էթիկայի հենանշման և բարելավման գործիքներին, տեղական մակարդակում հանրային էթիկայի համար Եվրոպական հարցաթերթին և ներառում է վերապատրաստման դասընթացի հայեցակարգի փորձագիտական գնահատման տիպորինակ:

Գործիքակազմ **Պրակտիկ օրինակներ (PEB)³⁹**

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Այս գործիքում ներկայացված են հենանշման պրակտիկ օրինակներ, գնահատման զեկույցներ, իրականացման ծրագրեր, որոնք մշակվել են Հայաստանում, Մոլդովայում, Ռումինիայում, Իսպանիայում և Ուկրաինայում: Այս պրակտիկ օրինակների նպատակն է ոգեշնչել այլ տեղական մարմիններին/միավորումներին ծրագրեր իրականացնելու հարցում:

39 <https://rm.coe.int/peb-strengthening-public-ethics-and-preventing-corruption-in-public-ad/1680759f16>

ՏԵՂԱԿԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐ

Գործիք

Տեղական ֆինանսների համեմատական վերլուծություն տեղական մարմինների համար (LFB)⁴⁰

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Սույն գործիքը աջակցում է ապացույցների վրա հիմնված որոշումների կայացմանը տեղական պաշտոնյաների կողմից, օգնելով նրանց առավելագույնս օգտվել առկա ռեսուրսներից:

Այն աղյուսակի ձևաչափով սահմանում է.

1. *Տեղական մարմինների ֆինանսական ռեսուրսների հենանիշեր*, որտեղ ներկայացված են գործողություններ ըստ ոլորտների, որոնք ենթակա են գնահատման ըստ թվարկված համեմատական ցուցանիշների: Այն ընդգրկում է հետևյալ ոլորտները. տեղական ֆինանսական քաղաքականության ընդհանուր սկզբունքներ (տեղական հարկային քաղաքականության մշակում, թափանցիկություն և հասարակության ընդգրկվածություն, ֆինանսական որոշումների ժամկետներ, SS օգտագործում, տեղական անձնակազմի կարողությունների զարգացում), տեղական հարկում (տեղական հարկային քաղաքականության մշակում, հարկային քաղաքականություն, տեղեկատվություն և հրապարակայնություն, հարկային վարչարարություն, հարկային համակարգի աուդիտ), տուրքեր, վճարներ և այլ եկամուտներ, կապիտալ բյուջետային ֆինանսավորում, տեղական սեփականություն:
2. *Տեղական մարմինների ֆինանսական կառավարման հենանիշեր*, որտեղ ներկայացված են գործողություններ ըստ ոլորտների, որոնք ենթակա են գնահատման ըստ թվարկված համեմատական ցուցանիշների: Այն ընդգրկում է հետևյալ ոլորտները. լավ բյուջետային և ֆինանսական պլանավորում (ֆինանսական ռազմավարության մշակում, բյուջետավորման մեթոդներ և կարողություններ, բյուջետային գործընթացներ, ֆինանսական քաղաքականության նպատակներ), հատուկ կանոններ բյուջետավորման հարմարեցումների և իրականացման համար, գործողությունների նկատմամբ հատուկ հսկողություն և վերահսկողություն:

40 <https://rm.coe.int/1680746fd3>

Գործիքակազմ

Տեղական ֆինանսների համեմատական վերլուծություն կենտրոնական մարմինների համար (LFB)⁴¹

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Այս գործիքը հանդիսանում է վերլուծական գործիք քաղաքականություն մշակողների համար, որի նպատակն է զարգացնել հաշվետու և արդյունավետ տեղական ֆինանսական համակարգ:

Այն աղյուսակի ձևաչափով սահմանում է.

1. *Կենտրոնական մարմինների համար տեղական ֆինանսական ռեսուրսների հենանիշեր*, որտեղ ներկայացված են գործողություններ ըստ ոլորտների, որոնք ենթակա են գնահատման ըստ թվարկված համեմատության ցուցանիշների: Այն ընդգրկում է հետևյալ ոլորտները. ֆինանսական ռեսուրսների ընդհանուր սկզբունքներ (միջկառավարական ֆինանսական հարաբերությունների նպատակներ, սեփական միջոցներից եկամուտների ավելացում, տեղական հարկային ինքնավարություն), տեղական մարմինների ծառայությունների ֆինանսավորում (ազգային հետաքրքրություն ներկայացնող ծառայությունների իրականացման ներդաշնակեցում, պատվիրակված ծառայությունների ֆինանսավորում), տեղական հարկում (բավարար տեղական հարկեր, հաշվետվողականության երաշխավորմամբ, տարանջատված, արդար, օգուտներին համաչափ, տեսանելի տեղական հարկեր, հարկային վարչարարություն), ներպետական քաղաքականություններ տեղական հարկերի վերաբերյալ (չեզոքություն և սահմանափակ միջամտություն, տեղական հարկերի քաղաքականության մշակման գործընթացում բաց գործելակերպ և խորհրդակցություն), ֆինանսական համահարթեցում (ֆինանսական համահարթեցման նպատակները, տնտեսական կայունությանն ու տարածքային կայուն զարգացմանն ուղղված քաղաքական որոշումներ, կայուն, կանխատեսելի, ստանդարտացված համահարթեցման սխեմաներ, տեղական մարմիններին թափանցիկ և ընկալելի տեղեկատվության տրամադրում համահարթեցման համակարգերի մասին, ծախսային կարիքների համահարթեցում, ֆինանսական կարողությունների համահարթեցում, ընդհանուր և հատուկ դոտացիաներին ուղղված քաղաքականություններ, հատուկ դոտացիաներ), տուրքեր և վճարներ, փոխառություններ:
2. *Կենտրոնական մարմինների համար ֆինանսական կառավարման*

41 <https://rm.coe.int/local-finance-benchmarking-toolkit-for-for-central-authorities/1680716110>

ելակեպային հենանիշեր, որտեղ ներկայացված են գործողություններ ըստ ոլորտների, որոնք ենթակա են գնահատման ըստ թվարկված ցուցանիշների: Այն ընդգրկում է հետևյալ ոլորտները. կարգավորումներ բյուջեի մշակման և հաստատման վերաբերյալ, բյուջետային սահմանափակումներ, ֆինանսական ռիսկերի գնահատում և կառավարում, փոխհատուցում ֆինանսական դժվարություններ ունեցող տեղական մարմիններին, տեղական մարմինների նկատմամբ հսկողության միջոցներ, ընտրովի ներկայացուցիչների և անձնակազմի պատասխանատվություն:

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԵՎ ԱՆԴՐԱԱՀՄԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Գործիքակազմ

Միջհամայնքային համագործակցություն (IMC)⁴²

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Միջհամայնքային համագործակցության գործիքը ներկայացնում է տիպորինակներ ու կարգավորումներ, որոնք կոչված են աջակցելու տեղական մարմիններին միջհամայնքային համագործակցության ստեղծման, ձևավորման, իրականացման և գնահատման գործընթացի յուրաքանչյուր փուլում:

Միջհամայնքային համագործակցության գործիքը կազմված է 7 մասից.

- 1. Միջհամայնքային համագործակցության հասկացություն, որտեղ անդրադարձ է կատարված միջհամայնքային համագործակցության նպատակահարմարությանը, հնարավորություններին, միջհամայնքային համագործակցության տարբեր տեսակներին, պատճառներին, միջհամայնքային համագործակցության կողմնակի ազդեցությանը:*
- 2. Միջհամայնքային համագործակցությանը նպաստող միջավայրի ստեղծում, որն անդրադառնում է միջհամայնքային համագործակցության խոչընդոտներին, միջհամայնքային համագործակցության ազգային քաղաքականության անհրաժեշտությանը, համապատասխան իրավական կարգավորումներին, խթաններին, տեղական մար-*

⁴² <https://rm.coe.int/1680746ec3>

մինների միավորումների դերին, միջհամայնքային համագործակցության տեղական մշակույթի ձևավորմանը:

3. *Միջհամայնքային համագործակցության նախաձեռնություն*, որտեղ ներկայացված են նախնական փուլը, և այն քայլերը, որոնք անհրաժեշտ են միջհամայնքային համագործակցության նախաձեռնման համար (կարիքների, հնարավորությունների, հնարավոր գործընկերների և համագործակցության հնարավոր տարածքների բացահայտում, վերլուծություն, միջհամայնքային համագործակցության վերաբերյալ որոշում և բանակցությունների հարթակի ձևավորում, ինքնաճանաչում և աջակցություն):
4. *Իրավական ձևեր*, որտեղ ներկայացված են միջհամայնքային համագործակցության իրավական կարգավորումների անհրաժեշտությունը, հիմնական իրավական հարցերը, տարբեր իրավական ձևերը, համապատասխան իրավական ձևի ընտրությունը:
5. *Միջհամայնքային համագործակցության ֆինանսավորում*, որտեղ ներկայացված են միջհամայնքային համագործակցության ֆինանսական առավելությունները, ֆինանսական շրջանակի ընտրությունը, կոմունալ ծառայությունները, սոցիալական ծառայությունները, վարչական ծառայությունները, ֆիզիկական և տնտեսական զարգացումը, տեղական եկամուտներից ներդրումները, ֆինանսական կառավարումը:
6. *Հաշվետվողականություն*, որտեղ ներկայացված են հաշվետվողականության ուղղությունները, տեխնիկական հաշվետվողականությունը և ժողովրդավարական հաշվետվողականությունը:
7. *Միջհամայնքային համագործակցության վերաբերյալ որոշման կայացում և իրականացում*, որն անդրադառնում է պաշտոնական որոշմանը, միջհամայնքային համագործակցության մեկնարկի ընթացակարգին, միջհամայնքային համագործակցության սկզբին և ներկայացնում է հաջողության կարևոր գործոնները:

Գործիքում ներկայացված է նաև միջհամայնքային համագործակցության պրակտիկ օրինակ Ռումինիայի փորձի հիման վրա:

Գործիքակազմ Տարածքների միավորում⁴³

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Այս փաստաթղթի նպատակն է գործիք տրամադրել այն սուբյեկտներին, ովքեր իրականացնում են վարչատարածքային բարեփոխումներ, որպես վարչատարածքային փոփոխություններից բխող խնդիրների լուծման միջոց, ինչպես նաև այն տեղական/համայնքային սուբյեկտներին, ովքեր ներգրավված են վարչատարածքային փոփոխությունների գործընթացում: Սույն գործիքում ընդգրկված տվյալները, օրինակները և քաղված դասերը կարող են օգտագործվել վարչատարածքային փոփոխությունների գործընթացներում շահագրգիռ կողմերի կողմից:

Տարածքների միավորման գործիքակազմն ի սկզբանե ներկայացնում է Եվրոպական պետություններում 1950-2015թթ. տեղի ունեցած վարչատարածքային փոփոխությունների նկարագիրը, որը որոշակիորեն հստակեցնում է այդ բարեփոխումների հիմքում դրված պատճառները:

Այնուհետև, գործիքը ներկայացնում է վարչատարածքային բարեփոխումների, մասնավորապես համայնքների միավորման ու բաժանման, վերաբերյալ կողմ և դեմ փաստարկները:

Տարածքների միավորման գործիքը ներկայացնում է նաև բարեփոխումների իրականացման փուլերով պայմանավորված կոնկրետ քայլեր, որոնք ներկայացված են “որոշումների ծառ”-ի տեսքով: Այս քայլերը ներկայացված են տրամաբանական հերթականությամբ և բավարար մանրամասնեցված է դրանցից յուրաքանչյուրի բովանդակությունը, որն ուղեկցվում է Եվրոպայի խորհրդի կողմից ընդունված համապատասխան փաստաթղթին կատարված հղմամբ՝ ձեռնարկվելիք գործողությունների և քննարկվելիք հարցերի վերաբերյալ, օրինակներով և պրակտիկայից քաղված դասերով:

Գործիքը բովանդակում է նաև հավելվածներ տարբեր երկրների (Ֆրանսիա, Ալբանիա, Ուկրաինա) վարչատարածքային բարեփոխումների փորձի վերաբերյալ և Եվրոպայի խորհրդի կողմից ընդունված համապատասխան փաստաթղթերի վերաբերյալ:

43 <https://rm.coe.int/territorial-reforms-in-europe-does-size-matter-territorial-amalgamatio/168076cfl6>

Գործիքակազմ Անդրսահմանային համագործակցություն (CBC)⁴⁴

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Գործիքակազմը ներկայացնում է քայլ առ քայլ ուղեցույց՝ նախատեսված անդրսահմանային ծրագրերը կոնկրետ իրողություններում իրականացնելու վերաբերյալ:

Անդրսահմանային համագործակցության գործիքակազմը կազմված է հետևյալ մասերից.

1. *Անդրսահմանային համագործակցության հասկացություն*, որտեղ ներկայացված են անդրսահմանային համագործակցության հիմքը, հնարավորությունները, անդրսահմանային համագործակցության տեսակները, պատճառները, անդրսահմանային համագործակցության վրա ազդող գործոնները, դրա բացասական և դրական ազդեցությունները:
2. *Միջազգային միջավայր*, որը ներկայացնում է անդրսահմանային համագործակցության խոչընդոտները և դրանք նվազեցնող միջոցները, միջազգային միջավայրը:
3. *Անդրսահմանային համագործակցության համար նպաստավոր միջավայրի ստեղծում*, որտեղ ներկայացված են անդրսահմանային համագործակցության խոչընդոտները, անդրսահմանային համագործակցության ազգային քաղաքականություն մշակելու անհրաժեշտությունը, համապատասխան իրավական կարգավորումները, խթանիչները, տեղական մարմինների միավորումները, անդրսահմանային համագործակցության մշակույթը:
4. *Անդրսահմանային համագործակցության նախաձեռնում*, որտեղ ներկայացված են նախաձեռնման նախնական փուլը, համագործակցության կարիքները, հնարավորությունները, հնարավոր գործընկերները և հնարավոր ոլորտները, համագործակցության նպատակահարմարության վերաբերյալ ուսումնասիրություն և վերլուծություն, անդրսահմանային համագործակցության վերաբերյալ որոշումը և դրա ինստիտուցիոնալացումը:
5. *Անդրսահմանային համագործակցության հաստատում*, որը ներկայացնում է անդրսահմանային համագործակցության իրավական հիմքը, հիմնարար նշանակություն ունեցող իրավական հարցերը, կազմակերպարավական տարբեր ձևերը:
6. *Անդրսահմանային համագործակցության ֆինանսավորում*, որտեղ ներկայացված են անդրսահմանային համագործակցության ֆինան-

44 <https://rm.coe.int/1680747160>

սական ուժեղ կողմերը և ֆինանսական շրջանակի ընտրությունը:

7. Հաշվետվողականություն, որտեղ ներկայացված են հաշվետվողականության ուղղությունները, տեխնիկական հաշվետվողականությունը և ժողովրդավարական հաշվետվողականությունը.
8. Անդրսահմանային համագործակցության պրակտիկ օրինակներ, որտեղ ներկայացված են մի շարք երկրների պրակտիկ օրինակներ անդրսահմանային համագործակցության վերաբերյալ:

Գործիքակազմ

Քաղաքների միջև համագործակցություն (C2C)⁴⁵

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Քաղաքների միջև համագործակցության գործիքակազմն առաջարկում է տեղական մարմինների միջև համագործակցությանն աջակցելու պրակտիկ լուծումներ՝ համագործակցությունը տեղափոխելով մի նոր մակարդակ: Տարբեր պետությունների տեղական մարմինները կարող են սահմանել ուղղակի և հաջողված համագործակցություն ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող հատուկ հարցերի վերաբերյալ, նույնիսկ այն դեպքում, երբ դրանք գտնվում են տարբեր պետություններում և չունեն ընդհանուր սահման:

Քաղաքների միջև համագործակցության գործիքակազմը բաղկացած է հետևյալ մասերից.

1. *Քաղաքների միջև համագործակցության հասկացություն*, որտեղ ներկայացված են քաղաքների միջև համագործակցության պատճառները և դրա վրա ազդող գործոնները, քաղաքների միջև համագործակցության գործառույթները (անվտանգություն, զարգացում, տնտեսություն, մշակույթ, ներկայացուցչություն):
2. *Քաղաքների միջև համագործակցության նախաձեռնում, խրախուսում և մշտադիպարկում*, որտեղ ներկայացված են քաղաքների համագործակցության հայեցակարգը, վերլուծական քայլերը, քաղաքների միջև համագործակցության խնդիրների ու պատճառների բացահայտումը, դերակատարների վերհանումը, քաղաքների միջև համագործակցության հնարավոր խոչընդոտները:
3. *Եվրոպայի խորհրդի կենտրոնները և ակտիվ ծրագրերը քաղաքների միջև համագործակցության հետ կապված ոլորտներում*, որտեղ ներկայացված է Եվրոպական երիտասարդության կենտրոնը, Ժա-

45 <https://rm.coe.int/1680747067>

մանակակից լեզուների եվրոպական կենտրոնը, Տեղական կառավարման բարեփոխումների փորձագիտական կենտրոնը, Կրթական ծրագիրը, Միջմշակութային քաղաքային ծրագիրը, Սպորտի վերաբերյալ ընդլայնման մասնակի համաձայնագիրը և այլն.

4. *Զադար (Խորվաթիա) և Դանդի (մեծ Բրիտանիա) քաղաքների միջև համագործակցություն. պրակտիկ օրինակներ և զարգացման հնարավորություններ*, որտեղ ներկայացված են քաղաքների միջև համագործակցության մեկնարկը, Դանդի և Զադար քաղաքների միջև համագործակցության հնարավորությունները, մշտադիտարկման գործիք:
5. *Քաղաքների միջև համագործակցություն. Եվրոպայի խորհրդի սեմինար*, որտեղ ներկայացված են քաղաքների միջև համագործակցության համաժողովի լավագույն պրակտիկան և սեմինարները:

Գործիքակազմ

Անդրսահմանային համագործակցության առաջնորդություն (LAP for CBC)⁴⁶

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Անդրսահմանային համագործակցության առաջնորդության գործիքը մշակվել է՝ նպատակ ունենալով բարելավել համայնքների ղեկավարների և բարձր պաշտոն զբաղեցնողների առաջնորդության կարողությունները՝ նպաստելու համար անդրսահմանային համագործակցությանը և դրանով պայմանավորված՝ հաղթահարելու ընդհանուր խնդիրներն ու նպաստելու հարևան համայնքների ներդաշնակ զարգացմանը:

Անդրսահմանային համագործակցության առաջնորդության գործիքը կազմված է հետևյալ մասերից.

1. *Ներածություն*, որը ներկայացնում է անդրսահմանային համագործակցության առաջնորդության գործիքի հիմքը, էությունն ու կիրառման առանձնահատկությունները:
2. *Անդրսահմանային համագործակցության գործընթացի բարելավմանը նպաստող առաջնորդություն*, որտեղ ներկայացված են առաջնորդության հասկացությունը, անդրսահմանային համագործակցությունը խթանող եղանակները, վարժություններ դասավանդողի և պրակտիկ աշխատողի համար:

46 <https://rm.coe.int/lap-cbc-leadership-for-cross-border-cooperation-toolkit-for-practition/1680759f11>

3. Անդրսահմանային համագործակցության գործընթացի հասկացություն, որտեղ ներկայացված են անդրսահմանային համագործակցության էությունն ու հասկացությունը, իրավական հիմքերը, անդրսահմանային համագործակցություն նախաձեռնելու 6 քայլերի մոտեցումը, վարժություններ դասավանդողի և պրակտիկ աշխատողի համար:
4. Անդրսահմանային համագործակցության համարեքստի ընկալում. խոչընդոտների քարտեզագրում լուծումներ գտնելու նպատակով, որտեղ ներկայացված են խոչընդոտների քարտեզագրման հասկացությունը, համայնքային անդրսահմանային համագործակցության խոչընդոտների քարտեզագրման 6 քայլերի մոտեցումը, վարժություններ դասավանդողի և պրակտիկ աշխատողի համար:
5. Շահառուների իմացություն. անդրսահմանային համագործակցության իրականացման մասնակցային մոտեցում, որտեղ ներկայացված են անդրսահմանային համագործակցության գործընթացում քաղաքացիական ներգրավման հասկացությունը, անդրսահմանային համագործակցության համար հիմնական շահառուների վերհանման 3 քայլերի մոտեցումը, վարժություններ դասավանդողի և պրակտիկ աշխատողի համար:
6. Համայնքի ներգրավում. անդրսահմանային համագործակցության իրականացման գործընթացի մասնակցային մշտադիտարկում, որտեղ ներկայացված են մասնակցային մշտադիտարկման հասկացությունը և սկզբունքները, մասնակցային մշտադիտարկման իրականացման 3 քայլերի մոտեցումը:

Գործիք

Անդրսահմանային համագործակցության էլեկտրոնային գործիք EDEN⁴⁷

Անդրսահմանային համագործակցության էլեկտրոնային գործիքը հանդիսանում է հեռավար ուսուցման գործիք, որը մշակվել է անդրսահմանային համագործակցության վերաբերյալ վերոթվարկյալ գործիքների հիման վրա:

47 https://cas.coe.int/cas/login?service=https%3A%2F%2Fwww.coe.int%2Fc%2Fportal%2Flogin%3Fp_l_id%3D10482%26p_p_id%3D58%26_58_redirect%3D%252Fen%252Fweb%252Fgood-governance-staging%252Feden

Եվրոպայի խորհրդի գրասենյակ Երևանում
ՀՀ, ք. Երևան 0010, Վ. Սարգսյան փ. 26/1
«Էրեբունի պլազա» բիզնես կենտրոն, 6-րդ հարկ

<http://www.coe.am>